
ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ...Բ...



ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

... Բ ...

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՍԻԵ
2025

Ստանալու Համար դիմել՝

Հեղինակին

Vahe Sivacian

sivacian@sympatico.ca

**Ազատ զգացեք ձեր շրջանակին ղրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:**

**Գրովթինը որեւէ փոփոխութեան ենթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիլուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9 AM – 5 PM

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգովքիմաներէ
մէջբերումները առնուած են
Հետեւեալ աղբիւրներէ.

ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԶ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

ՃՇԻՐԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅ ՄԵՐՈՅ Դ ՀԵՎԵԱԿԱՆ
ՀԱՄԱՏԱՐՄԱՌՅՆ ԲԱԳՐԷ Դ ՀԱՅԿԱՄԱ ԲԱՐՔԱՌ
1805 Դ ՎԵՆԵՏԻԿ ՈՒՄԾԻ
Դ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ



**ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ
ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԶ
ՀԻՆ ԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ
ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ**



ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆԷ
ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆԷ

ՇԱՐԱԿԱՆՔ

ԱՂՕԹՔ

ՏԱՂՔ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՍԿԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929



ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

*Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս
նաեւ երախտագիտութեան զգացումները
կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան
ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով
եւ թելադրութիւններով գործս դիւրացնող
մի քանի բարեկամներու:*

*Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ
առողջութիւն եւ արեւշատութիւն:*

*

*Շնորհակալութիւն կը յայտնեմ՝ նաեւ բոլոր անոնց,
որոնք գիրքիս մէջ գործածուած պատկերները
քաշած, հայթայթած եւ հրապարակած են:*

*Աղօթարար եմ,
որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:*



ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լոյս 'ի Լուսոյ (Ա)	2013
Լոյս 'ի Լուսոյ «Բ» - Զարթօնք	2015
Լոյս 'ի Լուսոյ «Գ» - Տիեզերական Օրէնքները	2017
Խոկում	2017
Աւետարանի խորհուրդները - Հատոր Ա. Յիսուսի կեանքէն դրուագներ	2018
Աւետարանի խորհուրդները - Հատոր Բ. Յիսուսի առականները	2018
Աւետարանի խորհուրդները - Հատոր Գ. Յիսուս Քրիստոսի խօսքերը	2020
Աւետարանի խորհուրդները - Հատոր Դ. Յովհաննու և Թովմասի Աւետարանները	2020
Խորհրդածութիւններ	2019
«ԵՄ ԵՄ» - Ճանչնալ Աստուած	2022
Առաւօտ Լուսոյ	2023
Մահական Երանութիւնը	2023
Կատարելութեան Ուղին եւ Ի՞նչ է Զարը	2024
Երազը եւ Երազողը	2024
Խորհրդածութիւններ ... Բ ...	2025

ՈՏԱՆԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ

Կենցաղալոյս	2014
Կենցաղալոյս (Ա, Բ, Գ)	2019

Հեղինակին բոլոր հրատարակութիւնները մատչելի
են համացանցային դրութեամբ:
Զանոնք ներբերման հասցէ.
<http://www.luysiluso.ca>
Հեղինակին ե-փոստի հասցէն.
sivacian@sympatico.ca


ደብረሠክላዊ ሥልጣናት

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղոյն Արամեան-Ունճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ժօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ընտանեօր Կազմած էն Թորոնթօ, Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**-ին վկայուած է որպէս պատկաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ժօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ Հրատարակած է՝ արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**-ին ալ դասագիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:

Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թադաւոր Եկեղեցւոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ: Ուրար կրեւր իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւագ ձեռնադրուած է Սէնթ Գաթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցւոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մին ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննախնդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՍԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅՐ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր շահագները իբր աղյուղ նետեր
դուրս արձակուեճան:

Աղեղնախորը անշուխտ ճամբորդն իր թիրախը ԿԵ ՏԵՍԱԷ ԵՒ Աղեղն
շօրախոր ԿԵՐՊՈՒԿ ԿԵ ԴՐԿԷ, ուրյուսձի իր նետը արագ ԵՒ ՀԵՊՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղեղնախորի Ձեռքին՝ Ձեր ԴՐԿՈՒՄԸ ուրախութեամբ եղաւ
ՈՐԵԱՆ ուր ԱՆ սլաճորդ նետը ԿԵ ՍԻՐԷ, նոյնքան ալ ՀԱՍՏԱՏ Աղեղն»:

(յարասուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գիրքէն)



1955-2010



**ՍՈՅՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԶՈՒՄ
ՎԱՂԱՄԵՌԿ ԿՈՂԱԿԻՅԻՄ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**



Ապափնե՛ ու յանձնուէ
ու պիտի գտնես:
Հետեւեալ երկուքէն մէկը պէտք է
ընտրենք.
Կամ կը յանձնուինք որովհետեւ
կ'ընդունինք թէ անկարող ենք ու
մեզմէ աւելի բարձր Չօրութեան մը
կը կարօտինք,
կամ մեր դժբաղդութեան
պատճառը կը պրպտենք ու խորքին
թափանցելով մեր Էութեան մէջ կը
լուծուինք:
Երկու կերպով ալ դժբաղդութենէ
կ'ազատինք:
Աստուած ամենեւին չանտեսէր անոր
որ Իրեն կ'ապափնի ու Իրեն կը
յանձնուի:

ԲԱՍԱՆԱ ՄԱՀԱՐԵՐ



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքին մէջի զանազան նիւթերու մասին ներկայացուած գրութիւնները մեծամասնութեամբ կրկնութիւններ են հրատարակուած նախորդ գիրքերու մէջ «ցանուած» հոս-ու-հոն: Որոշեցի այդ նիւթերը ամփոփել եւ պատշատ տեղերը քիչ մըն ալ աւելցնել եւ հոս ներկայացնել: Նա մանաւանդ հոգեւոր նիւթերու նկատմամբ կրկնութիւնները կարեւոր են եւ անհրաժեշտ՝ զանոնք աւելի լաւ մը ըմբռնելու, հասկընալու, իւրացնելու եւ մեր կեանքերուն մէջ ալ կիրարկելու համար: Կրկնութիւններու հետեւանքն է որ ժամանակի ընթացքին այդ գաղաբարները մեր ենթագիտակցութեան մաս կը կազմեն եւ մեր բնոյթն ալ կը փոխեն: Յիսուս Քրիստոս ալ նոյն գաղափարները մեզի սորվեցուց բազմիցս անգամ կրկնելով՝ թէ՛ Իր կենցաղով, թէ՛ Իր յորդորներով, թէ՛ Իր առակներով: Իսկ մենք ի՞նչ կ'ընենք: Երկու հազար տարի անցած է եւ տակաւին Իր սորվեցուցածները չենք իւրացուցած եւ զանոնք չենք կատարեր: Շատ հաւանական է որ զանոնք լաւ մը չենք հասկցած կամ կարելի է աւելի պատշաճ պիտի ըլլար ըսել զանոնք չենք ուզած հասկընալ եւ անոնց խեղաթիւրուած հասկացողութիւնները յարմարեցած ենք մեր վատ կենցաղին: Ըստ Յիսուսի սորվեցուցածին ջրկիրի շրջանը մօտեցած է, արդեօք չե՞նք խորհիր որ ժամանակը եկած է որ համայն մարդկութիւնը իր «թմբիրէն» արթննայ եւ Յիսուսի սորվեցուցածները ճիշդ հասկնայ ու ըստ այնմ ապրի իր կեանքը: Ահա՛, աս է նպատակը այս գիրքին, անգամ մը եւս կրկնել այն ինչ որ անհրաժեշտ է Աստուածահաճոյ կեանք մը ապրելու համար, որպէսզի լիովին կատարենք մեր կեանքին բուն պարտականութիւնը ու պատասխանատուութիւնը որ մեզի տրուած է:

Չարմանալի պատկեր մը.

Առաջին Հերթին պատկերը կը նմանի մարդու մը,
որ ջուրին մէջ նստած գիւրք մը կը կարդայ:
Բայց եթէ ուշադրութեամբ նայինք պիտի տեսնենք
թէ ոչ մարդ կայ եւ ոչ ալ գիւրք,
իսկ այդ բոլորը պատրանք են:
Աեսնքն ալ նայնն է, ան կը թուի մէկ բան ըլլալ,
բայց խորքին մէջ ան ամբողջովին տարբեր բան մըն է:





Ա

ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ
ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ



ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ

«Ե՛ս եմ ճանապարհն՝ եւ ճշմարտութիւնն եւ կեանքն» :
(Յովհաննէս ԺԴ:6)

Միակ ճշմարտութիւնը Աստուածն է եւ Աստուած մէկ է: Բայց Յիսուս մեզի նաեւ սորվեցուց Երրորդութեան գաղափարը: Ուրեմն ի՞նչ է Երրորդութիւնը:

Երկրաչափութեան մէջ ամենակայուն ձեւը հաւա-

ՊԱՏԿԵՐ-1



ՊԱՏԿԵՐ-2



սարակողմ եռանկիւնն է (Տես պատկերներ-1 եւ 2): Բուրգերը, որ նոյն ձեւով շինուած են, հազարաւոր տարիներ է որ կը գոյատեւեն: Աս իրենց կայունութեան փաստն է:

Եռանկիւնը մէկ է, բայց ան երեք կողմեր ունի:

Յիսուս մեզի սորվեցուց Աստուծոյ Երրորդութեան գաղափարը: Ի՞նչ կը հասկնանք այս Երրորդութեան գաղափարին նկատմամբ: Իմացած եմ շատ մը կղերականներէ, որ ըսած են. «մէկ Աստուած երեք անձիք»: Այս հիման վրայ Մահմետականները մեզ կը նախատեն ըսելով թէ երեք աստուածներու կը հաւատանք: Երեք աստուածներ գոյութիւն չունին: Ուրեմն ի՞նչ է «Երրորդութեան» իմաստը: «Երրորդութեան» գաղափարը լաւ հասկնալու համար նկատողութեան առնենք հետեւեալ երկու օրինակները. Մարդ մը իր ծնողքին զաւակն է, ան նաեւ իր կնոջ ամուսինն է, ան նաեւ իր զաւկին հայրն է: Այդ մարդը թէ՛ զաւակ է, թէ՛ ամուսին է եւ թէ՛ ալ հայր է: Քանի՞ անձիք գոյութիւն ունին, երեք թէ միայն մէկ անձ երեք զատ յարաբերութիւններով: Նկատի առնենք հետեւեալ օրինակը եւս. Ջրո (H₂O) քիմիական բաղադրութիւնը, որ կազմուած է երկու ջրածինի եւ մէկ հատ ալ թթուածինի հիւլէներով, որ ջուր կը կոչենք, կարելի

է այդ բաղադրութեան ներկայութեան փորձառութիւնը ունենալ իբրեւ կազ՝ շոգի, կամ իբրեւ հեղուկ՝ ջուր եւ դարձեալ իբրեւ պինդ մարմին՝ սառ։ Երեք տարբեր բաղադրութիւններ գոյութիւն չունին, այլ միայն երեք երեւոյթներ։ Այս հիման վրայ նաեւ ջանանք հասկնալ մէկ Աստուծոյ երրորդութեան գաղափարը։

Բնագիտութեան գիտունները մեզի կ'ըսեն թէ «մեծ պայթում»-էն առաջ միայն «միականութիւնը» գոյութիւն ունէր։ «Մեծ պայթումը» ստեղծագործութեան սկիզբն էր երբ զօրութիւնը այդ «միականութեանէն» դուրս արձակուեցաւ եւ այդ զօրութիւնն է, որ նիւթի վերածուեցաւ եւ ստեղծագործութեան զանազան հիւլէները՝ ֆիզիքականը՝ մարմինները կազմեց։ Ըստ բնագէտներուն այդ միականութիւնը անհուն խտութիւն ունեցող անհունօրէն պզտիկ «կէտ» մըն է։ Իրենք ալ կ'ընդունին թէ չեն գիտեր թէ ինչ գոյութիւն ունէր այդ «մեծ պայթում»-էն առաջ։ Որովհետեւ չեն գիտեր այդ «կէտ»-ին բնոյթը զայն կոչած են «միականութիւն» (singularity)։ Նմանապէս մարդ արարած իր իմացականութեամբ կարող չէ գիտնալ Հայր Աստուծոյ բնոյթը։ Այն ինչ որ բնագիտութիւնը տակաւին նոր փաստած է, Յովհաննու աւետարանիչ երկու հազար տարի առաջ արդէն մեզի ներկայացուցած էր։

«Ի՛նչպէսն է՛ր Բանն, եւ Բանն է՛ր առ Լսոյ-
առա՞ եւ Լսոյառա՞՞ ինչ Բանն. Նա՛ն է՛ր ՚ի
նկչեանէ առ Լսոյառա՞՞։ Լմենայն ինչ՝ նովա՛-
ւելեւ, եւ առանց նորա եղեւ եւ ո՛չինչ՝ որ ինչ
եղեւն։ Նովա՛ կեանք էր, եւ կեանքն՝ էր լոյս
մարտկան եւ լոյսն՝ ՚ի խաւարի անդ՝ լուսառ՝-
բէր եւ խաւար՝ մեա ո՛չ եղեւ Լուսառ... Եւ
Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ՚ի մեջ եւ

Տեա՛վ գիտաւ նորա, գիտաւ ի՞բրեւ գմխաճնի
աւ ՚ի Հօրէ, լի՛ շնորհօ՛վ եւ ճշմարտութեան» :

(Յովհաննէս Լ:1-5,14)

«Սկիզբէն էր Բանը ու Բանը Աստուծոյ քով էր եւ Բանը
Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր:
Ամէն բան անով եղաւ եւ առանց անոր բան մը չեղաւ՝
ինչ որ եղաւ: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց լոյսն
էր եւ լոյսը խաւարի մէջ կը լուսաւորէր ու խաւարը զա-
նիկա չհասկըցաւ: ... Եւ Բանը մարմին եղաւ ու մեր
մէջ բնակեցաւ, եւ անոր փառքը տեսանք, Հօրմէն միած-
նի փառքին պէս, շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն»:

Բանը (logos)՝ խօսքը «ձայն» է: Զայնը թրթռացում է:
Ամէն զօրութիւն թրթռացում մը ունի եւ թրթռացում
մըն է: Այդ Աստուածային զօրութիւնն է որ «մարմին»
(նիւթ) եղաւ: «Բան»-ը թէ՛ Աստուծոյ հետ էր եւ թէ՛ ալ
Աստուած էր ու «Բան»-ին մարմնային երեւոյթն ալ
Աստուծոյ փառքը՝ Որդին՝ Քրիստոսն էր: Հայերէնի մէջ
«բան» բառը նաեւ չգիտցուած անորոշութիւն մը կը
ներկայացնէ, որովհետեւ մարդուն միտքը եւ իր իմա-
ցականութիւնը կարողութիւնը չունին Աստուած հաս-
կընալու: Բայց մարդ կարողութիւնը ունի Աստուծոյ
փորձառութիւնը ունենալու, այն ինչ որ Յիսուս ըրաւ:

Այս հանգրուանին պատշաճ է նաեւ մէջբերել «Լոյս
ի Լուսոյ» խորագրեալ գիրքէս հետեւեալը.

«Երբ պայծառ օր մը ծովեզերք կեցած դիտենք,
ի՞նչ կը տեսնենք: Պատասխանը շատ հաւանական է, որ
ըլլայ «ծովը»: Եթէ հարց տանք «ուրիշ ի՞նչ կը
տեսնենք», կրնանք ըսել «ջուր» եւ նոյնպէս ճիշդ է: Եթէ
հարց տանք երրորդ անգամ մը եւս «ուրիշ ի՞նչ կը
տեսնենք», նոյն ճշգրտութեամբ կրնանք պատասխանել
«ալիքներ»: Կը տեսնենք երեք տարբեր բաներ, բայց
անկարելի է երեքէն որեւէ մէկը տեսնել միւսներէն
անջատ: Ծովը, ջուրը եւ ալիքները միասին կը կազմեն
երրորդութիւն մը: Ծովը ամբողջութիւնն է, ջուրը՝

գործիչ միջոցը, ալիքները՝ անոր խաղը եւ զանազան արտայայտութիւնները: Եթէ ուշադրութեամբ դիտենք, կը տեսնենք, որ ալիքներ կու գան ու կ'երթան: Կան տարբեր մեծութեամբ ալիքներ: Երբեմն մեծ ալիք մը կու գայ եւ կը կլլէ պզտիկ ալիքները: Պզտիկ ալիք մը կը նայի իր բոլորտիքը, կը տեսնէ աւելի արագ յառաջացող եւ աւելի մեծ ալիք մը: Կը նախանձի եւ կու լայ իր դժբախտութեան վրայ: Կը տեսնէ իր դրացի ալիքը որ կ'անհետանայ: Ինք ալ մեռնելու եւ անհետանալու վախով կը շարունակէ գոյատեւել: Փոխանակ բոլորտիքը եւ միւս ալիքները դիտելու, գոնէ քիչ մը ներհայեցողութեան գիտակցութիւնը ունենայ եւ դէպի ներս՝ իր մէջ նայի, պիտի տեսնէ, որ ինք ջուր է եւ այն մեծ եւ արագ յառաջացող ալիքն ալ ջուր է: Արդէն այդ վայրկեանէն իսկ իր բոլոր դժբախտութիւնները կը փարատին: Պիտի գիտակցի, թէ եթէ նոյնիսկ դադրի որպէս ալիք գոյատեւելէ, դարձեալ պիտի մնայ որպէս ջուր, որ «անմահ» է:

«Այն ակը, ուրկէ կը բխի բոլոր ստեղծագործութիւնը, որուն մէջ կը գոյատեւէ եւ ուր կը վերադառնայ ստեղծագործութիւնը իր վախճանին, այն ակը կը կոչենք Հայր Աստուած, որ է ճմարտութիւնը: Այն զօրութիւնը, որ կը բխի Հօրմէն, որուն միջոցաւ բոլոր ստեղծագործութիւնը ի յայտ կու գայ եւ կը գոյատեւէ, զայն կը կոչենք Սուրբ Հոգի, որ է ճանապարհը: Եւ այն բոլոր արտայայտութիւնները՝ ստեղծագործութեան խաղը, որ կը կազմէ տիեզերքը, զայն կը կոչենք Քրիստոս՝ Որդի Աստուծոյ, որ է կեանքը: Ժիշդ ատոր համար ամէն մէկ անձի ճշմարիտ էութիւնը՝ կեանքը Քրիստոսն է: Այս պատճառաւ սաղմոսերգուն կ'ըսէ.

«Եւեդի եւ Գնացի եւ՝ ի մէջ «Դո-երայ
մահու, ոչ երկեայց ՚ի շարե պի Դո-Տէր

ընդ- իս էս...» (Սաղմոս ԻԲ:4) (Սաղմոս ԻԳ:4)

«Թէեւ մահուան շուքի ձորին մէջ ալ պտըտիմ, Չարէն
պիտի չվախնամ, Վասն զի գուն ինծի հետ ես...»

Հետեւեալը մասամբ «Լոյս Ի Լուսոյ» գիրքիս մէջ
«Աստուած Կա՞յ թէ Զկայ» խորագրեալ Դ. գլուխին մէջ
ներկայացուած էր: Հոս աւելի ընդարձակ ձեւով պիտի
ներկայացուի: Պարզ ոսկի մատանի մը, որ գոյութիւն
ունի, իր այդ գոյութեան համար պէտք է պատճառ մը
ունենայ: Մատանին արդիւնք մըն է եւ ոսկին ալ անոր
գոյութեան պատճառը: Առանց ոսկիին (կամ որեւէ
ուրիշ մետաղ կամ նիւթ մը) մատանին ալ գոյութիւն
չի կրնար ունենալ: Պատճառն ալ արդիւնքին մէջն է:
Այսքանը վերոյիշեալ նախորդ գիրքիս մէջ ներկայաց-
ւած էր: Որպէսզի այդ մատանին գոյութիւն ունենայ
քանի՞ պատճառներ գոյութիւն ունեցած են: Մատանին
գոյութիւն պիտի չունենար եթէ մէկը մատանի մը
ունենալու գաղափարը յղացած չըլլար: Ուրեմն առաջին
պատճառը մատանիի մը գաղափարը ունենալն է: Եթէ
ակնագործ մը մատանին չի շինէր մատանին ալ գոյու-
թիւն պիտի չունենար: Ուրեմն երկրորդ պատճառն ալ
մատանին շինողն է: Իսկ երրորդ պատճառն ալ անտա-
րակոյս մետաղին՝ ոսկիին գոյութիւնն է: Կը թուի թէ
բան մը որպէսզի գոյութիւն ունենայ կը կարօտի երեք
պատճառներու: Ստեղծագործութիւնը կ'ըսենք թէ գո-
յութիւն ունի, հետեւաբար պէտք է նաեւ ունենայ երեք
պատճառներ: Առաջին պատճառը ստեղծագործութեան
գաղափարը ունենալն է: Ստեղծագործութիւնը Հայր
Աստուծոյ գաղափարը՝ կամքն է: Երկրորդ պատճառը
այդ ստեղծագործութիւնը իրագործողն է, որ Հայր
Աստուծոյ բղիժած զօրութիւնը՝ Ս. Հոգին է: Իսկ երրորդ
պատճառն ալ նիւթն է, որ Աստուծոյ զօրութեան մարմ-
նացումը՝ Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Մատանին
նկատմամբ երեք գատ պատճառներ գոյութիւն ունէին,

որովհետեւ ան մարդկային «ստեղծագործութիւն» մըն էր եւ մարդ երկուութեան «շուքին» մէջ է որ կ'ապրի: Իսկ տիեզերքի ստեղծագործութեան համար, թէ գաղափարը ունեցողը, թէ «շինողը» եւ թէ ալ գայն կազմող նիւթը մէկ են, որովհետեւ Աստուած միականութիւն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եւ Հայր իմ մի եմք»: Պէտք չէ մոռնալ թէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է: Քրիստոս նաեւ ըսած է. «Ես եմ կեանքը»: Ուրեմն այս հիման վրայ ամէն ինչ կը թուի կեանք ունենալ, անտարակոյս յայտնուած զանազան մակարդակներով (Տես այս գիրքին յաջորդ գլուխը): Մենք կեանք ունինք ինչպէս նաեւ անասուններն ու բոյսերը: Մեր կեանքը Աստուծոյ ներկայութիւնն է մեր մէջ: Միթէ չէ՞ գրուած. «Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»: Ուրեմն կեանքին պարագային թէ կեանքը տուողը, թէ կեանքը եւ թէ ալ կեանքը ապրողը կը կազմեն երրորդութիւն մը եւ մէկ են: Կեանքը տուողը Հայր Աստուածն է: Այդ կեանքը Իրմէ մեզի «ինկած» ժառանգութիւնն է: Իսկ այդ կեանքին ներկայութիւնը մեր մէջ Ս. Հոգիի՝ Աստուծմէ բղխած զօրութեան ներկայութիւնն է: Իսկ այն մարմինը որ կ'օգտագործենք մեր կեանքի ընթացքին, այդ մարմինը որ կը համարենք ողջ ըլլալ՝ կեանք ունենալ, նիւթէ յառաջ եկած է եւ այդ նիւթն ալ Ս. Հոգիի զօրութեան արդիւնքն է՝ Աստուծոյ Որդին Քրիստոսն է:

Մարդ արարած նաեւ գիտակցութիւն մը ունի: Այդ գիտակցութիւնը ինք կարող է յայտնաբերել շատ ցած մակարդակով, որովհետեւ ինք տակաւին չէ սորված պատշաճ կերպով օգտագործել իր ուղեղը: Ընդհանուր տիեզերքի մէջ միայն մէկ գիտակցութիւն մը կայ որ անհուն է եւ Աստուծոյ գիտակցութիւնն է, որ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ գայն կը յայտնաբերէ զանազան մակարդակներով: Մարդկային ցած գիտակցութեան հետեւանք մարդ կը կարծէ թէ անզգայ նիւթը

գիտակցութիւն չունի: Այս հասկացողութիւնը անտարակոյս սխալ է: Գիտակցութիւնը մեզի ամէն ինչի՝ մեր միջավայրին, մեր խորհուրդներուն եւ մեր զգացումներուն գիտակից կ'ընէ: Այս պարագային ալ Գիտցողը, գիտնալը եւ գիտցուածը մէկ են եւ երրորդութիւն մը կը կազմեն: Միթէ չե՞նք ըսեր. «Աստուած ամենագէտ է», որովհետեւ Աստուծոյ գիտակցութիւնն է որ կը գործէ ընդհանուր ստեղծագործութեան մէջ: Դուն եւ ես ինչի որ տեղեակ ենք Աստուած ալ անոնց տեղեակ է:

Իբրեւ եզրակացութիւն. առանց երրորդութեան, ոչինչ գոյութիւն կրնայ ունենալ:

Այս հանգրուանին պատշաճ է նկատողութեան առնել Աստուծոյ յատկութիւնները:

Աստուած միականութիւն է եւ ի՞նչ են Աստուծոյ յատկութիւնները: Միականութիւնը ունի միայն մէկ յատկութիւն, որ ներկայացուած է Հին Կտակարանին մէջ հետեւեալ բառերով. «Ես եմ որ է»: Աստուծոյ միակ յատկութիւնը «Էութիւն»-ն է: Ճիշդ ասոր համար ամէն Հայ Առաքելական Եկեղեցւոյ խորանին վերեւ «է» գիրը կը տեսնեք: «է»-ն ըլլալ բային ներկայ ժամանակ երրորդ դէմքն է: Հետեւաբար Աստուած է (վերջակէտ): Աստուծոյ տեսանկիւնէ Աստուած միայն մէկ յատկութիւն ունի ան ալ «Էութիւն»-ն է: Իսկ մարդկային տեսանկիւնէ հարցը քիչ մը տարբեր ըլլալ կը թուի, որով վերեւ ներկայացուցինք երրորդութեան գաղափարը: Ստեղծագործութեան ալը՝ Հայր Աստուծոյ յատկութիւնները ի՞նչ են: Ան թէ՛ ամենակարող է, թէ՛ յաւիտենական է, այսինքն ժամանակի ենթակայ չէ եւ թէ՛ ալ ամենուրեք է, այսինքն միջոցի ենթակայ չէ: Աստուծոյ արտայայտութիւնը իբրեւ զօրութիւն՝ Ս. Հոգիին յատկութիւնները ի՞նչ են: Ան թէ՛ կեանք է, թէ՛ գիտակցութիւն եւ թէ՛ ալ՝ արդարութիւն: Իսկ Աստուծոյ Փրզիքական արտայայտութեան՝ Որդւոյն Քրիստոսի

յատկութիւնները ի՞նչ են: Այդ յատկութիւններն են խաղաղութիւն, սէր եւ ողորմածութիւն: Բայց որովհետեւ Քրիստոս Աստուծոյ՝ Ս. Հոգիին ֆիզիքականին մէջի ներկայութիւնն է, ինք ըսած է. «Ես եմ կեանքը. Ես եմ աշխարհի Լոյսը. Ես եմ ճշմարտութիւնը. Ես եմ ճանապարհը»: Աստուծոյ երեք երեւոյթներուն երեքական յատկութիւններն ալ կը կազմեն երրորդութիւններ: Հետեւեալը Աստուծոյ յատկութիւններուն ամփոփումն է Ս. Գրային փաստերով. Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եւ Հայր Իմ մի եմք»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՄՓՈՓՈՒՄ

- Աստուած մէկ է եւ այդ միականութեան յատկութիւնը էութիւնն է- «Ես եմ որ է»:

-Մարդկային տեսանկիւնէ Երրորդութեան յատկութիւններն են. (1-Հայր Աստուած, 2-Ս. Հոգի, 3-Քրիստոս)

1ա- Ամենակարող ըլլալը- «Ե՛ս եմ Տէրը, որ բոլոր բաները ըրի»:

1բ- Յաւիտենականութիւնը- «Յաւիտենական կեանք» Աստուծոյ մէջ լուծուիլն է: Միայն ներկան յաւիտեան է:

1գ- Ամենուրեք ըլլալը- «Ես եմ ճշմարտութիւնը»

2ա- Կեանքը- «Ես եմ Կեանքը»

2բ- Գիտակցութիւնը (ամենագէտ ըլլալը)- «Ես եմ աշխարհի Լոյսը»

2գ- Արդարութիւնը- «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»:

3ա- Խաղաղութիւն- «Խաղաղութիւն զիմ տամ ձեզ»

3բ- Սէր- «Աստուած սէր է»:

3գ- Ողորմածութիւն- Յիսուս իր մէջ լրիւ յայտնաբերած ըլլալով Աստուծոյ Որդին՝ Քրիստոս, իր ընդհանուր կեանքը ողորմածութեան՝ կարեկցութեան, օգնութեան եւ ինքնագոհողութեան օրինակ մըն էր:

Անգամ մը եւս կրկնել պատշաճ է. Աստուած մէկ է. հետեւաբար բոլոր վերեւ ներկայացուած յատկութիւններ-

ըը որ կը վերագրենք Երրորդութեան կարծեցեալ «զանազանութեան», իսկութեան մէջ բոլորն ալ մէկ Աստուծոյ զանազան յատկութիւններն են:

Այս հանգրուանին քիչ մը իմացականօրէն գիտակից նկատմամբ ճշմարտութեան եւ Երրորդութեան, չե՞նք խորհիր որ պէտք է որեւէ ջանք խնայել մինչեւ որ այդ իմացական գիտութիւնը փոխուի փորձառութեամբ ստացուած գիտութեան: Աս ալ կարելի է միայն Քրիստոս մեր մէջ յայտնաբերելով, այն ինչ որ Յիսուս ըրաւ եւ մեզի ալ յանձնարարեց նոյնը ընել եւ Իրեն նման ըլլալ:

Իսկ մենք ի՞նչ պէտք է խորհինք թէ ճշմարտութիւնն է եւ ի՞նչ պէտք է հասկնանք ճշմարտութիւնը սեղծելով:

- Անտարակոյս միակ ճշմարտութիւնը Աստուածն է:
- Ճշմարտութիւնը Աստուծոյ երեւոյթն է:
- Ճշմարտութիւնը Աստուածպաշտութիւնն է, որ մեզ Իրեն կ'առաջնորդէ:

- Ճշմարտութիւնը Աստուծոյ հասնելու սանդուխն է:
- Ճշմարտութիւնը Աստուծոյ զօրութիւնը ու զէնքն է:
- Ճշմարտութիւնը Աստուծոյ փայլն ու պայծառութիւնն է:

- Ճշմարտութիւնը մտային խաղաղութիւնն է:
- Ճշմարտութիւնը խիղճին ձայնն է:
- Ճշմարտութիւնը կարելի է գաղտնի պահել:
- Ճշմարտութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է:
- Ճշմարտութիւնը կարելի է յաղթել:
- Ճշմարտութիւնը ծայրագոյնն է, բայց ոչ վերջը:
- Ճշմարտութիւնը աներկիւղ է:

«Ե՛ւ եմ ճանաչարձն՝ եւ ճշմարտութիւնն եւ կեանքն»:

(Յովհաննոս ԺԴ:6)

*** ԱՄԷՆ ***



Յիսուս աշխարհ չէր դրկուած,
որպէսդի մարդկութեան սորվեցնէ
ողորմելի հիւղականերու եւ
չարագուշակ խրճիթներու միջեւ
փառաւոր եւ շքեղ
եկեղեցիներ ու տաճարներ
կառուցանել:

Այլ Ան եկաւ
որպէսդի մարդուն սիրտը
տաճարի մը վերածէ
եւ անոր ոգին ալ խորանի
ու միտքն ալ քաւանայի:
Խալիլ Շիպրան



Բ

ԿԵԱՆՔԸ



ԿԵԱՆՔԸ

«Ե՛ս եմ ճանաչարձն՝ եւ ճշմարտութիւնն եւ կեանք» :
(Յովհաննէս ԺԳ:6)

Ինչպէս նախորդ գլուխին մէջ ակնարկուած ժրտի եղած էր Կեանքի մասին, այս գլուխին մէջ պիտի ջանանք Կեանքի մասին քիչ մը ավելի լաւ հասկացողութիւն մը կերտել: Ի՞նչ կը հասկնանք «Կեանք» ըսելով: Կան ումանք որ թէ Կեանքը եւ թէ ալ գիտակցութիւնը կը նկատեն նոյն բանը ըլլալ ու կ'ըսեն. «Քանի որ գիտակցութիւն ունինք, նաեւ կեանք ունինք»: Մարդ իր գիտակցութեամբն է որ իր միջավայրին, իր խորհուրդ ու զգացումներուն գիտակից կ'ըլլայ: Այս ուղղութեամբ միթէ Տեզարթ (Descartes) անուանեալ փիլիսոփայ մը անցեալին ըսած չէր հետեւեալը. «Cogito, ergo sum» (լատիներէն), որ թարգմանի. «Կը խորհիմ, հետեւաբար եմ»: Այս տեսակէտին մէջ որոշ իրողութիւն մը կայ, բայց նաեւ սխալ մը եւս կայ: Այն անհատը որ թմբիրի (coma) մէջ է գիտակցութիւն չունի, բայց ան թէ կը շնչէ եւ թէ ալ սիրտը կ'աշխատի եւ արիւնը մարմնին մէջ կը շրջի, հետեւաբար մարմինը տակաւին կեանք ունի: Անտարակոյս թէ «Կեանքը» եւ թէ ալ «Գիտակցութիւնը» երկուքն ալ մեր Հոգիին՝ Քրիստոսի ներկայութեան արդիւնքն են մեր մէջ: Իսկ Քրիստոս ալ Ս. Հոգիին Փիղիքականին մէջ արտայայտութիւնն է: Ուրեմն ի՞նչպէս բնորոշել աշխարհիկ կեանքը: Շատեր կը խորհին թէ միայն շնչող կենդանիները կամ անոնք որոնք բազմաանալու կարողութիւն ունին կեանք ունին: Այս հիման վրայ անոնք նաեւ կ'ըսեն թէ անզգայ նիւթը կեանք չունի: Եթէ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնն է եւ Աստուած ալ «Կեանք» է, պէտք չէ՞ նաեւ անզգայ նիւթն ալ կեանք ունենայ: Միթէ Քրիստոս չէ՞ր որ ըսաւ. «Ես եմ Կեանքը»: Միթէ

չե՞նք ըսեր. «Աստուած ամենուրեք է»:

Ուրեմն անգամ մը եւս հարց տանք, ի՞նչպէս բնորոշել «Կեանքը»: Կեանքը կարելի է բնորոշել հետեւեալ նախադասութեան տուած գաղափարով: «առանց արտաքին ուժի, շարժման կարողութեամբ»: Անտարակոյս, ստեղծագործութեան զանազանութեան մէջ կեանքը զանազան տարբեր մակարդակներով յայտնաբերուած է: Այս հիման վրայ շատ պարզ է հասկնալ թէ համայն մարդկութիւնը, ընդհանուր անասունները, նոյնիսկ միաբջիջային էակները ինչպէս նաեւ բոյսերը բոլորն ալ կեանք ունին: Զախջախիչ մեծամասնութիւնը պիտի ըսէ թէ գետնի քարը կեանք չունի, որովհետեւ ան առանց արտաքին ուժի կարող չէ շարժիլ: Այս հայեացքը սխալ է: Որովհետեւ մարդուն արտայայտած գիտակցութիւնը բաւականի ցած է, ան իր խաւարամտութեամբ չի կրնար տեսնել անզգայ նիւթի շարժումները: Մարդ արարած իր ապրած ներկայ կեանքի ընթացքին իր ունեցած ուղեղին կարողութեան միայն 5%-ը կ'օգտագործէ, հետեւաբար լուր անգամ չունի թէ անզգայ նիւթն ալ շարժման մէջ է նոյնիսկ մեզմէ աւելի: Այսօր գիտունները փաստած են որ անզգայ նիւթին՝ քարին մէջի բոլոր մասնիկները եւ զանոնք կազմող հիւլէները ինչպէս նաեւ հիւլէները կազմող ենթահիւլէական մասերը բոլորն ալ անընդհատ շարժման մէջ են, նոյնիսկ այդ վերջինները մէկ երկվայրկեանի մէջ հազար անգամ կ'անհետանան եւ կը գոյանան: Թովմասի Աւետարանին մէջ Յիսուս Քրիստոս ըսած է. «...Քարը վերցուր, զիս հոն պիտի գտնես» (համար 76): Այս տրուած տեղեկութեան հիման վրայ ուսումնասիրենք մարդուն աշխարհիկ կեանքը եւ նաեւ յաւիտենական կեանքը:

- Նախ ջանք մը ընենք հասկնալ աշխարհիկ կեանքը:

Եթէ Աստուած կեանք է եւ ստեղծագործութեան մէջի ամէն ինչ, ներառեալ մարդը, իր մէկական արտա-

յայտութիւններն են, մարդ ալ պէտք է Աստուծոյ որոշ
յատկութիւնները ունենայ ու անմահ ըլլայ, քանի որ
Աստուած անմահ է: Միթէ չէ՞ գրուած. «Աստուած
մարդը ստեղծեց իր պատկերին նման»: Ուրեմն ի՞նչ է
այն մահուան փորձառութիւնը որ կ'ունենանք եւ
մեռնելէ կը վախնանք: Մահը չի կրնար կեանքին
հակասել: Մահը ծնունդին հակադիրն է եւ ոչ կեանքին:
Մարդ, անգամ մը եւս, իր խաւարամտութեան հետե-
ւանք կը կարծէ թէ կեանքը ծնունդով կը սկսի եւ մա-
հով ալ վերջ կը գտնէ: Մարդկային կեանքին ինչ ըլլալը
լաւ մը հասկնալու համար նկատողութեան առնենք հե-
տեւեալ փոխաբերականը: Մէկ վայրէ ուրիշ վայր մը
երթալու համար ինքնաշարժ կը նստինք եւ կը
ճամբորդենք: Երբ մեր որոշեալ վայրը հասնինք, ինք-
նաշարժէն դուրս կ'ելլենք ու կը մեկնինք: Ինքնաշար-
ժին համար բնաւ կարեւորութիւն չունի թէ զինք
գործածողը ինչ ուղղութեամբ կը ճամբորդէ: Ան միայն
իր պարտականութիւնը կը կատարէ ու մեզ կը փո-
խադրէ: Ինքնաշարժը առանց մեզի՝ վարիչին մինակը
ոչինչ կրնայ ընել, միայն անշարժ կը մնայ: Այս հիման
վրայ հասկնանք մարդուն աշխարհիկ կեանքը: Մարդ
կը ծնի՝ ան իր տունը կը ձգէ եւ մարմնի մէջ կը «նստի»:
Մարդուն մարմինը իր «ինքնաշարժ» է: Մարմինը
իրեն կը պատկանի, բայց ինք իր մարմինը չէ այլ ինք
զայն գործածողն է: Ինչպէս ինքնաշարժը մեզ մէկ տեղէ
ուրիշ տեղ մը կը տանի, նմանապէս մեր մարմինն ալ
մեզ «ծնունդ»-է մինչեւ «մահ» կը տանի: Տարիներու
ընթացքին ինքնաշարժը կը հիննայ եւ կը սկսի աւրուիլ
եւ օր մըն ալ զայն կը նետենք եւ նոր մը կ'առնենք:
Մարդուն մարմինն ալ ժամանակի ընթացքին չի՞ փո-
խուի, չի՞ «աւրուի» եւ «նորոգութեան» չի՞ կարօտի:
Այս «նորոգութիւնները» բժիշկի կամ հիւանդանոց
երթալ՝ բուժուիլ կը կոչենք: Երբ ան այլեւս մեր

նպատակին չի ծառայեր, զայն կը թողունք եւ նոր մը կ'առնենք: Աս ալ վերամարմնացում կը կոչենք: Ինչպէս ինքնաշարժին գործը մեզ մեր ուզած ուղղութեամբ եւ տեղը տանիլ է, նմանապէս այս մարմինն մէջ մեր ներկայութեամբ կ'երթանք այն ուղղութեամբ, որ մեր ընտրութիւնը ու փափաքն է: Այդ կախում ունի մեզմէ, թէ մենք ուր երթալ կ'ուզենք: Տուն երթալը վերադառնալ է հոն ուրկէ որ եկած էինք, այսինքն մեր Հօր «տունը»՝ Հայր Աստուծոյ ետ վերադառնալն է: Բայց դժբախտաբար մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իրենց «ինքնաշարժը» կը գործածեն զուարճութեան համար: Դէպի «զուարճութիւն» երթալն ալ աշխարհիկ հետապնդումներուն համար ապրիլը կը ներկայացնէ: Առաջինը՝ ետ տուն երթալը կը ներկայացնէ յաւիտենական կեանքը, որուն մասին ստորեւ յաւելեալ տեղեկութիւն պիտի տրուի: Իսկ երկրորդն ալ կը ներկայացնէ ան որ մենք «մահ» կ'անուանենք: Ուրեմն ինքնաշարժը՝ մեր այս մարմնային կեանքը կարող է մեզ երկու զատ ուղղութիւններ տանիլ: Այն ուղղութիւնը որ պիտի ճամբորդենք կախեալ է ինքնաշարժը վարողէն, այսինքն մեզմէ: Կան ոմանք, ընդհանուր առմամբ թիւով քիչ, իրենց «ինքնաշարժ»-ը կ'ուղղեն դէպի «տուն»: Զախջախիչ մեծամասնութիւն զայն կ'ուղղեն դէպի «զուարճութիւն»: Կան նաեւ ոմանք, որ կ'ընտրեն դէպի «զուարճութեան» երթալ բայց կէս ճամբայէն միտքերնին կը փոխեն եւ ուղղութիւն կը փոխեն դէպի «տուն» եւ կան ոմանք ալ ասոր ճիշդ հակառակը կ'ընեն:

Այս հանգրուանին մեր մտքին մէջ մի քանի հարցումներ կը ծագին.

ա- Ուրեմն ի՞նչ է կեանքին իմաստը:

բ- Ո՞վ է «ինքնաշարժ»-ը վարողը՝ մարմինը օգտագործողը:

դ- Եթէ մարդուն ոգին անմահ է, Ի՞նչպէս կ'ըլլայ որ դէպի մահ կ'երթանք:

Այս հարցումներուն պատշաճ պատասխաններ տալ անհրաժեշտ ըլլալ կը թուի:

ա- Ուրեմն Ի՞նչ է կեանքին իմաստը:

Կեանքը ինքնին իմաստ մը չունի, բայց ան առիթը կը ստեղծէ, որ մենք զայն իմաստաւորենք: Ի՞նչպէս կեանքը իմաստաւորել: Եթէ մեր կեանքը իմաստաւորելը «գուարճութեան» երթալն է, մենք հոն կը գինովնանք եւ կը ջանանք ետ վերադառնալ, բայց գինովցած արկածի տեղի կու տանք եւ այդ պատճառով ալ թէ՛ «ինքնաշարժը» եւ թէ՛ ալ մենք կ'անհետանանք՝ կը մեռնինք ու տուն չենք հասնիր: Բայց երբ մեր կեանքը իմաստաւորելը «տուն» վերադառնալն ըլլայ, ճամբան գտնելու համար առանց ջանք խնայելու կը յարատեւենք, ի վերջոյ կը յաջողինք «տուն» հասնիլ եւ կը տեսնենք որ մեր Հայրը իր բազուկները բաց մեզի կը սպասէ: Ի՞նչպէս «տան» ճամբան գտնել: Ճիշդ այդ էր որ Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց: Այդ ճամբան «Կատարելութեան Ուղին» է: Մեր ընդհանուր կեանքի ընթացքին պէտք չէ այդ ուղիէն չեղինք, եթէ չեղինք ամենեւին «տուն» չենք հասնիր: Անկարելի է «ինքնաշարժով» դէպի «գուարճութեան» ուղղութեամբ ընթանալ եւ յոսալ որ օր մը տուն կը հասնինք: Աս անկարելի է, ան յոյս մըն է որ ամենեւին պիտի չ'իրականանայ:

բ- Ո՞վ է «ինքնաշարժ»-ը վարողը՝ մարմինը օգտագործողը:

Անտարակոյս մարմինը կենդանացնողը Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ: Միթէ չէ՞ գրուած. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներ են»: Աստուած ալ իր տաճարին մէջ կ'ըլլայ: Նաեւ գրուած է. «Ես եմ Կեանքը» եւ դարձեալ «Ես եմ աշխարհի Լոյսը»: Ուրեմն այս մարմինն բուն նպատակը իրագործելն է ընդհանուր ստեղ-

Ծագործութեան բուն նպատակը, որ է Աստուածայայտնութիւնը: Աստուած մարդուն աչքերովն է որ կը տեսնէ: Աստուած մարդուն ականջովն է որ կը լսէ: Աստուած մարդուն քիթովն է որ կը հոտոտէ: Աստուած մարդուն լեզուովն է որ կը համտեսէ ու Աստուած մարդուն ձեռքերովն է որ կը շօշափէ: Ճիշդ ասոր համար Աստուած մարդուն տուաւ յաւելեալ «գօրութիւն» մը՝ Լուսաբեր Հրեշտակը՝ մարդուն անհատականութիւնը, որպէսզի ան Աստուծոյ Լոյսը ի յայտ բերէր: Միթէ Լուսաբեր «Լոյսը բերող» ըսել չէ՞: Լոյսը մարդուն աւելի յստակ տեսողութիւն կու տայ, որպէսզի ան իր ճամբան չի շուարի ու ապահով ետ տուն վերադառնայ: Ո՞վ է «տուն» երթալու կամ «խնջոյքի» երթալու որոշումը տուողը: Ան Լուսաբեր Հրեշտակը՝ մարդուն անհատականութիւնն է: Երբ ան կը մոռնայ իր կեանքը պատշաճ կերպով իմաստաւորել ան նաեւ կը մոռնայ իր կեանքին բուն նպատակը: Ան տարուած «գուարճութեան» տուած անցողակի եւ ժամանակաւոր հաճոյքներէն կը մոռնայ իր Հօր «տան» երանութիւնը: Ան «գուարճութեան» ատեն խմած գինիով աւելի արբեցած կը միջըրճուի խոր խաւարամտութեան մը մէջ եւ պատրանքային երազը՝ իր աշխարհիկ կեանքը, ճշմարտութիւն մը ըլլալ կը կարծէ եւ քունէն արթննալու եւ երազողը տեսնելու համար Զանք չ'ընէր:

Գ- Եթէ մարդուն ոգին անմահ է, ի՞նչպէս կ'ըլլայ որ դէպի մահ կ'երթանք:

Միթէ Աւետարանին մէջ չէ՞ գրուած. «մեղքին թոշակը մահ է»: Ընդհանուր առմամբ մարդ կը կարծէ թէ ինք իր մարմինն է հետեւաբար կը կարծէ թէ մարմինն մահովը անձն ալ մեռած է: Մարմինը մարդը ինք չէ, մարմինը պարզապէս այս աշխարհի վրայ իր օգտագործած «ինքնաշարժ» է: Շատ լաւ գիտենք թէ ամէն շինուած ինքնաշարժ ուշ ու կանուխ կը դադրի գործելէ: Նմանապէս մարդուն մարմինն ալ ուշ ու

կանուխ կը դադրի գործելէ, որ մենք զայն մարմինն մահը կը կոչենք: Մեղաւոր կամ սուրբ, բոլորին մարմիններն ալ դատապարտուած են մահուան: Յիսուսին մարմինն անգամ խաչին վրայ մեռաւ: Մարմինը հողէն կու գայ եւ հողին ալ ետ կը վերադառնայ: Բայց Յիսուս ինք չի մեռաւ այլ իր անհատականութիւնը յարութիւն առաւ: Իսկ եթէ մենք ալ Յիսուսի նման չ'ըլլանք մեր մարմինն հետ մեր անհատականութիւնն ալ՝ «ինքնաշարժը» վարողը եւ անոր ընթացքին որոշումները տուողն ալ իր ստեղծած արկածով՝ մեղքերով, «ինքնաշարժին» հետ կը մեռնի կ'երդայ: Բայց մեռնողը մարդուն իր բուն էութիւնը չէ այլ միայն մեքենավարը (chauffeur), ան որ «Լոյսը» պիտի յայտնէր, ան որ ստեղծագործութեան բուն նպատակը պիտի իրականացնէր, ան որ իր ճշմարիտ էութեան երազն էր:

- Ջանանք նաեւ հասկնալ յաւիտենական կեանքը:

Աւետարանին մէջ բացայայտ կերպով գրուած է յաւիտենական կեանքի մասին: Բայց մենք այդ տրուած տեղեկութիւնները լաւ մը հասկցած ենք: Նախ, շատեր կը կարծեն թէ յաւիտենական կեանքը անվերջ ժամանակ երջանիկ ապրիլն է, այսինքն միշտ «զուարճութեան» մէջ ըլլալ: Միայն Աստուած յաւիտենական է, որովհետեւ ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վախճան: Ժամանակը ստեղծուած ըլլալով թէ սկիզբ մը ունի հետեւաբար թէ ալ վախճան մը: Աստուած ժամանակի ենթակայ չէ, այլ ժամանակը Աստուծոյ մէջ է: Աստուծոյ համար ոչ անցեալ եւ ոչ ալ ապագայ գոյութիւն ունին: Աստուած միայն ներկային մէջ է: Հետեւաբար ներկան ալ պէտք է յաւիտենական ըլլայ: Այս հիման վրայ յաւիտենական կեանքն ալ պէտք է ներկային մէջ ըլլայ: Աւետարանին մէջ տրուած տեղեկութեան սխալ հասկացողութեամբ, ոմանք կը կարծեն թէ յաւիտենական կեանքը ապագային մարմինն մահէն վերջ, աշխարհի վերջաւո-

ընթացքում բարձրագույն մարմինները յարույժվել են պիտի առնեն երկինք պիտի յափշտակուի են յաւիտենական կեանքի պիտի արժանանան: Եթէ յաւիտենական կեանքը հիմա՝ այս մեր աշխարհիկ կեանքի ընթացքին՝ ներկային մէջ չ'ըլլայ մահէն ետք անկարելի է որ ըլլայ: Յաւիտենական կեանքը Աստուծոյ մէջ լուծուիլն է եւ ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է: Աստուծոյ հետ երանութեան մէջ ըլլալն է: Մեր Հօր տունը վերադառնալն է:

Եթէ մարդուն հոգին, ինչպէս նաեւ ոգին անմահ են եւ յաւիտենական, ուրեմն ի՞նչ է յաւիտենական կեանքը, որո՞ւն համար է յաւիտենական կեանքը: Եթէ մարդ արարած իր մարմինը չէ, յաւիտենական կեանքն ալ մարմնին համար չի կրնար ըլլալ: Ո՞վ կամ ի՞նչ է որ յարույժվելն պիտի առնէ ու արժանանայ յաւիտենական կեանքի եթէ այդ չէ մարդուն «Հոգին», ինչպէս նաեւ իր «ոգին» ու ինչպէս նաեւ իր մարմինը: Իսկութեան մէջ այս հարցումին պատասխանը շատ պարզ եւ ինքնայայտ կը թուի ըլլալ: Այդ երեքէն զատ ուրիշ ի՞նչ բան է որ մարդ ունի եւ միւս կենդանիները չունին: Ան մարդուն անհատականութիւնն է: Բայց եթէ ան՝ «Լուսաբեր Հրեշտակը» եթէ ուզէ Աստուծոյ գահին վրայ նստիլ, ալ չի կրնար յաւիտենական կեանքին արժանանալ եւ մահը կ'ըլլայ իր վախճանը: Իսկ եթէ ան իր պարտականութիւնը լիովին կատարէ եւ Աստուծոյ «Լոյսը» յայտնաբերէ կ'արժանանայ յաւիտենական կեանքին եւ մաս կը կազմէ միականութեան ու երանութեան: Յաւիտենական կեանքը խորունկ քունի մէջ մտնելով երազին վերջ տալ չէ, այլ ան արթննալով երազին վերջ տալ է: Ան արթննալով երազողը տեսնելն է եւ անդրադառնալ թէ ինք արդէն Ան էր: Արթննալն ալ մեր ներկայ գիտակցութեան շատ աւելի բարձր գիտակցութեան մը յափշտակուիլն է ու «Ճշմարտութիւն»-ը տեսնելն է, «Ճշմարտութեան» փորձառութիւնը ունենալն է:



Գ

ՃԱՆԱԴԱՐՀԸ
ՀԱԲԱՏՔ, ՅՈՅՍ ԵՒ ՍԷՐ



ՃԱՆԱԴԱՐՀՐ ՀԱԲԱՏՔ, ՅՈՅՍ ԵՒ ՍԷՐ

«Ե՛ս եմ Ճանապարհն՝ եւ ճշմարտութիւնն եւ կեանքն»:

(Յովհաննոս մ.Գ:6)

Ճանապարհը հոս ու հոն երթալ չէ: Ճանապարհը կենցաղ մըն է, ապրելակերպ մըն է, որ մեր աշխարհիկ պարտականութիւնը լաւագոյնս կատարելու կը ծառայէ: Ճանապարհը մարդկութեան համար «կատարելութեան ուղին» է: Նախորդ գիրքերէս «Կատարելութեան Ուղին» խորագրեալ գիրքիս մէջ պատշաճ տեղեկութիւն մը տրուած է այս ուղղութեամբ: Անոնք հոս պիտի չկրկնուին: Այս գիրքին այս Գ. գլուխին մէջ յաւելեալ տեղեկութիւն մը եւս պիտի տրուի:

Նկատողութեան առնենք Քրիստոսի հետեւեալ խօսքը. «Ինչ որ իմ անունովս խնդրէք ձեզի պիտի տրուի»: Այս հիման վրայ շատ անգամ կը լսենք աղօթքներ որ կը թուին ներկայացնել արեւտուրի ցանկ մը, որ աղօթողը Աստուծմէ կը խնդրէ եւ իր աղօթքը կը վերջացնէ հետեւեալ բառերով. «Յիսուս Քրիստոսի անունով կը խնդրենք. Ամէն»: Վերելի Քրիստոսի ըսած խօսքին այս ներկայացուած հասկացողութիւնը անտարակոյս սխալ մեկնաբանութիւն մըն է: Քրիստոսի այս ըսած խօսքը կը համապատասխանէ իր ըսած «Ես եմ Ճանապարհը» խօսքին: Մարդուն սխալ հասկացողութեան հետեւանք, ան իր «Ես»-էն եկած բոլոր փափաքները ինք իրականացնելու տեղ զանոնք Աստուծմէ կը խնդրէ, կարծէք Աստուած Ալաատտինին լամբարէն ելլող «ճինին» է եւ մեր բոլոր փափաքները պիտի իրականացնէ: Քրիստոսի ըսածին իմաստը շատ աւելի բարդ եւ լուրջ է: Որպէսզի ան իրականանայ կը կարօտի կատարելութեան ուղիին յաջող աւարտին հասնիլը: Քրիստոսի ըսածը կ'իրականանայ երբ անհատը կ'ունե-

նայ «հաւատք», «յոյս» եւ «սէր»: Անտարակոյս պէտք է հաւատք ունենանք Աստուծոյ վրայ, բայց նաեւ պէտք է հաւատանք թէ պիտի յաջողինք կատարելութեան ուղիին մէջ: «Լոյս Ի Լուսոյ» խորագրեալ գիրքիս Ժ. գլուխին մէջ հաւատքի մասին լայնածաւալ տեղեկութիւն տրուած էր: Շատ անգամ մեր հաւատալիքները (belief) կը կարծենք հաւատք (faith) ըլլալ: Պէտք է մոռնալ թէ մարդ ամենամեծ սուտերը ինք իրեն կ'ըսէ ու անոնց կը հաւատայ:

Մարդ պէտք է նաեւ յոյս ունենայ, որպէսզի համբերութեամբ եւ յարատեւութեամբ շարունակէ կատարելութեան ուղիին մէջ ընթանալ եւ զայն իր աւարտին հասցնել: Յոյսը պէտք է անխախտելի ըլլայ, որովհետեւ յոսահատութիւնը «Ես»-ին ամենակարեւոր միջոցառումներէն մին է, որ անհատը ձախորդութեան կ'առաջնորդէ: Կատարելութեան ուղին շատ մը խոչընդոտներ ունի, որոնք անձէն կը խլեն յարատեւութեան փափաքը: Անոնք միանգամայն փորձութիւններ են, յայտնելու համար անհատին կամքին զօրութիւնը, հաստատամտութիւնը եւ վճռականութիւնը: Մարդուն «Ես»-ը նաեւ պատ կը քաշէ մարդուն եւ Աստուծոյ միջեւ կատարելութեան ուղիին վրայ կասեցնելու համար յառաջդիմութիւնը: Յոխորտանք, դժուարութիւններ, հպարտութիւն եւ նամանաւանդ արտաքին աշխարհի շլացուցիչ զանազանութեան կապուածութիւններ: Յոյսի նկատմամբ «Լոյս Ի Լուսոյ» խորագրեալ գիրքիս մէջ ԺԱ. գլուխին մէջ մասնաւոր լայնածաւալ տեղեկութիւն տրուած էր, պատշաճ է նաեւ զայն կարդալ:

Ինչպէս Պօղոս ըսած էր «հաւատք»-ի, «յոյս»-ի եւ սէր»-ի մասին եւ մատնանշած էր թէ ամենակարեւորը «սէր»-ն էր: Սէր ինչի՞ մասին, սէր որո՞ համար: Անտարակոյս պիտի ըսենք սէր Աստուծոյ հանդէպ,

որովհետեւ առանց սիրոյ մարդ հաւատք չի կրնար ունենալ եւ առանց հաւատքի ալ յոյս չի կրնալ ունենալ: Ինչպէ՞ս Աստուած սիրել: Ականատես ենք շատ մը անձերու ըսածներուն եւ անոնք յաճախ կը կրկնեն թէ Աստուած կը սիրեն ու կը պաշտեն: Արդեօք կարելի է՞ սիրել անձ մը որ չենք տեսած եւ չենք ճանչնար: Մարդկային տեսանկիւնէ մարդ փորձառութիւն ունեցած է զանազան սիրոյ արտայայտութիւններու: Մօր մը սէրը հանդէպ իր զաւկին: Նման սէր մը Աստուծոյ մարդկութեան հանդէպ ունեցած սէրին ամէնէն մօտն է: Մայր մը միշտ պատրաստ է ինքզինք զոհել իր զաւկին համար: Կան նաեւ սէր քոյր եւ եղբոր միջեւ, ինչպէս նաեւ հօր եւ որդւոյն միջեւ: Կայ սէր երկու ընկերներու միջեւ, ինչպէս նաեւ երկու սիրահարներու միջեւ: Կայ նաեւ սէր ազգին, կրօնքին կամ երկրին համար: Վերեւ մատնանշեցինք թէ ամենակարեւոր սէրը պէտք է ունենանք հանդէպ Աստուծոյ: Այս սէրը պէտք է գերազանցէ մեր ունեցած բոլոր միւս սէրերուն որակը: Ան պէտք է ըլլայ անձնուիրում առանց որեւէ ակնկալութեան: Այն ատեն է, որ ան նաեւ կ'ըլլայ ճշմարիտ պաշտամունք: Սիրոյ մասին «Լոյս Ի Լուսոյ» խորագրեալ գիրքիս մէջ ԺԲ. գլուխին մէջ մասնաւոր լայնածաւալ տեղեկութիւն տրուած էր, պատշաճ է նաեւ զայն կարդալ:

Աստուած մարդուն խելք եւ իմացականութիւն տուած է: Երբ սկսինք զանոնք պատշաճ կերպով օգտագործել, պիտի հասկնանք թէ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնն է: Միթէ չենք ըսէր. «Աստուած ամէն տեղ է»: Ուրեմն այդ սէրը պէտք չէ ըլլայ մէկ երկու հոգիի դէմ ալ եթէ իսկապէս Աստուած կը սիրենք ան պէտք է ըլլայ ընդհանուր ստեղծագործութեան համար՝ ամէն ինչի, ամէն բոյսի, ամէն անասունի եւ ամէն մարդու համար, նոյնիսկ մեր

Թշնամիին համար: Եթէ մեր ունեցած սէրը այս չէ, հոգ չէ թէ քանի անգամներ կրկնենք. «ես Աստուած կը սիրեմ», միայն ինքնախաբէութիւն է, մեր մեզի խօսած սուտերնիս է, որուն մենք զմեզ կը հաւատացնենք: Նման կացութիւնը մեզ մեր «Ես»-ին զոհը կ'ընէ:

Մարդ դժբախտաբար երկու տարեկանին իր «Ես»-ին կը գիտակցի եւ ընդհանուր առմամբ իր բնոյթը կը կազմէ ըստ իր «Ես»-ի փափագին: Ինք իր ազատ կամքով իր «Ես»-ը կը նստեցնէ Աստուծոյ գահին վրայ: Միթէ չէ՞ գրուած. «ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»: Աստուծոյ գահն ալ իր տաճարին մէջ կ'ըլլայ: Երբ «Ես»-ը գահին վրայ է մարդուն փափագներուն ջախջախիչ մեծամասնութիւնն ալ կ'ըլլայ ըստ «Ես»-ին կամքին: Արդեօք կը խորհի՞նք թէ անոնք պիտի իրականանան, որովհետեւ մեր Աստուծոյ ներկայացուցած խնդրանքները կ'աւարտենք հետեւեալ բառերով. «Յիսուս Քրիստոսի անունով կը խնդրենք. Ամէն»: Բայց երբ կը յաջողինք կատարելութեան ուղի-ին վերջաւորութեան հասնիլ, մենք մեզ ամբողջութեամբ փոխած կ'ըլլանք՝ մեր «Ես»-ը լրիւ անտեսած կ'ըլլանք եւ Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնը՝ Աստուած իր գահին վրայ դրած կ'ըլլանք: Աստուած մարդուն ազատ կամք տուած է, հետեւաբար ամենակարող ըլլալով հանդերձ իր կամքը չի պարտադրէր: Բայց երբ անձը կառավարողը իր ներքին Քրիստոսը ըլլայ, իր բոլոր փափագներն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Արդեօք բնաւ տարակոյս կը մնա՞յ թէ Աստուծոյ կամքը չ'իրականանայ: Ահա՛, աս է իմաստը Քրիստոսի ըսածին՝ «Ինչ որ Իմ անունովս խնդրէք ձեզի պիտի տրուի»-ին: Այս հիման վրայ ալ Քրիստոս կ'ըլլայ ճանապարհը՝ միջոցը մեր յաջողութեան:



Դ

ՄԻՏՔԸ - ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ -
ԳԻՏՈՒԹԻՒՆ - ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ



ՄԻՏՔԸ - ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ - ԳԻՏՈՒԹԻՒՆ - ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Այս նիւթերը լաւ մը հասկնալու համար նախ պարտ ենք հասկնալ թէ ի՞նչ է միտքը: Ընդհանուր ստեղծագործութիւնը զօրութեան դաշտ մըն է: Այդ զօրութիւնը Աստուծոյ զօրութիւնն է: Ան Ս. Հոգիի զօրութիւնն է: Ինչպէս բնագիտութեան մէջի եւ մեզի յայտնի եղող բոլոր զօրութիւնները թրթռացում մը ունին եւ այդ թրթռացումներն ալ կրնան զանազան յաճախականութիւններ ունենալ, նոյնն է նաեւ Ս. Հոգիի զօրութեան համար: Ս. Հոգիի զօրութիւնն ալ իր մէջ անհուն յաճախականութիւններ ունի: Անոր ցած յաճախականութիւնները խտացած կը կազմեն նիւթը: Նիւթն է, որ մարդ կարող է տեսնել եւ շօշափել: Մարդ արարած ալ ստեղծագործութեան մաս կազմելով այդ նոյն Ս. Հոգիի զօրութեան մի երեւոյթն է: Միթէ Ս. Գիրքին մէջ չէ՞[®] գրուած. «Ս. Հոգին ձեր մէջ կը բնակի»: Մարդ կազմուած է զանազան յաճախականութիւններ ունեցող զօրութեան խաւերէ: Կ'ըսուի թէ եօթ զատ խաւեր կան, որոնք ընդհանրապէս «մարմին» կը կոչենք: Անտարակոյս անոնց առաջինը, որ ամէնէն ցած յաճախականութիւնը ունի նիւթէ կազմուած մարդուն Ֆիզիքական մարմինն է: Այս առաջինը հասկնալ դժուար չէ քանի որ կարող ենք զայն տեսնել ու շօշափել: Երկրորդ զօրութեան խաւը մարդուն միտքն է, ան մարդուն մտային «մարմինն» է: Այս «մարմինը» ոչ տեսանելի է եւ ոչ ալ շօշափելի, բայց ան մարմինը կառավարող ամենակարեւոր մասն է: Ինչպէս Ֆիզիքական մարմինը երկուութեան ենթակայ է. արու եւ էգ, նմանապէս ստեղծագործութեան մաս կազմելով միտքն ալ ենթակայ է երկուութեան, հետեւաբար ունի երկու բեւեռներ: Բեւեռներէն մին կը գործէ Ֆիզիքական մարմնի ուղեղին հետ եւ խորհուրդներ կու տայ, իսկ

միևս բեւեռն ալ «սրտի» միջոցաւ եւ զգացումներ կու տայ: Սիրտ բառը չակերտի մէջ է որովհետեւ իսկութեան մէջ միտքը ֆիզիքական սրտի միջոցաւ չէ որ կը գործէ այլ ջղային դրութեան հետ որ կը կոչուի ճառագայթաձեւ ջղահիւսք (solar plexus), որ կը գտնուի սրտին շատ մօտ: Կան ոմանք, որ այս մտային «մարմինը» բաժնած են երկու զատ զօրութեան «մարմիններու» եւ մին կը կոչեն «մտային» իսկ միւսն ալ «զգացական»: Վերել ըսինք թէ միտքը կը կառավարէ ֆիզիքական մարմինը, ուրեմն ի՞նչ է որ կը կառավարէ միտքը: Մարդուն յաջորդ զօրութեան «մարմինը» իր անհատականութիւնն է, որ այլ կենդանիներ՝ անասուններ չունին: Ան ալ երկուութեան ենթակայ է եւ ունի երկու բեւեռներ, մին դրական իսկ միւսն ալ ժխտական: Կը թուի թէ այս երկու բեւեռները ունին իրարմէ տարբեր յաճախականութեամբ թրթռացումներ: Անհատականութիւնը ունի ազատ կամք, դատելու ու գատելու կարողութիւն, որոնք կը գործեն մարդուն իմացականութեամբ: Ոմանք իմացականութիւնն ալ կը համարեն զատ զօրութեան «մարմին» մը: Անտարակոյս ասոնց բոլորն ալ Ս. Հոգիի ներկայութեան արդիւնքներն են, որովհետեւ պէտք չէ մոռնալ թէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, հետեւաբար ամէն ինչ Աստուծոյ զանազան արտայայտութիւններն են: Ուրեմն այս բոլորը իմաստաւորողն ալ մարդուն Հոգին՝ Քրիստոսի՝ ներկայութիւնն է իր մէջ, որ մարդուն վերջին եւ ամենաբարձր յաճախականութիւն ունեցող զօրութեան մասն է: Քրիստոս՝ Աստուծոյ Որդին՝ Աստուծոյ փառքը Ս. Հոգիի զօրութեան ֆիզիքականին մէջ ներկայութիւնն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը եւ Ես եմ աշխարհի լոյսը»: Ուրեմն Քրիստոսի ներկայութիւնն է որ կը կենդանացնէ մարդուն ֆիզիքական մարմինը իսկ Աստուծոյ գիտակցութիւնն է, որ կը լուսաւորէ միտքը ու իմացականութիւնը:

Այս տեղեկութեան հիման վրայ ուսումնասիրենք մարդուն միտքը: Ան կը կառավարէ ֆիզիքական մարմինը եւ ան կը կառավարուի մարդուն անհատականութեան կողմէ: Մարդուն միտքը մարդուն ամենակարեւոր եւ ամենալաւ ընկերն է, բայց ան նաեւ կարող է ըլլալ մարդուն ամենավատ թշնամին: Միտքը կարող է անձը փրկութեան՝ յաւիտենական կեանքի առաջնորդել բայց ան նաեւ կարող է զայն մահ տանիլ: Ուրեմն ուրկէ կը ծագի այս տարբերութիւնը: Ինչպէս վերեւ գրուած է մարդուն անհատականութիւնը ունի երկու բեւեռներ: Դրական բեւեռը բարձր յաճախականութեամբ զօրութիւնը հաղորդութեան մէջ է Հոգիին՝ Քրիստոսի հետ, իսկ ժխտական բեւեռը ցած յաճախականութեամբ զօրութիւնը կը ներկայացնէ մարդուն «Ես»-ը: Պէտք է մոռնալ թէ զօրութեան ազդավայրին մէջ բոլոր նման յաճախականութիւն ունեցող զօրութիւններ, այսինքն իրարու հետ ներդաշնակ զօրութիւններ իրար կը քաշեն, իսկ անոնք որոնք ներդաշնակ չեն իրար կը վանեն: Անհատականութիւնը ունի ազատ կամք որոշելու թէ որ բեւեռը պիտի կառավարէ իր միտքը: Իր «Ես»-ը՝ այլ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Որովհետեւ Աստուած մարդուն ազատ կամք տուած է, չի պարտադրէր որ անձը գործէ կամ ապրի ըստ Իր փափաքին, այլ միայն կը յանձնարարէ կամ կը զգուշացնէ: Միւս կողմէն «Ես»-ը նենգաւոր է եւ խաբեբայ կ'օգտագործէ ամէն տեսակի համոզումներ օգտագործելով մարդուն իմացականութիւնը եւ հարկաւ սխալ տրամաբանութիւններով: Ան նաեւ մարդուն կու տայ ցանկութիւններ եւ հաճոյքներու հետապնդում: Իր ցած յաճախականութեամբ ան կապուած կ'ըլլայ նիւթին, հակում կ'ունենայ դէպի արտաքին աշխարհին: Միթէ նիւթն ալ ցած յաճախականութեամբ զօրութենէ յառաջ է՞ եկած: Միթէ նման թրթռացումի յաճախականութիւն ունե-

ցող գորութիւններ մագնիսի նման իրար չե՞ն քաշեր: Հակառակ որ միտքը կառավարողը մարդուն անհատականութիւնն է, ընդհանուր առմամբ կը թուի թէ ան իր միտքին գերին եղած է: Մարդուն միտքը, որ ուղեղին միջոցաւ կը գործէ մարդուն նաեւ յիշողութիւն կու տայ: Ինչպէս վերեւ գրուած է Աստուծոյ գիտակցութիւնն է որ կը «լուսաւորէ» միտքը եւ անհատը գիտակից կ'ընէ իր բոլոր խորհուրդներուն, զգացումներուն եւ արտաքին աշխարհին, որոնց ինք գիտակից կ'ըլլայ շնորհիւ իր Ֆիզիքական մարմնին հինգ զգայարանքներուն: Անտարակոյս Աստուծոյ գիտակցութիւնը անհուն է, հետեւաբար կարող ենք ըսել թէ Աստուած ամենագէտ է: Մարդուն ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս անհատին «թէ՛ անցեալը, թէ՛ ներկան եւ թէ՛ ալ նոյնիսկ ապագան» գիտէ: Անցեալ եւ ապագայ պատրանքային են եւ ճշմարտութեան մաս չեն կ'ազմեր: Աստուած միայն ներկային մէջն է: Մարդուն միտքն է որ կը ստեղծէ անցեալը եւ ապագան: Մարդու ուղեղը դժբախտաբար կը սահմանաբակէ յայտնաբերուած գիտակցութեան մակարդակը: Հետեւաբար անհատն ալ շատ մը անցեալի յուշերը այլեւս չի յիշեր եւ ապագայէն ալ բնաւ լուր անգամ չունի, միայն կրնայ երեւակայութիւններ ունենալ: Բոլոր այն անցեալի յուշերը որ անհատին միտքին մէջ են բայց ինք անոնց յիշողութենէն զուրկ է, անոնք չեն անհետացած: Անոնք միտքին մէջ կը կազմեն անձին բնոյթը: Կ'ըսենք թէ անոնք անձին ենթագիտակցութեան մէջ են: Ժշմարտութիւնը այն է թէ մարդուն յայտնաբերած գիտակցութիւնը մէկ է, այլ միտքն է որ լրիւ չէ լուսաւորուած գիտակցութեամբ: Արդեօք աւելի ճիշդ պիտի ըլլա՞ր ըսել «միտք եւ ենթագիտակցական միտք» քան թէ «գիտակցութիւն եւ ենթագիտակցութիւն» Անգլերէնի մէջ հետեւեալը կ'ըսուի. «subconscious mind» եւ ոչ

«subconsciousness»: Այլ, արդե՞օք Հայերէնը աւելի ճիշդ է, գիտակցութիւնը այն բաժինն է որ մարդ կարող է յայտնաբերել եւ ենթագիտակցութիւնն ալ մնացեալ մասը որուն Քրիստոս տեղեակ է բայց ոչ մարդը:

Ուրեմն, որպէսզի մարդ իր կեանքը պատշաճ կերպով կարողանայ ապրիլ, անտարակոյս իր մարմինէն զատ, թէ իր միտքը եւ թէ ալ գիտակցութիւնը անհրաժեշտ են: Մարդուն իմացականութիւնը որ մարդուն անհատականութեան տրամաբանելու կարողութիւնը կու տայ, հետեւաբար նաեւ դատելու ու զատելու կարողութիւնը, կը գործածէ մարդուն թէ միտքը եւ անշուշտ նաեւ գիտակցութիւնը: Առանց իմացականութեան ազատ կամք ունենալ կարելի պիտի չըլլար: Մարդոց իմացականութիւններն ալ փոփոխակ են եւ անձէ անձ կը տարբերին: Անհատին ունեցած իմացականութեան որակն ալ կախեալ է իր ուղեղին յայտնաբերած մակարդակէն: Այս նիւթին մասին ստորեւ յաւելեալ տեղեկութիւն պիտի տրուի: Իմացականութեան նպատակը մարդուն համար գիտութիւն ամբարեւն է: Անտարակոյս ամէն ինչի որ մարդ տեղեակ կ'ըլլայ իրեն համար գիտութիւն մըն է: Կարելի է ըսել թէ մարդ երեք գլխաւոր գիտութիւններու տէր կրնայ ըլլալ: Ասոնցմէ առաջինը այն գիտութիւնն է որ ուրիշներու կողմէ մեզի տրուած է: Անտարակոյս ասոնց մեծ մասը փաստերու վրայ հիմնուած տեղեկութիւններ են որոնք «ճշմարտութեան» մաս կը կազմեն: Ասոնք այն գիտութիւններն են որ դպրոցը կը սորվինք: Եթէ իսկապէս «ճշմարտութեան» մաս կը կազմեն կարելի է զանոնք դասաւորել իբրեւ երկրորդ մակարդակի գիտութիւն: Նոյնիսկ ասոնց մէջ անգամ շատ մը սխալ տեղեկութիւններ կրնան ըլլալ: Իբրեւ օրինակ Նիւթօնի բնագիտութեան օրէնքներէն մին. «կարելի չէ նիւթ ստեղծել կամ անհետացնել, այլ կարելի է միայն անոր

երեւոյթը փոխել»։ Իսկ հիւլէական ռումբի գիւտէն վերջ այդ օրէնքը փոխուեցաւ։ Հիմա օրէնքը կ'ըսէ. «կարելի է չէ զօրութիւն ստեղծել կամ անհետացնել, այլ կարելի է միայն անոր երեւոյթը փոխել»։ Բայց ուրիշներու տուած տեղեկութիւններուն մէջ շատ սուտ եւ ճշմարտութեան հետ կապ չունեցող տեղեկութիւններ կան որոնք մարդ կ'ընդունի իբրեւ ճշմարտութիւն։ Պէտք է մոռնալ թէ նման տեղեկութիւններու հաւատալով եւ զանոնք իւրացնելով մարդ ամենամեծ սուտերը ինք իրեն կ'ըսէ։ Ընդհանուր առմամբ նման սխալ տեղեկութիւններ աւելի հասարակաց են երբ տեղեկութիւնները կը պատկանին կրօնքի մը կամ հոգեւոր կեանքի։ Շնորհիւ նման սխալ գիտութիւններու մարդիկ յանուն Աստուծոյ պատրաստ են նաեւ ահռելի ոճիրներ գործել։ Երկրորդ մակարդակի գիտութիւնը կը պատկանի արտաքին աշխարհին որոնք կը սորվինք դպրոցական կեանքի մէջ եւ մէկ մասն ալ անձնական փորձառութեամբ կը ստանանք մեր հինգ զգայարանքներէն եկած փորձառական տեղեկութիւններէն։ Անտարակոյս ասոնց բոլորն ալ անհրաժեշտ են որպէսզի մեր աշխարհիկ կեանքը պատշաճ կերպով ապրինք։ Երրորդ մակարդակի գիտութիւնը չի վերաբերիր արտաքին աշխարհին, այլ՝ ներքին աշխարհին։ Պէտք է մոռնալ թէ արտաքին աշխարհը, որ մենք ճշմարտութիւն ըլլալ կը համարենք, իսկութեան մէջ ան ալ պատրանքային է։ Ուրեմն ամենավեհ գիտութիւնը «ճշմարտութեան» գիտութիւնն է, որ կարելի է զայն գիրքերէ սորվիլ։ Այլ ան միայն-ու-միայն փորձառական գիտութիւն մըն է։ Անտարակոյս այս գիտութեան փորձառութիւնը չ'ունեցած պարտ ենք նախ որոշ գիտութիւն մը ամբարել երկրորդ աստիճանի վրայ։ Այս վերջինը կ'ըլլայ միայն դրդապատճառը որ ձգտինք նաեւ բարձր գիտութեան։ Ահա՛ աս էր, որ Յիսուս մեզի յորդորեց ու

սորվեցուց ընել՝ Աստուածայայտնութիւնը մեր մէջ իրականացնել: Այս գիտութիւնը «ներկայ»-ին գիտութիւնն է: Ան ամէն ինչի միականութեան գիտութիւնն է եւ Աստուածային երանութեան գիտութիւնն է: Յիսուս՝ մարդու Որդին շատ մը կերպերով մեզի ցոյց տուաւ թէ կարելի է նման գիտութեան տէր ըլլալ: Յիսուս Իր աշակերպութեամբ եւ Իր գործած «հաշփներով» մեզի ցոյց տուաւ կարելիութիւնը յաջողելու եւ նման գիտութեան տէր ըլլալ: Ինք ըսաւ թէ աշակերտը պէտք է վարդապետին պէս ըլլայ, նաեւ ըսաւ թէ Իր ըրածներէն աւելի մեծ բաներ կրնանք ընել: Ինչո՞ւ չենք ընել: Երբ մարդ կը ձգտի նման գիտութեան եւ զայն անձնական փորձառութեամբ ստանալու համար իր կեանքին մէջ կը հետապնդէ կատարելութեան ուղին, իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն ալ դռները՝ խակրաները կը բանայ եւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւնը կը ներգործէ աւելի բարձր յաճախականութիւն ունեցող զօրութեամբ եւ անձն ալ կը ստանայ Ս. Հոգիի շնորհները: Անոնց մաս կը կազմէ նաեւ իմաստութիւնը: Իմաստութիւնը կը լուսաւորէ մարդուն իմացականութիւնը եւ անոր կու տայ պատշաճ կերպով տրամաբանելու եւ զոհ չըլլալ «Ես»-ին կողմէ յօրինուած տրամաբանութեանց: Ճիշտ տրամաբանելու կարողութեամբ ալ անհատին ազատ կամքին կողմէ տրուած բոլոր որոշումերն ալ կ'ըլլան ըստ Աստուծոյ կամքին: Իմաստութիւնը մեր գիտցած ստեղծագործութիւնը տակաւին չսկսած առաջին ստեղծագործութիւնն էր: Առակաց գիրքին մէջ (Ը:22-23) իմաստութիւնն է որ կըսէ. «Տէրը զիս ստեղծեց իր ճանապարհին սկիզբը՝ իր գործերուն համար, յաւիտենականութենէն ալ առաջ ստեղծեց զիս: Ան զիս ծնաւ սկիզբին, երկրին ստեղծումէն ալ առաջ»:

Այս ուղղութեամբ պատշաճ է նաեւ կարդալ «Յափշտակութիւն» խորագրեալ է. գլուխը:

Իբրեւ կարճ ամփոփում մը մարդուն գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան՝ ան որ Քրիստոս ըսաւ. «Ես եմ աշխարհի Լոյսը», մարդուն արտայայտած փոքր մի մասնիկն է: Այդ փոքր գիտակցութեան նպատակն է անհուն գիտակցութեան փորձառութիւնը ունենալ: Աս կը նմանի մարդուն մոմ մը վառելուն, որպէսզի սենեակը քիչ մը լուսաւորէ եւ կարող ըլլայ գոց վարագոյրը տեսնել ու գտնել եւ զայն բանալով՝ Արեւին պայծառ լոյսով, սենեակը ամբողջութեամբ լուսաւորել: Հարկաւ այս փոխաբերականին մէջ սենեակը կը ներկայացնէ մարդը ինք: Մոմին լոյսը իր յայտնաբերած ճղճիմ գիտակցութեան մակարդակը եւ արեւին պայծառ լոյսով լուսաւորուիլն ալ իր գիտակցութեան մակարդակի բարձրացումին, որով ինք կարող կ'ըլլայ «Ճշմարտութիւնը» պատրանքէն զանազանել: Եւ ահա՛ աս է մարդուն կեանքին նպատակը:

Մարդուն խորհուրդները անընդհատ՝ շարժանկարի մը նման կը զբաղեցնեն մարդուն միտքը: Այդ խորհուրդները ընդհանուր առմամբ մարդուն ունեցած, ականատես եղած աշխարհիկ փորձառութիւններէն կախեալ են: Ինչպէս շարժանկար մը կը դիտենք ուր ահռելի պատերազմներ ցոյց կը տրուին, կամ սիրաբանութեան պատմութիւններ ... միթէ անոնցմէ չենք ազդուիր: Միթէ մեր աշխարհիկ կեանքն ալ նոյնը չէ՞: Նոյնն է, որովհետեւ ան ալ շարժանկարի մը նման պատրանքային երազ մըն է:

Պարտ ենք մենք մեր քունէն արթննալ ու վարագոյրը բանալ ու երազողը տեսնել:





Ե

ՀՈՍ ԵՒ ՀԻՄԱ



ՀՈՍ ԵՒ ՀԻՄԱ

Շատ հաւանական է այս գլուխին վերնագիրը շատերուն զարմանք պատճառէ: Բուն նիւթին չսկսած նախ պատշաճ է որոշ տեղեկութիւն մը տալ եւ բացատրել թէ ինչ կը նշանակեն «Հոս»-ը եւ «Հիմա»-ն: Երբ մենք մեր ներկայ գիտակցութեան մակարդակով այս աշխարհին մէջ կապրինք տեղեակ ենք «երկուութեան»: Նմանապէս «Հոս»-ը եւ «Հիմա»-ն ալ մաս կը կազմեն երկուութեան: Մեզի համար այդ երկուութիւնը կը թուի ճշմարտութիւն մը ըլլալ:

«Հոս»-ը կը պատկանի միջոցին (space) եւ «Հիմա»-ն ալ՝ ժամանակին: Ըստ Ս. Գիրքի Առակաց Ը:22-23 համարներուն ուր իմաստութիւնն է որ կը «խօսի», ամէն բանէ առաջ իմաստութիւնը ստեղծուած էր: Իսկ ստեղծագործութեան յաջորդ հանգրուանին Աստուծոյ «Բան»-ին՝ Ս. Հոգիի զօրութեան յայտնուելուն հետ միասին թէ միջոցը եւ թէ ալ ժամանակը ի յայտ եկան: Բայց եթէ ընդհանուր ստեղծագործութիւնը Հայր Աստուծոյ երազն է միջոցը եւ ժամանակն ալ երազին մաս կազմելով պէտք են պատրանքային ըլլալ: Միթէ չէ՞ գրուած. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է»: Միթէ մեր երազներուն բոլոր պարունակութիւններն ալ պատրանքային չե՞ն: Այսօր, նոյնիսկ ամբողջական բնագիտութեան գիտուններն ալ անդրադարձած են այս իրողութեան եւ իրենց պրպտումներու հետեւանք եզրակացուցած են յաջորդ երեք իրողութիւնները.

ա- Ընդհանուր տիեզերքը, ներառեալ բոլոր աստղերը, աշխարհ եւ մարդկութիւն բոլորն ալ ողջագիր (holograph) են:

բ- Ժամանակը յարաբերական է:

գ- Միջոցը յարաբերական է:

Նիւթը կազմուած է հիւլէներէ, որոնց մասնիկները կազմուած են ենթահիւլէական մասնիկներէ, որոնք

կազմուեած են զօրութենէ: Ըստ գիտուններու հասած եզրակացութեան, ենթահիւլէական մասնիկները կ'անհետանան եւ կը գոյանան հազար անգամ մէկ երկվայրկեանի մէջ: Ուրեմն պէտք է զարմանանք թէ նիւթեղէն ստեղծագործութիւնը ողջագիր մըն է:

Յարաբերական ըլլալուն իմաստը ի՞նչ է: Անոնք մնայուն չեն այլ կը փոխուին ըստ պատշաճի: Այն ինչ որ ճշմարտութիւն է անփոփոխ է: Նոյնիսկ մեր մարմիններն ալ ժամանակի ընթացքին փոփոխութեան չե՞ն ենթարկուիր: Յարաբերականութեան նկատմամբ գիտութեան տուեալներէն պատշաճ է որոշ կարճ տեղեկութիւններ տալ: Փաստուած է թէ ժամանակը յարաբերական է արագութեան հետ: Քանի արագութիւնը աւելնայ ժամանակը այդքան աւելի կամաց կ'ընթանայ: Իսկ երբ արագութիւնը հասնի լոյսի արագութեան ժամանակը այլեւս չ'անցնիր ու միայն ներկան կը մնայ: Ֆոթօնը որ լոյսի նիւթեղէն արտայայտութիւնն է եւ լոյսի արագութեամբ կ'ընթանայ, միանքամայն տիեզերքի ամէն տեղը կ'ընայ ըլլալ: Լոյսը թէ նիւթի եւ թէ ալ զօրութեան ալիքի ձեւով մեզի կը յայտնուի, ըստ մեր գիտակցութեան ուշադրութեան: Ժամանակը յարաբերական է նաեւ ձգողական ուժին (gravitational force) հետ: Զգողական ուժը որքան տկար ըլլայ ժամանակն ալ համեմատաբար աւելի արագ կ'ընթանայ: Ժամանակին յարաբերականութեան յատկութիւնը կը թուի նաեւ կախում ունենալ գիտակցութեան մակարդակէն եւ ոչ միայն արագութենէն կամ ձգողական ուժէն: Քանի գիտակցութեան մակարդակը բարձրանայ ժամանակն ալ այդքան կամաց կ'ընթանայ: Կարելի է ըսել թէ Աստուծոյ գիտակցութիւնը անհուն է, հետեւաբար Աստուծոյ համար ժամանակը չ'անցնիր եւ Աստուած միայն ներկային մէջն է, հետեւաբար ժամանակի ենթակայ չէ: Տիեզերքի մէջ ամէն ինչ շարժման մէջ է: (Տես «Տիեզերական

Օրէնքները» գիրքիս Գլուխ Բ.-ի մէջ «Յաւերժական Այլափոխման Օրէնքը»): Ան որ կայուն (static) է, գոյութիւն չի կրնար ունենալ, հետեւաբար ժամանակը որ չ'անցնիր, գոյութիւն չի կրնար ունենալ: Ուրեմն Աստուծոյ համար ժամանակը գոյութիւն չունի եւ Աստուած յաւիտենական է: Յաւիտենականութիւնը ժամանակի դրութենէ դուրս ըլլալ է եւ ոչ՝ անվերջ ժամանակ: Ոչինչ կրնայ գոյատեւել անվերջ ժամանակ, որովհետեւ ամէն ինչ որ ստեղծուած է, սկիզբ մը ունի եւ ամէն ինչ, որ սկիզբ մը ունի, ունի նաեւ իր վախճանը: Ժամանակն ալ ստեղծուած ըլլալով չի կրնար անվերջ ըլլալ: Միայն Աստուած եւ ներկան յաւիտենական են: (Նաեւ կարդալ «Տիեզերական Օրէնքները» գիրքիս Գլուխ Է.-ն «Գիտակցութիւնը եւ Ժամանակը»):

Միջոցը նաեւ ստեղծուած ըլլալով յարաբերական է: Կարելի է այս տեղեկութիւնը աւելի զարմանք պատճառէ քան թէ ժամանակին յարաբերական ըլլալը, որովհետեւ ժամանակի յարաբերական ըլլալը շատերու կողմէ իմացուած նիւթ մըն է, բայց ոչ «միջոց»-ինը: Գիտունները նաեւ փաստած են թէ որեւէ ծաւալ մը ունեցող առարկայ մը, որքան արագ ընթանայ, իր ընթացած ուղղութեան չափը երթալէն կը կարճնայ եւ եթէ արագութիւնը լոյսի արագութեան հասնի այդ չափն ալ «0» կ'ըլլայ: Որեւէ առարկայի մը ծաւալը կ'որոշուի անոր երկանքի, լայնքի եւ բարձրութեան չափերը իրարու հետ բազմապատկելով: Ենթադրենք քառակուսի տուփ մը որուն վերեւ յիշուած երեք չափերն ալ երկուական մէթր են: Ուրեմն տուփին ծաւալը պիտի ըլլայ $2 \times 2 \times 2 = 8 \text{ m}^3$: Ուրեմն այդ տուփը միջոցին մէջ այդքան տեղ կը գրաւէ: Եթէ այդ տուփը լոյսի արագութեամբ ընթանայ չափերէն մին «0» պիտի ըլլայ: Իսկ ծաւալն ալ կ'ըլլայ $2 \times 2 \times 0 = 0 \text{ m}^3$: Առանց ծաւալի տուփ մը միջոցին մէջ գոյութիւն չի կրնար ունենալ: Ուրեմն կը թուի թէ տուփին գրաւած միջոցն ալ կ'անհետանայ:

Ինչո՞ւ նման տեղեկութիւն մը տալ: Ըստ Ս. Գիրքին մէջ գրուած որոշ համարներու սխալ մեկնաբանութեան, կազմուած են որոշ յարանուանութիւններ, որոնք կը հաւատան թէ մահէն «դարեր» վերջ՝ ապագային իրենց մարմինները յարութիւն պիտի առնեն եւ «վեր» պիտի յափշտակուին ու միջոցին մէջ ուրիշ վայր մը՝ «երկինք»-ը անվերջ ժամանակ երջանիկ պիտի ապրին: Անտարակոյս իրենց այս մեկնաբանութիւնը արդիւնքն է իրենց սխալ ըմբռնումին, որով անոնք կը կարծեն թէ այս աշխարհիկ կեանքը ճշմարտութիւն մըն է: Եւ ահա՛, իրենց համար աս է յաւիտենական կեանքը:

Ըստ վերեւ տրուած տեղեկութեան, եթէ թէ՛ ժամանակը եւ թէ՛ ալ միջոցը յարաբերական են եւ գոյութիւն չունին՝ պատրանքային են, թէ յաւիտենականութիւնը եւ թէ՛ ալ «երկինք»-ը պէտք է թէ՛ հիմա եւ թէ՛ ալ հոս ըլլան: Որովհետեւ Աստուած ժամանակի ենթակայ չէ միայն ներկային մէջն է, հետեւաբար ներկան ալ յաւիտենական է եւ յաւիտենական կեանքն ալ պէտք է ըլլայ ներկային մէջ եւ ոչ ապագային մահէ վերջ: Իսկութեան մէջ եթէ մէկ կամ երկու երկվայրկեան մտածենք մեր ամբողջ կեանքը Ֆիզիքապէս միայն ներկային մէջ կ'ապրինք, բայց մտայինօրէն մեր ընդհանուր կեանքին 90 առ 100-ը կ'ապրինք անցեալի յուշերով եւ ապագայի ակնկալութիւններով: Նաեւ կ'ըսենք թէ Աստուած ամէն տեղ է: Արդեօք մենք մեր ըսածին կը հաւատա՞նք: Եթէ կը հաւատանք եւ «երկինք»-ի կեանքը Աստուծոյ հետ ըլլալ է եւ երանութեան մէջ, մենք ուր որ ենք Աստուած ալ հոն է: Հետեւաբար երկինքը միջոցին մէջ զատ վայր մը չէ: Ուրեմն երկնային յաւիտենական կեանքը պէտք է ըլլայ ներկային մէջ՝ «հիմա» եւ ուր որ ենք՝ «հոս»: Ան գիտակցութեան մակարդակի աւելի բարձր մակարդակի յափշտակուիլն է ու ճշմարտութիւնը՝ Աստուած տեսնելն է:

Եթէ Աստուած ժամանակի եւ միջոցի ենթակայ չէ, ըսել է թէ Աստուած ժամանակի եւ միջոցին մէջ չէ: Ուրեմն ի՞նչպէս կ'ըլլայ որ կ'ըսենք. «Աստուած ամէն տեղ է»: Արդեօք այս տեսակէտը սխալ է՞, ապա թէ ոչ մեր հասկացողութիւնը սխալ է: Արդեօք կարելի չէ՞ որ ժամանակը եւ միջոցը Աստուծոյ մէջ ըլլան: Եթէ ստեղծագործութիւնը Աստուծոյ երազն է, երազին մէջի ամէն ինչ պէտք է Աստուծոյ «միտքին» մէջ ըլլան: Հետեւաբար ժամանակը եւ միջոցն ալ Աստուծոյ մէջ են: Բայց մենք ժամանակի եւ միջոցի մէջ ենք: Ուրեմն եթէ ժամանակը եւ միջոցը Աստուծոյ մէջ են եւ մենք ալ ժամանակի եւ միջոցին մէջ ենք, պէտք է որ մենք ալ Աստուծոյ մէջ ըլլանք: Եթէ Աստուծոյ մէջ ենք ի՞նչու Աստուած ասդին ու անդին կը փնտռենք: Մենք արդէն Աստուծոյ հետ ենք, միայն պարզապէս մեր խաւարամտութեան հետեւանք այս իրողութիւնը մեր գիտակցութենէն կը խուսափի: Մեզի կը մնայ միայն մեր «հոգեկան քունէն» արթննալ: Յաւիտենական կեանքը մահէն վերջ հոս ու հոն երթալ չէ այլ ան պարզապէս «քունէն» արթննալ է, ան պարզապէս անդրադարձ մըն է, ան հասկնալ է թէ մենք արդէն Աստուծոյ հետ ենք եւ միշտ Աստուծոյ հետ եղած ենք: Ադամ եւ Եւայի օրերէն ի վեր մեր «Ես»-ին ազդեցութեան տակ, նկատմամբ այս ճշմարտութեան, մոռացկոտութեան ենթարկուած ենք եւ ըստ այնմ խաւարին մէջ է որ կ'ապրինք, կը գոյատեւենք: Եթէ իսկապէս կը ձգտինք յաւիտենական կեանքի պարտ ենք Յիսուսի հաւատալ: Իսկ Յիսուսի հաւատալ կը նշանակէ իր բոլոր սորվեցուցածները պատշաճ կերպով հասկնալ եւ ոչ անոնց մակերեսային բառացի հասկացողութեամբ, զանոնք իւրացնել եւ մեր կեանքերուն մէջ ալ կիրարկել, որպէսզի արժանի ըլլանք աւելի բարձր գիտակցութեան տէր ըլլալ եւ ճշմարտութիւնը «տեսնել» ու հասկնալ, անդրադառնալ:

Երբեմն անգիտակցաբար մենք մեզ
կը սահմանափակենք,
անօգուտ արգելակներով որ կը
կաշկանդէ մեր յառաջդիմութիւնը:
Ներկայ պատկերը շատ զօրաւոր
փոխաբերական իմաստով
մեզի ցոյց կու տայ ինչպէս կը
կաշկանդուինք
երբ ազատ ենք յառաջանալու: Մեզի
կը յիշեցնէ բոպէի մը համար քայլ մը ետ
կենալ եւ կացութիւնը վերաքննել ու
անդրադառնալ
թէ դուռը բաց է, աճելու ու
յառաջդիմելու ճամբան
մեզի համար բաց է:





Զ

ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՒՄ,
ՎԵՐԱՄԱՐՄՆԱՅՈՒՄ,
ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ



ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՒՄ, ՎԵՐԱՄԱՐՄՆԱՅՈՒՄ, ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Այս չորս փորձառութիւնները, որոնց երկուքը հասարակաց չեն համայն մարդկութեան, կը թուին սերտ կապ մը ունենալ «մահուան» հետ, կամ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել գիտակցութեան մակարդակի փոփոխութեան հետ որ ընդհանուր առմամբ կը ներկայացնէ գիտակցութեան բացակայութիւնը:

Այս գլուխին մէջ այս չորս փորձառութիւնները մէկ-մէկ նկատողութեան պիտի առնուին եւ անոնց մասին պատշաճ տեղեկութիւններ պիտի տրուին:

Ի՞նչ է «ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՒՄ»-ը:

Երբ անհատ մը ծանր հիւանդ է եւ ընդհանրապէս հիւանդանոցի մէջ, երբեմն իր հիւանդութեան հետեւանք զանազան պատճառներով իր սիրտը կը դադրի «զարնելէ», ասոր կը յաջորդէ շնչառութեան դադրիլը եւ անհատն ալ կը մեռնի: Բժիշկները իր վրայ կ'աշխատին, որպէսզի զայն դարձեալ վերակենդանացնեն: Անոնք նախ արուեստականօրէն շունչը իրենք կուտան եւ կուրծքին վրայ ճնշելով կը ջանան սիրտը սեղմել որպէսզի գոնէ քիչ մը արիւն շրջի, մինչեւ որ իրենց երակներէն տուած կամ ասեղով շիտակ սրտին մէջ տրուած դեղերուն ազդեցութեամբ սիրտը անգամ մը եւս սկսի ինքնին աշխատիլ եւ կենսատու արիւնը մարմնին մէջ շրջիլ: Անոնք երբեմն կը յաջողին եւ երբեմն ալ ոչ: Այս տարբերութեան մասին ստորեւ պատշաճ բացատրութիւն մը պիտի տրուի:

Արեան շրջումը անհրաժեշտ է կեանքը ապահովելու համար: Այդ արիւնն է, որ իր թոքերէն ստացած թթուածինը մարմնի բոլոր բջիջներուն կը փոխանցէ: Երբ արեան շրջումը դադրի, այսինքն սիրտը կենայ

միայն երեք կամ չորս երկվայրկեան, անհատը մարելու պէս կը զգայ եւ եթէ սիրտը դարձեալ չի սկսի «զարնել», հինգ երկվայրկեանէն անհատը կը մարի: Նոյն իսկ եթէ մէկ կամ երկու վայրկեան յետոյ սիրտը դարձեալ սկսի «զարնել»՝ աշխատիլ ու արիւնը չըջիլ, ժամանակ մը ետք անհատը իր գիտակցութիւնը կը վերագտնէ ու կ'արթննայ: Մարմնի ամենափափուկ բջիջները ուղեղի բջիջներն են: Առանց արեան շրջման հինգ վայրկեանէն արդէն ուղեղը մնայուն ձեւով լուրջ վնասի ենթարկուած կ'ըլլայ: Իսկ ամենատոկուն բջիջներն ալ մորթի բջիջներն են եւ նոյնիսկ անհատին մահէն վերջ 24 ժամէ աւելի տակաւին կը բազմաճան եւ անհատին մագեբը (մորուքը) կ'երկնայ:

Մահուան շատ մը պատճառներ կան, ոմանք կարելի է գուշակել հիւանդութեան բռնած ընթացքը նկատի առնելով: Բայց երբեմն ալ որոշ անձեր յանկարծամահ կ'ըլլան երբ իրենք առաջուց առողջ էին: Ընդհանուր առմամբ նման մահերու պատճառները կ'ըլլան կամ «սրտի տագնապ» (heart attack) կամ ալ արեան դոնդող (blood clot): Անոնք պատճառ կրնան ըլլալ որ սիրտը, որուն բոլոր բջիջները ներդաշնակօրէն ելեկտրական հոսանքի շղաքումով միասնաբար կը պրկուին եւ արիւնը մայր շնչերակին մէջ կը փոխանցեն, կ'ենթարկուին ելեկտրական «փոթորիկի մը» եւ չեն կարողանար պատշաճօրէն պրկուիլ եւ արիւնը չըջիլ:

Նոյնիսկ երբ բժիշկները հիւանդին վրայ կ'աշխատին զայն վերակենդանացնելու համար, կարելի է ըսել թէ անհատը մեռած է: Անհատին ոգին մարմինէն բաժնուած է: Շատ պատմութիւններ իմացած ենք, որ երբ բժիշկները մեռնողին մարմինն վրայ կ'աշխատէին անհատը զանոնք ձեղունէն դիտած է եւ երբ յաջողած են զայն վերակենդանացնել, յաջորդ օր հիւանդը իրենց ըրած բոլոր գործունէութիւնները իրենց պատմած է,

զարմանքի մատնելով բժիշկները, որով իրենց համար այն մարմինն վրայ որ իրենք կ'աշխատէին որեւէ գիտակցութիւն չունէր:

Վերադառնանք մեր վերեւ յիշուած հարցումին: Ինչո՞ւ բժիշկները, եթէ ամէն ինչ պատշաճ կերպով գործադրած են, երբեմն կը յաջողին անհատը վերակենդանացնել եւ երբեմն ալ կը ձախողին: Կեանքի եւ մահուան որոշումը Աստուծոյ որոշումն է: Նոյնիսկ երբ սիրտը կը կենայ, ըստ Աստուծոյ կամքին եթէ անձը տակաւին պէտք չէ մեռնի, Աստուած զայն վերակենդանացնողն ալ կը յայտնէ եւ անոր յաջողութիւն կու տայ: Յենեւով Ս. Գիրքին, տեսնենք թէ ինչ է յաջողութեան եւ ձախողութեան տարբերութիւնը:

«Մինչչեւ Կորժանեալ իցե լար արժաթոյն, եւ խորդակեալ մանեակ ոսկոյն. եւ մանրեալ ասփորն յաղթեալն, եւ ընկրկեալ անիւն ի Գոթն» (Ժողովողին ժԻ: 6)

Դեռ արծաթէ լարը չփրթած՝ Ոսկիէ բաժակը չջախջախուած՝ Սափորը աղբիւրին քով չփշրուած՝ եւ ջրհորին վրայի անիւը չջախջախուած:

Մարդուն ոգին արծաթեայ լարով (թելով) մարմնին հետ հաղորդակցութեան մէջ է: Մինչայդ որ այդ թելը չէ փրթած, ոգին կարող է մարմին ետ վերադառնալ: Կ'ըսուի թէ ոմանք գիշերները իրենց քունի ընթացքին իրենց մարմինը կը թողուն եւ այլ վայրեր կ'այցեկեն եւ յետոյ մարմնին ետ կը վերադառնան: Անոնք այս բոլորը կ'ընեն որովհետեւ արծաթեայ թելը միշտ երկուքը իրար կապած է: Իսկ երբ այդ թելը մէյ մը փրթի, անկարելի կ'ըլլայ անհատը վերակենդանացնել, անհատն ալ կը մեռնի: Երբ անհատը կը վերակենդանանայ, ոչ իր մարմինը կը մեռնի, ոչ ալ իր անհատականութիւնը: Մահը ընթացք մըն է, որ երբեմն տեւէ հինգ վայրկեան եւ նոյնիսկ քիչ մըն ալ աւելին:

ԻՆՁ Է «ՎԵՐԱՄԱՐՄՆԱԾՈՒՄ»-Ը:

Վերամարմնացումը մեռնող անձի մը ոգիին դարձեալ աշխարհի մէջ ծնիլն է: Աշխարհ ետ վերադառնալն է իբրեւ մանուկ: Ճիշդ է թէ այսօր ան Քրիստոնեայ եկեղեցիներուն հաւատացած աւանդապաշտութեան մաս չի կազմէր: Բայց այդ ըսել չէ թէ ան Ս. Գրային հանգամանք չունի: Այս ուղղութեամբ յանձնարարելի է նախ կարդալ «Լոյս 'ի Լուսոյ» խորագրեալ գիրքիս մէջ «Ի՞նչ է Վերամարմնացումը» խորագրեալ Թ. գլուխը (էջեր 277-300): Անոնք մեծամասնութեամբ հոս պիտի չկրկնուին:

Նախ հասկնանք թէ ի՞նչ է որ կը վերամարմնանայ: Մարդ ունի մարմին մը, միտք մը, իմացականութիւն մը, անհատականութիւն մը եւ Հոգի մը: Իր Ֆիզիքական մարմինը նիւթէ կազմուած է. ահա՛ աս է իմաստը «Աստուած մարդը հողէն շինեց»-ին: Մահուան պատճառով մարմինն ալ հողին ետ կը վերադառնայ: Մարդուն Հոգին Աստուծոյ զօրութեան՝ Ս. Հոգիի Ֆիզիքականին մէջ գտնուող մասն է, որ Աստուծոյ փառքը՝ Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Քանզի ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինն է՝ Աստուծոյ Որդին է: Մարդուն Հոգին անբիծ ու սուրբ է: Մարդուն Հոգին անմահ է: Մնացեալները՝ մարդուն միտքը, իմացականութիւնը եւ անհատականութիւնը, բոլորն ալ միայն զանազան յաճախականութիւններ ունեցող զօրութեան «մարմիններ» են: Որովհետեւ մարդ ազատ կամք ունի, իր ապրելակերպով՝ իր կենցաղով՝ իր խորհուրդ, խօսք ու արարքներով այդ զօրութիւններուն թրթռացումի յաճախականութիւնները փոխելու կարողութիւնը ունի: Դժբախտաբար ան այդ փոփոխութիւնները ընդհանուր առմամբ անգիտակցաբար կ'ընէ, որովհետեւ իր միտքը միշտ զբաղ է զանազան՝ ընդհանուր առմամբ անպէտ խորհուրդներով, ցանկութիւններով, ակնկալութիւն-

ներով ...: Ան հագուազիւտ կը գործածէ իրեն շնորհուած ազատ կամքը: Նոյնիսկ եթէ ան օգտագործէ իր ազատ կամքը, հարց պէտք է տալ թէ «որո՞ւ» թելադրութիւններուն վստահելով այդ որոշումները ինք կ'առնէ: Մարդուն միտքը իր լաւագոյն ընկերն է եւ նոյն ժամանակ նաեւ ամենավատ թշնամին: Այս տարբերութիւնը կախում ունի թէ «ով» է որ կը կառավարէ այդ միտքը: Անտարակոյս մարդուն միտքը կառավարողը իր անհատականութիւնն է: Ստեղծագործութիւնը երկուութեան վրայ հիմնուած է, որովհետեւ ան պատրանքային է: Միայն Աստուած միականութիւն ու ճշմարտութիւն է: Հետեւաբար ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան ենթակայ է: Մարդուն անհատականութիւնը, որ ներկայացուած է իբրեւ լուսաբեր հրեշտակը, Աստուածայայտնութիւնը իրականացնելու համար անհրաժեշտ էր: «Լուսաբեր» անունին իմաստն ալ «Լոյսը բերող» է: Ուրեմն մարդուն անհատականութիւնն ալ ունի երկու բեւեռներ, մին դրական իսկ միւսն ալ ժխտական, որ կը ներկայացնէ անհատին «Ես»-ը: Անհատականութեան դրական բեւերը մարդուն իր ճշմարիտ էութեան՝ իր Հոգիին՝ Քրիստոսի հետ յաղորդակցութեան մէջ է, իսկ ժխտական բեւեռն ալ կը կարծէ թէ ինք անկախ կարող է ինքզինք կառավարել ու կ'անտեսէ Հոգիէն եկած բոլոր յորդորները ու ինք կը ստեղծէ «չարը» եւ կը կառավարէ անհատին միտքը:

Մարդուն խորհուրդ, խօսք ու արարքները զօրութեան թրթռացումի փոփոխութեամբ տեղեկութիւններ կը տեղաւորեն իր անհատականութեան զօրութեան մէջ: Պէտք չէ մոռնալ որ խօսքերը եւ արարքները նախ ծագում կ'առնեն խորհուրդներէ եւ ամէն մի խորհուրդ ուղեղին մէջ որոշ ելեկտրական հոսանքի հետեւանքն է եւ ամէն ելեկտրական հոսանք իր շուրջը կը ստեղծէ մագնիսային ազդեւիւր մը զանազան թրթռացումի

յաճախականութիւններով որոնք կախում ունին անհատին ունեցած խորհուրդէն: Անհատին իր կեանքի ընթացքին ստեղծած այդ բոլոր տեղեկութիւնները կը մնան եւ մաս կը կազմեն իր զօրութեան «մարմինն»: Երբ մարդ կը մեռնի մարմինն մահուան հետ կը մեռնի նաեւ իր միտքը, իր իմացականութիւնը եւ նաեւ իր անհատականութիւնը: Ճիշտ ասոր համար Յիսուս մեզի սորվեցուց. «Մեղքի թոշակը մահ է»: Բայց մարդու Հոգին անմահ է եւ իր հետ այդ տեղեկութիւնը նաեւ առնելով որ կը կոչենք «ոգի» կը բաժնուի մարմինէն եւ կը վերադառնայ իր ակին Հայր Աստուծոյ: Մարդուն ոգին ազատած «Ես»-ի բռնապետութենէ, անմիջապէս կ'անդրադառնայ գործուած բոլոր սխալներուն եւ բարեշրջման եւ բարելաւման համար, որպէսզի «պարտքերը» վճարէ կ'որոշէ դարձեալ աշխարհ վերադառնալ: Միթէ Յիսուս մեզի չէ ըսած. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Այդ մեղքերը բոլոր վատ խորհուրդ, խօսք ու արարքներու զօրութեան մէջ դրած տեղեկութիւններն են: Միթէ Ս. Հոգին Աստուծոյ զօրութիւնը չէ՞: Միթէ Ֆիզիքական ստեղծագործութիւնն ալ այդ զօրութեամբ չէ՞ կազմուած: Ահա՛ աս է վերամարմնացումը: Աշխարհը «դպրոց» մըն է որպէսզի ոգին ինքզինք կամաց-կամաց բարեւաւէ, սրբացնէ եւ ի վերջոյ անձն ալ յաջողի Քրիստոս իր մէջ յայտնաբերել: Ուրեմն աշխարհիկ կեանքերը հոգեւոր յառաջացման եւ բարեւաւման միջոցներ են: Ոգին յօժարաբար ինքզինք դրական եւ ժխտական երկուութեան կ'ենթարկէ որպէսզի անձը սորվի իր ազատ կամքը պատշաճ կերպով օգտագործել, ծառայելու միայն իր կեանքի բուն նպատակին որ է Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնել: Նոյնիսկ ան տակաւին աշխարհ ետ չվերադարձած ինք կ'որոշէ ու կը զատէ իր հայրն ու մայրը իր ապագայ կեանքի ընկերը նոյնիսկ իր զաւակները եւ որ

երկրի, որ կրօնքի եւ ինչ միջոցորտի մէջ ծնիլը, որոնք բոլորն ալ պատշաճ են իր «պարտքերը վճարելու» եւ ինքզինք բարեւաւելու: Այս բոլորը կ'ըլլան զօրութեան թրթռացումի յաճախականութիւններու իրարու հետ ունեցած ներդաշնակութեան համաձայն: Բայց աւա՛ղ, ոգին կը ստանայ նոր միտք մը, նոր իմացականութիւն մը եւ նոր անհատականութիւն մը: Այս տուեալները պատահական չեն այլ համապատասխան ու ներդաշնակ իր ոգիին մէջի տեղեկութեան հետ. եւ ահա՛ աս է պատճառը տարբերակ ծնունդներու: Եթէ ըստ ըսուածին մարդ միայն մէկ կեանք ունենար, պէտք չէ՞ որ ամէն մարդ հաւասար ծնէր, ապա թէ ոչ Աստուած անարդար կ'ըլլար: Քաւ լիցի: Ուրեմն մարդուն վերամարմնացումը կ'ըլլայ ըստ իր ոգիին մէջի տեղեկութեան, այսինքն ըստ իր ճակատագրին եւ այդ ճակատագրին ճարտարապետն ալ մարդ ինքն է: Այս ճակատագիրը օտար լեզուներու մէջ ճանցուած է իբրեւ «գարմա» (karma): Դժբախտութիւնը հոն է որ երբ ոգին կը վերամարմնանայ ան կը ստանայ նոր միտք մը եւ նոր ուղեղ մը համապատասխան իր ճակատագրին, բայց անոնք ոչ մէկ յիշողութիւն կ'ունենան անցեալի կեանքերէն եւ կ'ամբարեն նոր պարտքեր: Այս հիման վրայ վերամարմնացման եւ մահուան «անիւր» կը թուի շարունակ դառնալ: Ճիշդ ասոր համար էր, որ Յիսուս քարոզեց եւ սորվեցուց կատարելութեան ուղին որպէսզի յաջողինք մեր կեանքին բուն նպատակը իրագործել եւ Քրիստոս մեր մէջ յայտնաբերել: «Երբ յաջողինք Աստուծոյ տաճարին մէջ սիւն կ'ըլլանք եւ Աստուծոյ անունը մեր ճակտին վրայ կը գրուի եւ այլեւս դուրս չենք ելլեր»: (Յայտնութիւն Գ:12) Ահա՛ աս է փրկութիւնը՝ վերջ տալ վերամարմնացումներուն եւ միանալ ու լուծուիլ Աստուծոյ մէջ: Միականութեան մաս կազմել, արդէն ենք բայց պարտ ենք այդ ճշմարտութեան նաեւ անդրադառնալ:

ԻՆՁ Է «ՎԵՐԱՏԻՆ ԾՆՈՒՆՊԵՐ»-Ը:

Վերիստին ծնունդի մասին Յիսուս մեզի սորվեցուց իր Նիկողեմոսին ըսած խօսքով: Անտարակոյս Յիսուսի շատ մը սորվեցուցածները պէտք է նկատի առնուին իրենց վերացական իմաստներով եւ ոչ պարզապէս անոնց բառացի իմաստներով: Նիկողեմոս դժբախտաբար անոնց միայն բառացի իմաստը հասկըցած էր եւ զարմացած թէ ինչպէս իր մօր արգանդը պիտի մտնէր եւ դարձեալ ծնանէր: Վերստին Ծնունդի մասին նախորդ գիրքերէս «Հոգեւոր Խորհրդածուլթիւններ (Ա)» խորագրեալ գիրքիս երկրորդ գլուխին մէջ վերեւի նոյն վերնագիրով գրութեան մէջ լայնածաւալ տեղեկութիւն տրուած է այս նիւթին նկատմամբ (էջեր 289-297): Յանձնարարելի է այդ գրութիւնը նախ կարդալ, որով անոնք մեծամասնութեամբ հոս պիտի չկրկնուին:

Յիսուս Նիկողեմոսին ըսաւ թէ մարդ պէտք է «Հոգիէն եւ Զուրէն» ծնանի: Ասոր իմաստը լաւ հասկնալու համար նախ պէտք է հասկնանք թէ ինչեր են «Հոգիին» եւ «Զուրին» փոխաբերական իմաստները:

Մարդուն «Հոգին» Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութիւնն է իր մարմնին մէջ: Միթէ այդ մարմնին համար չէ՞ գրուած, թէ ան «Աստուծոյ տաճար»-ն է: Հոգին մարդուն ճշմարիտ էութիւնն է: Այն ինչ որ մարդ կը կարծէ թէ ինք է՝ իր մարմինը, իր միտքը, իր անհատականութիւնը, բոլորն ալ պատրանքային են եւ ճիշդ անոր համար ալ մահկանացու են: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ Ճշմարտութիւնը»: Այդ Հոգին է որ կը կենդանացնէ թէ միտքը, թէ մարմինը եւ թէ ալ մարդուն անհատականութիւնը: Ան մարմնին կեանք կու տայ: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ կեանքը»: Ան նաեւ մարդուն միտքը կը լուսաւորէ եւ անոր գիտակցութիւն (consciousness) կու տայ: Միթէ Քրիստոս

Հէ՞ ըսած. «Ես եմ աշխարհի լոյսը»: Քրիստոս մարդուն անհատականութեան ալ պարգեւած է Աստուածային յատկութիւն՝ ազատ կամք եւ ստեղծագործ ըլլալու կարողութիւնը: Միթէ Հէ՞ գրուած. «Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին նման»: Իսկ մարդ ի՞նչ կ'ընէ. ան իր ազատ կամքով կը փարի իր անհատականութեան ժխտական բեւեռին՝ իր «Ես»-ին եւ ամբողջութեամբ կ'անտեսէ դրական բեւեռը որ հաղորդութեան մէջ է իր ճշմարիտ էութեան հետ, հետեւաբար կ'անտեսէ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Մարդուն մարմինը կը ծնի իր մօրմէն: Ինչ ամսուայ ընթացքին մայրն է որ կը կերպէ այդ մարմինը իր զաւկին համար: Անհատը մօտաւորապէս երկու տարեկանին կը գիտակցի իր «Ես»-ին եւ ընդհանուր առմամբ այդ «Ես»-ն է որ «ծնունդ» կու տայ իր մտքին ու հետեւաբար իր բնոյթին եւ այնուհետեւ անձն ալ ըստ այնմ կ'ապրի իր կեանքը, ըստ այնմ կը ստեղծէ իր կեանքը, կենցաղը եւ իր կեանքի բոլոր պատահարները:

Ուրեմն Յիսուսի ըսած «Հոգիէն վերստին ծնիլը» մտքի ուղղութեան փոփոխութիւնն է մարդուն իր անհատականութեան ժխտական բեւեռէն դէպի դրական բեւերը, իր «Ես»-էն դէպի իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս: Աս պարզապէս կը հաւատամ ըսելով չ'ըլլար այլ շատ զօրաւոր կամքի, հաւատքի, համբերութեան եւ յարատեւութեան կը կարօտի:

Ի՞նչ է ջուրին փոխաբերական իմաստը: Զուրը միշտ մի քանի փոխաբերական իմաստներ ունեցած է: Ըստ յաջորդ համարին ան Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը կը ներկայացնէ.

«Եւ երբ ինչ մաքուր գէտ կենդանի ջրոյ՝ սառնաքեմակ որ
Ելանէր յաշտոսն Լապտաշոյ Եւ Գառնն»: (Յայրենութիւն ԻԲ: 1)
«Նաեւ ցոյց տուաւ ինծի կեանքի ջուրի գետ մը՝
բիւրեղի պէս փայլուն, որ կը բխէր Աստուծոյ ու
Գառնուկին գահէն»:

Ջուրը նաեւ մաքրութիւն կը ներկայացնէ քանի որ առանց ջուրի կարելի չէ որեւէ բան մաքրել: Իսկ ջուրին երրորդ մէկ փոխաբերական իմաստն ալ մարդուն զգացումներն են: Այս վերջին փոխաբերական իմաստն ալ Յիսուս մեզի սորվեցուց իր հետեւեալ արարքով. երբ Ան նաւուն մէջ կը քնանար Իր աշակերտները փոթորիկէն ընկղմելու եւ խեղդուելու վտանքէն վախնալով զինք արթնցուցին: Յիսուս ալ փոթորիկը հանդարտեցուց: Հովերը կը ներկայացնեն խորհուրդներու փոթորիկները իսկ ջուրերուն ալիքներն ալ զգացումներուն փոթորիկները: Յիսուս այս նոյն գաղափարը մեզի յայտնեց երբ Ինք ջուրին վրայ քալեց, ցոյց տալով թէ ինք իր զգացումներուն վրայ բացարձակ իշխանութիւն ունէր: Իսկ Պետրոս ալիքներէն վախցաւ եւ ընկղմեցաւ: Պետրոս իր զգացումներուն վրայ իշխանութիւն չունէր, հետեւաբար վախցաւ:

Ուրեմն ի՞նչ է իմաստը «Ջուրէն վերստին ծնելուն»: Քանի որ ջուրը Ս. Հոգիի զօրութիւնը կը ներկայացնէ, ջուրէն վերստին ծնունդ ունենալն ալ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւն ստանալն է՝ Ս. Հոգիի շնորհները ստանալն է՝ անձին միտքին բարձր գիտակցութեան յափշտակուիլն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ դուռը» եւ դարձեալ «Ես ձեզի Հօրմէս Ս. Հոգին պիտի զրկեմ»: Բայց որպէսզի այս բոլորը ըլլան եւ Քրիստոս անձին յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն պարգեւէ անձը պէտք է ինքզինք արժանի ընէ: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Աստուած չի ծաղրուիր (խաբուիր)»: Հետեւաբար այս բոլորը պարզապէս ուղելով կամ բաղձալով չեն ըլլար: Նախ անհատը պէտք է անտեսէ իր «Ես»-ը, այսինքն «Հոգիէն վերստին ծնած ըլլայ»: Աս ինքնապատրաստութեան առաջին քայլն է: Իսկ մնացեալ քայլերը հասկնալու համար պարտ ենք նկատողութեան առնել ջուրին միւս փոխաբերական իմաստները:

Վերեւ ներկայացուած ջուրին երկրորդ փոխաբերական իմաստը մաքրութիւնն է: Այս մաքրութիւնը Փիզիքականը չէ այլ մտային մաքրութիւնն է: Ի՞նչ կը նշանակէ մտային մաքրութիւն: Յիսուս աս ալ մեզի սորվեցուց, Ան ըսաւ. «անոնք որոնք սուրբ սիրտ ունին Աստուած կը տեսնեն»: Յիսուսի խօսած Արամերէն լեզուի մէջ «միտք» բառը ներկայացնող գատ բառ մը չկայ, այլ «սիրտ» բառը թէ «միտք»-ի եւ թէ ալ «սիրտ»-ի իմաստներով կը գործածուէր: Ուրեմն, «սուրբ սիրտը» խորհուրդներէ եւ զգացումներէ սրբուած մաքրուած միտքը կը ներկայացնէ: Այս վերջինն ալ ինքնաբերաբար ակնարկութիւն մըն է վերեւ ներկայացուած ջուրին երրորդ փոխաբերական իմաստին, որ անձին զգացումները կը ներկայացնէ: Միտքը սրբել մաքրել, այսինքն «սուրբ սիրտ» կերտել դիւրին ձեռնարկ մը չէ եւ կը կարօտի ծայրահեղ հաւատքի, յոյսի, համբերութեան եւ յարատեւութեան եւ անհուն սիրոյ հանդէպ ամէն ինչի՝ բնութիւն, բոյս, անասուն եւ համայն մարդկութեան: Որովհետեւ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմինը» կը ներկայացնէ, այդ բոլորը կ'ըլլան ճշմարիտ Աստուածապաշտութիւնը ու մարդուն ընդհանուր կեանքն ալ կ'ըլլայ շարունակական աղօթքի կենցաղ մը: Բոլոր գործունէութիւնները կ'ըլլան իբրեւ Աստուծոյ ծառայութիւն ու Աստուածապաշտութիւն:

Ուրեմն իբրեւ ամփոփում պէտք է հասկնանք թէ «վերստին ծնունդը» պարզապէս դարձեալ մկրտուիլ եւ «ես Յիսուս Քրիստոս իմ մէջս կը հրաւիրեմ» ըսել չէ, ինչպէս նաեւ. «Ես Յիսուս Քրիստոսի կը հաւատամ, որ Ան Աստուծոյ միածին Որդին է եւ իմ մեղքերուս համար մեռաւ, հետեւաբար փրկուած եմ» ըսել ալ չէ: Այլ ան շատ լուրջ ինքնափոփոխութիւն մըն է, միտքի ուղղութեան փոփոխութիւն մըն է արտաքին աշխարհիկ հետապնդումներէ դէպի ներքին Քրիստոսին:

ԻՆՁ Է «ՅԱՐՈՒԹԻՒՆ»-ը:

Ընդհանուր առմամբ մարդիկ կը կարծեն թէ յարութիւնը աշխարհի վերջը Յիսուս Քրիստոսի վերստին՝ երկրորդ գալուստին իրենց մարմիններն ալ իրենց թաղուած գերեզմաններէն վերակազմուած դուրս պիտի ելլեն պիտի դատուին եւ կամ երկինք պիտի ղրկուին անվերջ ժամանակ երջանիկ ապրելու կամ ալ՝ դժոխք անվերջ ժամանակ տառապելու: Անտարակոյս նման հասկացողութիւն մը երախայական է:

Նախ պէտք է հասկնանք թէ ինչ է, որ յարութիւն կ'առնէ: Անտարակոյս ասոր պատասխանը պիտի ըլլայ անհատը: Բայց անհատը, ոչ իր մարմինն է, ոչ իր միտքը եւ ոչ ալ իր իմացականութիւնը: Անտարակոյս այդ բոլորը իրեն կը պատկանին եւ ինք իր ընդհանուր աշխարհիկ կեանքի ընթացքին զանոնք կ'օգտագործէ եւ կը գործածէ: Անտարակոյս կան շատ մարդիկ, որոնք նոյնացած իրենց մարմիններուն եւ միտքերուն հետ կը կարծեն թէ անոնք զիրենք կը ներկայացնեն եւ ըստ այնմ ալ կ'ապրին: Իսկ մարդուն ճշմարիտ էութիւնը, որ կը կենդանացնէ մարմինը ու գիտակցութիւն կու տայ միտքին, Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութիւնն է իր մէջ: Քրիստոս անհատին Հոգին է եւ անմահ է: Ուրեմն ի՞նչ է որ կը մեռնի եւ Աստուծոյ փափաքով եւ շնորհքով յարութիւն կ'առնէ: Մարդ նաեւ ունի անհատականութիւն մը՝ «Լուսաբեր հրեշտակը»: Այդ անհատականութիւնը նաեւ ունի ազատ կամք: Ան կոչուած է Լուսաբեր որ կը ներկայացնէ «Լոյսը բերող», հետեւաբար կարող է «Լոյսը»՝ Քրիստոս իր մէջ յայտնաբերել: Բայց ան նաեւ իր ազատ կամքով կրնայ որոշել իր «Ես»-ը նստեցնել Աստուծոյ գահին վրայ եւ անհատը, այսինքն ինքզինք կորուստի առաջնորդել: Մարդուն ճշմարիտ էութիւնը՝ ներքին Քրիստոսն է որ կը կենդանացնէ նաեւ մարդուն անհատականութիւնը:

Մարդուն մահուան ընթացքին ինչպէս մարմինը եւ միտքը կը մեռնին կը մեռնի նաեւ մարդուն անհատականութիւնը:

Մարդուն անհատականութիւնը Աստուծոյ կողմէ մարդուն տրուած յաւելեալ զօրութիւն մըն է, որ անասունները չունին: Անհատականութիւնն ալ ստեղծագործութեան մաս կազմելով ենթակայ է երկուութեան եւ ունի երկու բեւեռներ: Դրական բեւեռը հաղորդութեան մէջ է իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ, իսկ թիտական բեւեռն ալ կը ներկայացնէ իր «Ես»-ը: Որովհետեւ մարդ անհատականութիւն մը ունի զայն կը կոչենք «անհատ» եւ որովհետեւ ընդհանուր առմամբ մարդ կ'ապրի ըստ իր «Ես»-ին կամքին զայն նաեւ կը կոչենք «անձ» եւ «անձնասէր» բառն ալ «անձ» բառէն կը սերի, միթէ անձնասիրութիւնն ալ «Ես»-ասիրութիւն չէ⁶: Մարդուն Հոգին չըջապատուած մարդուն անհատականութեան զօրութեամբ կը ներկայացնէ մարդուն Ոգին: Հետեւաբար մարդուն Ոգին ալ անմահ է: Բայց երբ մարդ կը մեռնի, մարմնին, միտքին եւ իմացականութեան հետ միասին կը մեռնի նաեւ մարդուն անհատականութիւնը, բայց անոր փոքր մէկ մասը կը մնայ Հոգիին հետ շղթայուած: Այս մասը այն բոլոր տեղեկութիւններն են որ մարդ իր կեանքի ընթացքին իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներով ամբարած է իր զօրութեան մէջ: Այդ փոքր մասնիկը կը ներկայացնէ մարդուն ճակատագիրը:

Ուրեմն ի՞նչ է որ յարութիւն կ'առնէ: Աստուած իբրեւ պարգեւ մարդուն, որ յաջողած է իր աշխարհիկ կեանքի ընթացքին լիովին կատարել իրեն տրուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնները, այսինքն յայտնաբերել Քրիստոս իր մէջ, այն ինչ որ Յիսուս յաջողեցաւ ընել, կը յարուցէ անոր անհատականութիւնը, այս անգամ առանց բեւեռացումի: Այդ

անհատականութիւնը կազմող բարձր որակով զօրութիւնը կը լուծուի Աստուծոյ զօրութեան հետ եւ մաս կը կազմէ «միականութեան»: Այդ ոգին այլեւս վերամարմնանալու պէտքը չի զգար: Երբեմն յօժարաբար կը վերամարմնանայ Յիսուսի նման օգնելու համայն մարդկութեան:

Կարելի է որոշ անձեր համամիտ չըլլան նման գաղափարի մը, որովհետեւ անոնք մարմնին յարութեան կը հաւատան: Ուրեմն ուսումնասիրենք թէ ինչ տեղեկութիւններ ունինք յարութեան մասին: Անտարակոյս միակ տեղեկութեան ակը Ս. Գիրքն է: Շատ լաւ գիտենք թէ Յիսուս խաչին վրայ մեռաւ եւ ըստ մեզի ըսուածին երեք օր յետոյ յարութիւն առաւ: Յիսուսի մահը եւ յարութիւնը առաջնեց գուշակուած էր: Յիսուս ինք ըսաւ թէ մարդու որդին պիտի մեռցուի եւ երեք օր վերջ յարութիւն պիտի առնէ: Ան նաեւ ըսաւ. «Քանդեցէք այդ տաճարը եւ երեք օրէն զայն պիտի կանքնեցնեմ»: Ուրեմն այս բոլորը բացայայտ կը թուին ըլլալ, որ Յիսուս իր մահէն երեք օր ետք յարութիւն առաւ: Եւ բոլոր Քրիստոնեայ եկեղեցիները յարութեան տօնը երրորդ օրը կը տօնեն: Յիսուս ուրբաթ երեկոյ արեւամուտէն առաջ մեռաւ եւ թաղուեցաւ: Շաբաթ օր արեւամուտէն առաջ կ'ըլլայ մէկ օր եւ կիրակի առաւօտ ալ մէկ-ու-կէս օր: Յիսուս քանի՞ օրէն յարութիւն առաւ: Բայց եթէ Աւետարանը ուշադրութեամբ կարդանք պիտի տեսնենք թէ ըստ Յիսուսի ըսածին, ինք՝ իր անհատականութիւնը յարութիւն առաւ խաչին վրայ մեռած օրը եւ ոչ մէկ-ու-կէս կամ երեք օր վերջ: Ան իր աջ կողմը խաչուողին ըսաւ. «Այս երեկոյ դուն ինծի հետ դրախտը պիտի ըլլաս»: Յիսուս չըսաւ. «Երեք օր ետք դուն ինծի հետ դրախտը պիտի ըլլաս»: Ուրեմն կը թուի թէ Յիսուսի աջ կողմի խաչեալն ալ նոյն օրը յարութիւն առաւ: Կ'ըսուի թէ

Յիսուս իր կեանքի ընթացքին երեք հոգի յարուց: Յիսուս զանոնք յարո՞ւց թէ վերակենդանացուց: Պէտք է մոռնալ թէ Յիսուս ինք գոնէ երկուքին համար ըսած էր. «Մի՛ լաք, ան մեռած չէ, հապա կը քնանայ»: Նաեւ պէտք է մոռնալ թէ Քրիստոս յայտնուած էր Յիսուսի մէջ եւ Աստուած ամենակարող է: Եթէ Յիսուս մեռած օրը յարութիւն առաւ ի՞նչ էր իմաստը իր ըսածներուն՝ գուշակութիւններուն նկատմամբ երեք օրուան: Այդ մակարդակի հասած անձ մը, որ կ'արժանանայ Աստուծոյ պարգեւած յարութեան, ունի շատ բարձր յաճախականութիւն ունեցող զօրութեան «մարմին» մը, որ նաեւ թափանցած է իր Փրկիչական մարմնին մէջ եւս: Նման զօրութեամբ կազմուած մարմին մը չի տարբադադրուիր եւ հողին չի վերադառնար այլ երեք օրուայ մէջ նիւթը զօրութեան կը փոխուի ու մարմինը կ'անհետանայ: Միթէ նիւթը զօրութենէ յառաջ չէ՞ եկած: Յարութիւն առնող անհատը Աստուծոյ միականութեան մաս կը կազմէ, ինք Քրիստոսի մէջ լուծուած է եւ կարողութիւնը ունի իր զօրութեան մարմինը ուզած ատեն երեւելի ընել: Միթէ Յիսուս իր յարութենէն վերջ 40 օրուայ ընթացքին քանիցս անձերու չերեւցա՞ւ եւ զինք նախ չճանչցան: Ան գոց դուռէն ներս մտաւ: Անսովոր արագութեամբ աշակերտներէն առաջ վայր հասաւ: Ան նաեւ ըսաւ իրեն չղաչիլ, որովհետեւ իր մարմինը տեսանելի զօրութեան մարմին էր: Ասոնք բոլորն ալ փաստ են թէ իր յարուցեալ մարմինը առաջուայ նիւթական մարմինը չէր: Ինք իր տեսանելի զօրութեան մարմինով յայտնուեցաւ միայն երրորդ օրը: Վստահ չենք կրնար ըլլալ, բայց շատ տարօրինակ պիտի ըլլար եթէ ինք տեսնուէր իր «Փրկիչական»՝ տեսանելի զօրութեան մարմինով երբ իր մեռեալ Փրկիչական մարմինը տակաւին գերեզմանին մէջ էր: Նաեւ մեզի ըսուած է թէ գերեզմանին մուտքը փակող

քարը գլորեցաւ եւ Յիսուսի յարուցեալ մարմինը գերեզմանէն դուրս ելաւ: Այս հասկացողութիւնն ալ սխալ է, որովհետեւ Աւետարաններէն մէկուն մէջ գրուած է թէ կիները գերեզման եկան եւ քարին գլորելուն ահանատես եղան եւ տեսան թէ գերեզմանը պարապ էր: Գերեզմանին մէջ միայն Յիսուսի մարմինն չուրջ փաթթուած սաւանները գտան: Եթէ Յիսուսի մարմինը գերեզմանէն դուրս ելաւ, իր հագած հագուստները ո՞րեկէ գտաւ: Եթէ ինք կարող է հագուստները ոչնչութենէ ի յայտ բերել, արդեօք նաեւ կարող չէ՞ իր մարմինն ալ ի յայտ բերել:

Ս. Գիրքին մէջ արդեօք կա՞ն ուրիշ անձեր եւս որոնց անհատականութիւնները յարութիւն առած ըլլան: Յիսուս իր աշխակերպութեան ատեն խօսեցաւ Մովսէսի եւ Նդիաշի հետ: Անոնք ալ տեսանելի զօրութեան մարմինով ներկայացան: Շատ լաւ գիտենք թէ Մովսէսի մարմինն ալ անհետացած էր եւ երբ զայն փնտռեցին, ոչ մարմինը գտան ոչ ալ գերեզմանը: Իսկ Նդիա «հրեղէն կառքով երկինք բարձրացաւ: Միթէ հուրը զօրութիւն չէ: Վստահ եմ Նդիա «րօքէթ»ով անջրպետ չգնաց: Ըստ մեր Եկեղեցւոյ երգերէն «Ի վերին Երուսաղեմ» երգին, Ենովք ալ վերին Երուսաղեմ կը գտնուէր եւ երգին մէջ նաեւ գրուած է «աղաւնակերպ», որ զօրութիւնը կը ներկայացնէ: Միթէ Ս. Հոգին, որ Աստուծոյ զօրութիւնն է Յիսուսի մկրտութեան աղաւնակերպ չէ՞ր երբ իջաւ Յիսուսի վրայ:

Յանձնարարելի է կարգաւ նաեւ «Աւետարանի Խորհուրդները Ա - Յիսուսի Կեանքէն դրուագներ» խորագրեալ գիրքիս մէջ «Յիսուսի Թաղումը եւ Յարութիւնը» խորագրեալ բաժինը (էջեր 158-169):



Է

ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ



ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Գիրքին մէջ գրուած յափշտակութիւնը, ընդհանուր առմամբ սխալ մեկնաբանուած ու հասկնցուած է: Կը կարծուի թէ աշխարհին վերջը բարիները ետ աշխարհ պիտի գան, իրենց մարմինները գերեզմաններէն դուրս պիտի ելլեն եւ իրենց ոգիին հետ միանան եւ ակնթարթի մը մէջ «վեր» երկինք պիտի յափշտակուին: Նման մեկնաբանութիւն մը երախայական կը թուի ըլլալ: Պէտք է մոռնալ թէ Յիսուս ինք բացայայտ ըսած է թէ առականերով կը խօսի, որպէսզի «իմանալով չհասկնան ու տեսնելով չտեսնեն»: Հետեւաբար Ս. Գիրքին մէջի տրուած տեղեկութիւնները պէտք է իրենց բառացի իմաստներով մեկնաբանել:

Եթէ մարդ արարած իր ամենօրեայ կեանքի պատահարները ուշադրութեամբ ուսումնասիրէ եւ անոնցնէ որոշ դասեր սորվի, իրեն համար կարելի կ'ըլլայ ամբարել որոշ գիտութիւն, որ նաեւ իրեն տայ կարդացածները աւելի լաւ հասկնալու, մեկնաբանելու եւ ըմբռնելու կարողութիւնը: Մարդ ամէն օր յափշտակութեան փորձառութիւնը կ'ունենայ բայց այդ փորձառութեան յափշտակութիւն մը ըլլալուն չ'անդրադառնար: Մարդ չի կրնար ինքզինք քնացնել, բայց ինք կրնայ ինքզինք քնանալու պատրաստել: Քունը ակընթարթի մը մէջ իր գիտակցութիւնը կը յափշտակէ մեր արթուն կոչած մակարդակէն աւելի ցած մակարդակի մը: Նոյնն է նաեւ առաւօտուն արթննալը երբ անհատին գիտակցութիւնը ակնթարթի մը մէջ քունի մակարդակէն կը յափշտակուի արթուն մակարդակին: Նաեւ պէտք է մոռնալ թէ ամէն գիտակցութեան մակարդակի փոփոխութեան մարդուն համար ճշմարտութիւնն ալ կը փոխուի: Խորունկ քունի մէջ մարդ ոչ ինք իրմէ գիտակից է, ոչ ալ՝ աշխարհէն: Երազի գիտակցութեան մակարդակին իրեն համար իր երազը իր ճշմարտու-

Թիւնն է եւ ինք իր արթուն կեանքէն տեղեակ անգամ
չէ: Միայն երբ գիտակցութեան մակարդակը արթուն
մակարդակի բարձրանայ, այսինքն ինք երազէն արթն-
նայ, այն ատեն կը հասկնայ թէ իր ցած գիտակցու-
թեան միջոցին ճշմարտութիւն կարծածը միայն պատ-
րանքային երազ մըն էր ու կ'ըսէ թէ այս արթուն
կեանքը ճշմարտութիւնն է:

Ուրեմն ի՞նչ է Աւետարանին մէջ գրուած յափըշ-
տակութիւնը: Ան մարդուն գիտակցութեան մակարդա-
կին յանկարծ ակնդարդի մը մէջ շատ աւելի բարձր
մակարդակի մը յափշտակուիլն է: Այս պարագային
մարդուն ճշմարտութիւնն ալ անգամ մը եւս կը
փոխուի: Ինք կը հասկնայ թէ այն կեանքը որ ինք իր
արթուն գիտակցութեան մակարդակ կոչելով կ'ապրէր
ան ալ պատրանքային էր եւ ոչ ճշմարտութիւն եւ ինք
այս անգամ «ճշմարտութեան» փորձառութիւնը կ'ունե-
նայ: Այս «ճշմարտութիւնը» Աստուծոյ՝ ամէն ինչի
միականութեան փորձառութեան գիտակցութիւնն է:
Ինչպէս մարդ չի կրնար ինք զինք քնացնել այլ միայն
կրնայ քնանալու պատրաստուիլ, նմանապէս մարդ
նաեւ ինք չի կրնար իր գիտակցութիւնը աւելի բարձր
գիտակցութեան բարձրացնել: Այդ «յափշտակութիւնը»
Աստուծմէ՝ իր ճշմարիտ էութենէն՝ Քրիստոսէ տրուած
պարգեւ մըն է: Միայն անոնք որոնք կը յաջողին իրենց
կեանքի պարտականութիւնները եւ պատասխանատու-
ութիւնները պատշաճ կերպով կատարել արժանի կ'ըլ-
լան այդ Աստուածային շնորհքին: Մարդ պարտ է ինք
զինք պատրաստել այս արժանելիութեան: Այդ պատ-
րաստութիւնը իրեն տրուած պարտականութիւն ու
պատասխանատուութիւնը լիովին կատարելն է: Ան
կատարելութեան ուղիէն չչեղիլն է: Ան ըստ Աստուծոյ
կամքին ապրիլն է: Ան անձին իր «Ես»-ը ամբողջովին
անտեսելն է: Ան Աստուծոյ իրեն տուած ժառանգը չի

մսխելն ու չվատնելն է: Այդ ժառանգը իր աշխարհիկ կեանքն է: Այդ կեանքին նպատակը Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելն է, ան ինչ որ Յիսուս ըրաւ եւ մեզի ալ յանձնարարեց Իրեն պէս ըլլալ: Ան իր անասնական բնոյթը անտեսել եւ իր մէջ Աստուածային բնոյթը յայտնաբերելն է: Յիսուս մասնաւոր իր աշակերտներուն ցոյց տուաւ Քրիստոսի յայտնութիւնը իր մէջ երբ Ան ալլակերպեցաւ: Ան անոնց ցոյց տուաւ Իր Աստուածային բնոյթը:

Երբ անհատը իր այդ բարձր գիտակցութեամբ փորձառութիւնը ունենայ ամէն ինչի միականութեան, ինք զինք կը տեսնէ ամէն ինչի մէջ, ինք կը լուծուի այդ միականութեան՝ Աստուծոյ մէջ, միթէ ինք ալ «երկինք»-ի կամ դրախտի փորձառութիւնը չէ՞՞ որ կ'ունենայ: Միթէ Աստուած ժամանակի ենթակայ է՞: Բացարձակապէս ոչ: Աստուած միայն ներկայի մէջն է եւ ներկան ալ յաւիտեան է: Հետեւաբար այդ բարձր գիտակցութեան արժանացողն ալ յաւիտենական կեանքի արժանացած կ'ըլլայ: Յաւիտենական կեանքը ապագայի մէջ մարմնին մահէն վերջ չի կրնար ըլլալ, որովհետեւ ապագան, ինչպէս նաեւ անցեալը, պատրանքային են, իսկ ներկան՝ յաւիտենական:

Եթէ Աւետարանին մէջ գրուած յափշտակութիւնը հոս աշխարհի վրայ, երբ տակաւին Փրփրապէս ողջ ենք, չ'ըլլայ, մահէն ետք ամենեւին չի կրնար ըլլալ: Իսկ եթէ մարդ արժանանայ Աստուծոյ այդ շնորհքին, ինք ուզելով կը թողու իր մարմինը եւ իր անհատականութիւնը յարութիւն առած կը «լուծուի» Քրիստոսի մէջ եւ մէկ կ'ըլլայ Աստուծոյ հետ: Ահա աս է Յայտնութեան Գ:12 համարին իմաստը. «Ան որ կը յաղթէ, զանիկա իմ Աստուծոյ տաճարին մէջ սիւն մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ: Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ ...»: Դուրս չելլելն ալ չվերամարմնանալն է:



Փոխանակ հարցնելու թե ես
կեանքէն ի՞նչ կ'ուզեմ,
աւելի ազդեցիկ հարցում մըն է
թե կեանքը ինձմէ ի՞նչ կ'ուզէ:

—Eckhart Tolle

eckhart
teachings

Կեանքիդ մէջ պիտի անդրադառնաս
թե այն բոլոր անձերուն որ կը հանդպիս
նպատակի մը համար է:
Ոսմանք քեզ պիտի փորձեն:
Ոսմանք քեզ պիտի օգտագործեն,
ոսմանք քեզ պիտի սիրեն
եւ ոսմանք քեզ պիտի ուսուցանեն:
Բայց անոնք որոնք իսկապէս կարեւոր են,
անոնք բու մէջդ լաւագոյնը
կը յայտնաբերեն:
Անոնք բացառիկ եւ անզուգական
անձեր են
որ քեզի կը յիշեցնեն
թե կ'արժէ կեանքը ապրիլ:



Ը



ԻՆՉ ԵՆ «ՀՈԳԻՆ» ու «ՈԳԻՆ»



ԻՆՉ ԵՆ «ՀՈԳԻՆ» ու «ՈԳԻՆ»

Շատ մարդիկ այս երկու բառերը. «Հոգի»-ն (spirit) եւ «ոգի»-ն (soul) փոխաբերաբար կը գործածեն: Հայերէն գրաբար լեզուի մէջ երկրորդ բառը երբեմն գրուած է «յ»-ով՝ հետեւեալ ձեւով. «յոգի»: Շատ մը գիրքերու մէջ ալ նոյն գաղափարները երկու բառերովն ալ ներկայացուած են, հետեւաբար մարդիկ ալ շուարած են թէ անոնք ինչ կը ներկայացնեն: Այս երկու բառերուն իմաստներուն տարբերութիւնը լաւ հասկնալու համար այս գիրքին մէջ պատշաճ նկարներով պիտի բացատրուին:

Նախ քան այս բառերուն բացատրութեան չի սկսած պարտ ենք հասկացողութեան գետին մը պատրաստել, թէ ինչի մասին է որ կը խօսինք:

Յաճախ կ'իմանանք հետեւեալ նախադասութիւնը. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է»: Անտարակոյս ասոր հիմքը Յովհաննու Աւետարանն է ուր Քրիստոսի ըսածը գրուած է. «Ես եմ ճշմարտութիւնը»: Եթէ միակ ճշմարտութիւնը Աստուածն է, ուրեմն ի՞նչ են ստեղծագործութեան այդ բոլոր զանազանութիւնները: Անոնք կամ պատրանքային երազ մըն են կամ ալ նոյն Աստուծոյն զանազան արտայայտութիւնները:

Այս գիրքին Ա. գլուխին մէջ ներկայացուած էր թէ՛ ճշմարտութեան եւ թէ՛ ալ Երրորդութեան գաղափարները: Անոնք հոս պիտի չի կրկնուին: Մարդ արարած Հայր Աստուած հասկնալու կարողութիւնը չունի: Բայց Աստուծոյ յայտնութիւնը իբրեւ զօրութիւն, որ Ս. Հոգի կը կոչենք որոշ չափով ըմբռնելի է: Գիտունները անգամ ընդունած են թէ ընդհանուր տիեզերքը զօրութեան ազդավայր մըն է եւ իրենք այդ զօրութիւնը «մուկ զօրութիւն» անուանած են որովհետեւ այդ զօրութեան բնոյթը չեն գիտեր: Այդ զօրութիւնն է, որ խտանալով կազմած է նիւթը՝ պինդ

մարմինը (matter), ենթահիւլէական մասնիկները: Յովաննու Աւետարանն ալ նոյն տեղեկութիւնը կուտայ Ա. գլուխին սկիզբը, ուր գրուած է. «Եւ Բանը մարմին եղաւ»: Բանը (logos)–ը Աստուծոյ զօրութիւնը՝ Ս. Հոգին է եւ այդ Զօրութեան Ֆիզիքական երեւոյթն ալ Աստուծոյ որդին Քրիստոսն է: Ուրեմն ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմինը»՝ Աստուծոյ Որդին՝ կը ներկայացնէ, ուրեմն բոլոր զանազանութիւններն ալ Քրիստոսի զանազան արտայայտութիւններն են: Այս հիման վրայ ամէն ինչ պարզապէս Աստուծոյ զօրութեան արդիւնքն է:

Վերադառնալով մեր նիւթին, ուրեմն մարդուն ներկայութիւնն ալ պարզապէս Աստուծոյ զօրութեան զանազան յաճախականութիւններու հաւաքածոյ մէկ արտայայտութիւնն է: Այս հիման վրայ նկատողութեան առնենք մարդուն կազմուածքը: Նաեւ պէտք է մոռնալ թէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան ենթակայ է:

Կ'ըսուի թէ մարդ ունի եօթը մարմիններ: Կարելի է այս գաղափարը շատերուն զարմանք պատճառէ: Ամէն մարդ տեղեակ է իր Ֆիզիքական մարմինէն: Ան կազմուած է պինդ նիւթէ, որ կազմուած է ամենացած յաճախականութիւն ունեցող զօրութեամբ: Այս մարմինը տեսանելի եւ շօշափելի է: Այս մարմինն ալ երկուութեան վրայ հիմնուած է՝ արու եւ էգ: Մնացեալ միւս վեց մարմինները զօրութեան «մարմիններ»՝ խաւեր են եւ ոչ տեսանելի եւ ոչ ալ շօշափելի: Բայց երբեմն երբ անհատը կը յաջողի իր զօրութեան թէ յաճախականութիւնը եւ թէ ալ որակը բարձրացնել ան երբեմն տեսանելի կ'ըլլայ իբրեւ լուսապսակ անձին գլխուն շուրջ: Երբեմն մէկը կը տեսնենք եւ կ'ըսենք. «Երեսը շնորք կայ», առանց գիտնալու թէ ինչու: Որովհետեւ անգիտակցաբար անոր զօրութեան «մարմ-

նին» փայլը նշմարած ենք:

Ի՞նչէր են այդ մնացեալ վեց զօրութեան մարմինները: Մարդ ունի միտք մը, որ կարելի է կոչել մտային մարմին: Ան ալ երկու բեւեռներ ունի, մին կը գործէ ուղեղին միջոցաւ եւ կուտայ խորհուրդներ, իսկ միւսն ալ «սրտին» միջոցաւ ու կուտայ զգացումներ: Հետեւաբար այս երկուքը զատ զատ կոչուած են «մտային մարմին» եւ «զգացական մարմին»: Մարդ նաեւ ունի իմացականութիւն (intellect), հետեւաբար նաեւ «իմացական մարմին» մը եւս: Այս բոլորը զանազան յաճախականութիւններ ունեցող զօրութիւններու ազդավայրեր են անհատին մէջ: Այդ զօրութիւններու յաճախականութիւնները եւ որակը կախեալ է անհատի կենցաղէն եւ բնոյթէն: Ճիշդ ասոր համար այդ յատկութիւնները անձէ անձ փոփոխ կ'ըլլան: Մարդ նաեւ ունի անհատականութիւն մը: Ըստ Ծննդոց Գիրքին Ա. գլուխին Աստուած մարդը ստեղծեց միւս կենդանիներուն հետ վեցերորդ օրը ու գրուած է թէ. «Աստուած տեսաւ որ բարի է»: Իսկ Բ. գլուխին մէջ մարդուն ստեղծագործութիւնը կրկնուած է, որովհետեւ Աստուած հանգչելէ առաջ մարդուն տուաւ յաւելեալ «զօրութեան մարմին» մը եւս՝ Լուսաբեր հրեշտակը՝ մարդուն անհատականութիւնը: Մարդուն անհատականութիւնը անհրաժեշտ էր ստեղծագործութեան նպատակը իրականացնելու համար: Լուսաբեր կը նշանակէ «Լոյսը բերող»: Մարդուն անհատականութիւնն էր որ պիտի իրականացնէր Աստուածայայտնութիւնը: Զարմանալիօրէն Աստուած չէ ըսած թէ ան «բարի է»: Նաեւ գրուած է թէ Աստուած մարդը ստեղծեց Իր պատկերին նման: Ասոր իմաստը այն է թէ մարդն ալ Աստուծոյ պէս ստեղծագործ է եւ ազատ կամք ունի: Մարդ իր ազատ կամքով կը ստեղծէ իր կենցաղը եւ իր կեանքը: Մարդուն անհատականութիւնն ալ ունի երկու բեւեռներ, մին դրական եւ միւսն

ալ ժխտական: Անհատականութիւնն ալ ունենալով երկու բեւեռներ կը կազմէ յաջորդ երկու զօրութեան «մարմինները»: Դրական բեւեռին զօրութիւնը բարձր յաճախականութիւն ունի եւ ժխտական բեւեռն ալ ցած: Հետեւաբար ժխտական բեւեռը միշտ ֆիզիքականին կը յարի որովհետեւ նիւթն ալ ցած յաճախականութիւն ունեցող զօրութեան արտայայտութիւնն է: Ան կը կազմէ մարդուն «Ես»-ը: Իսկ դրական բեւեռն ալ կը յարի դէպի յաջորդ եւ վերջին զօրութեան մարմնին որ կը կոչենք Քրիստոսի ներկայութիւնը անձին մէջ՝ անհատին Հոգին: Հոգին ամենաբարձր յաճախականութիւնը ունի եւ կը կենդանացնէ միւս բոլորը: Շատեր կ'ըսեն թէ անասունները հոգի չունին բայց մարդ առանձնաշնորհեալ է եւ հոգի ունի: Այս գաղափարն ալ սխալ է: Եթէ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ՝ Ս. Հոգիի զանազան երեւոյթներն են ուրեմն ամէն ինչ անըզգայ նիւթ, բոյս, անասուն ու մարդ բոլորն ալ հոգի ունին: Բայց ճիշդ պիտի ըլլար ըսել թէ անասունները ոգի չունին, որովհետեւ անոնք անհատականութիւն չունին: Անգամ մը եւս այս երկուքին «հոգի» եւ «ոգի»-ին մասին տեղեկութիւն տալէ առաջ պատշաճ պիտի ըլլար «կամքի» մասին կարճ տեղեկութիւն մը տալ:

Ի՞նչ է կամքը: Յաճախ կ'ըսենք ամէն ինչ կ'ընթանայ ըստ Աստուծոյ կամքին: Ո՞վ գիտէ Աստուծոյ կամքը: Աստուած «վերը» նստած աշխարհը չի դիտէր եւ իր կամքին համաձայն որոշումներ չի տար: Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնը ըլլալով հանդերձ, միանգամայն ամենակարող ըլլալով հանդերձ իր կամքը չի պարտադրէր մեր վրայ, այլ միայն մեզ կը զգուշացնէ, կը յորդորէ: Եթէ իր կամքը պարտադրէր մենք ալ ազատ կամք չէինք ունենար: Բայց ի՞նչ է «կամքը»: Ընդհանուր ստեղծագործութիւնը կազմուած է Ս. Հոգիի զօրու-

Թեամբ եւ ան կ'ընթանայ ըստ այդ զօրութեան օրէնքներուն: Ամէն ինչ՝ խորհուրդ, խօսք ու արարք որ այդ օրէնքներուն հետ ներդաշնակ են կ'ըսենք ըստ Աստուծոյ կամքին կը գործէ եւ անձին կեանքն ալ դրախտի կը վերածուի: Բայց եթէ անձը կը գործէ այդ օրէնքներուն դէմ ինք ալ դժոխքի մէջ կ'ապրի: Մարդն ալ ազատ կամք ունենալով ինք կը յօրինէ իր կենցաղին ընթացքին օրէնքները եւ ըստ այնմ կ'ապրի իր կեանքը: Անոնք կրնան ըլլալ ներդաշնակ տիեզերական օրէնքներուն հետ կամ հակառակ անոնց: Ինք «ինչ որ ցանէ նոյնն ալ կը հնձէ»: Մարդ ընդհանուր առմամբ կը գործէ անգիտակցաբար ըստ իր բնոյթին: Բայց ինք իր ազատ կամքովն է որ կը կերտէ իր բնոյթը:


Հետաքրքրական էր երբ գիրքի մը մէջ Անգլերէն լեզուով կարդացի հետեւեալը. Մարդ ունի երեք «էութիւններ», որ հեղինակը զանոնք անուանած էր իբրեւ «Self» եւ այդ երեքը գրած էր երեք զատ կերպերով: Առաջինը մարդուն ճշմարիտ «էութիւնը»՝ իր Հոգին, Քրիստոսի ներկայութիւնը իբրեւ «SELF», բառին չորս տառերն ալ գլխարգիւրով, իսկ երկրորդը իբրեւ «Self», միայն առաջին տառը գլխարգիւրով: Վստահ եմ ան կ'ականարկէր մարդուն անհատականութեան դրական բեւեռը: Իսկ երրորդն ալ «self» առանց գլխարգիւրի: Աս ալ կը խորհիմ ականարկ մըն էր մարդուն «Ես»-ին՝ իր անհատականութեան ժխտական բեւեռին:

Որովհետեւ ամէն ինչ պարզապէս Ս. Հոգիի զօրութեան զանազան արտայայտութիւններն են պատշաճ է նաեւ երկու խօսք ըսել զօրութեան մասին: Ամէն զօրութիւն թրթռացում մը ունի, հետեւաբար շարժման մէջ է: Ան որ կայուն (static) է գոյութիւն չի կրնար ունենալ: Ս. Հոգիի զօրութիւնը իր մէջ կը պարունակէ բոլոր թրթռացումի յաճախականութիւնները՝ մէկէն մինչեւ անհուն: Այս հանգրուանին պատշաճ է նաեւ


տեղեկութիւն տալ թէ մարդ ինչպէս կը ստանայ այդ զօրութիւնը: Մարդ ունի եօթ զօրութեան կեդրոններ որոնք «խակրա» (chakra) կը կոչուին: Պատկերներուն մէջ անոնք ներկայացուած են ծիածանի եօթ գոյներով պարզապէս ցոյց տալու համար անոնց թրթռացումի յաճախականութեան տարբերութիւնները: Ինչպէս բնագիտութեան դասերու ատեն սորված ենք, կարմիր գոյնը կը ներկայացնէ ցած յաճախականութիւն իսկ մանիշակագոյնն ալ՝ բարձրը: Անտարակոյս պատկերներուն մէջ օգտագործուած գոյները միայն տեսանելի լոյսին կը պատկանին: Իսկ այս գիրքին մէջ որոշ պատկերներուն մէջ որպէսզի հասկացողութիւնը աւելի յստակ ըլլայ որոշ տարբեր գոյներ ալ պիտի օգտագործուին:

Եօթը խակրաները՝ զօրութեան կեդրոնները Ս. Գիրքին մէջ փոխաբերաբար ներկայացուած են Յայտնութեան մէջ (Գլուխներ 5-7) իբրեւ գիրքին եօթ կնիքները: Միթէ Քրիստոս չէ ըսած. «Ես եմ դուռը»: Մեր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսն է որ կը բանայ մեր զօրութեան կեդրոնները, որպէսզի յաւելեալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը՝ շնորհները ներգործէ մեր մէջ: Ահա աս է մեր Աստուածատուր եկեղեցւոյ «Դռնբացէքի արարողութեան» իմաստը: Այդ զօրութեան կեդրոններուն առաջին հինգ հատը կը գտնուին ողնահարի ուղղութեամբ, իսկ վեցերորդը ճակտին մէջտեղը իսկ եօթերորդն ալ գանկի վերելը (Տես պատկերներ 1 եւ 2): Իսկ զանազան զօրութեան մարմիններու հասկացողութեան համար կարելի է ներկայացնել հետեւեալ երկու պատկերները (Թիւք 3 եւ 4):

Կարելի է ոմանք տարբեր լեզուներով ներկայացուած զօրութեան մարմիններու անուններ կարդան եւ հոս գրուած անուններուն հետ բաղդատեն ու շուարին: Ճիշդ ասոր համար Անգլերէն անունները եւ անոնց բացատրութիւններն ալ պիտի տրուի:



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ - 1 ՊԱՏԿԵՐ ԹԻՒ - 2 ՊԱՏԿԵՐ ԹԻՒ - 3



ՊԱՏԿԵՐ ԹԻՒ - 4

- 1- Կարմիր- ֆիզիքական մարմին
- 2- Նարնջագույն- սնահսպանոթեան ժխտական բեկեռ
- 3- Դեղին- շգնձական մարմին
- 4- Կանաչ- մտային մարմին
- 5- Կապույտ- իմաձական մարմին
- 6- Լեդեանգույն- (indigo) սնահսպանոթեան դրական բեկեռ
- 7- Մանրճականգույն- Հոգին

Ա- Կարմիր-«Physical body»- Ֆիզիքական մարմինն
կը պատկանի:

Բ- Նարնջագույն-«Astral body»- Իմաստը աստղային
մարմինն է: Ինչպէս աստղագիտութեան մէջ կ'ըսուի
թէ մարդ կ'ազդուի անոնց զօրութիւններէն, նմանապէս
մարդ նաեւ կ'ազդուի իր անհատականութեան ժխտա-
կան բեւեռէն՝ իր «Ես»-էն եւս:

Գ- Դեղին-«Emotional body»- Ձգացական մարմին:

Դ- Կանանչ-«Mental body»- Մտային մարմին:

Ե- Կապոյտ-«Etheric body»- Եթերային մարմին: Եթե-
րը գիտութեան մէջ նաեւ ներկայացուած է իբրեւ
տեղեկութեան ազդավայր (information field): Տեղեկու-
թիւնը գիտութիւնն է եւ մարդ գիտութիւն կ'ամբարէ
իր իմացականութեամբ հետեւաբար կարելի է այս
մարմինը նաեւ կոչել «իմացական մարմին»: Իմացա-
կանութիւնը սերտ կապ ունի իմաստութեան հետ:
Իմաստութեան որակը յայտնաբերուած գիտակցու-
թեան մակարդակէն կախեալ է: Գիտակցութիւնն ալ, որ
մեզ ամէն ինչի գիտակից կ'ընէ, Աստուծոյ ներկայու-
թիւնն է մեր մէջ: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ
աշխարհի Լոյսը»: Ինչպէս լոյսը ամէն ինչ տեսանելի
կ'ընէ, գիտակցութիւնն ալ ամէն ինչի գիտակից կ'ընէ:

Զ- Լեղակագույն-«Celestial body»- Երկնային մարմին:
Անհատականութեան դրական բեւեռը՝ Աստուածայայտ-
նութիւնը իրականացնող մասը՝ Լուսաբեր հրեշտակը
անկումէն առաջ, լոյսը բերողը, այսինքն Աստուծոյ
Լոյսը յայտնողը: Միթէ Աստուծոյ Լոյսը յայտնողը
երկնային չըլլա՞ր: Ընդհանուր առմամբ երբ մարդ կը
մեռնի, իր մարմնին հետ իր անհատականութիւնն ալ
կը մեռնի: Բայց եթէ անհատը իր աշխարհիկ պարտա-
կանութիւնը լաւ կատարած է եւ Աստուածայայտնու-
թիւնը իր մէջ իրականացուցած, նման Յիսուսի, իր
մարմնին մահէն ետք իր անհատականութիւնը յարու-

թիւն կ'առնէ եւ Աստուծոյ միացած միականութեան մաս կազմելով երկնային էութիւն մը կ'ըլլայ:

Է- Մանիչակագոյն-«Causal body»- Պատճառական մարմին: Միթէ Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ բոլորին պատճառը չէ՞: Մարդուն Հոգին Աստուծոյ Ս. Հոգիին ներկայութիւնն է իր մէջ եւ Ֆիզիքականին մէջ ան անուանուած է Աստուծոյ Որդին՝ Քրիստոս:

Այս մարմիններուն երկուքը՝ Եթերական կամ իմացական մարմինը՝ մարդուն գիտակցութիւնը, եւ Պատճառական մարմինը՝ մարդուն Հոգին երկուութեան ենթակայ չեն, որովհետեւ անոնք կը ներկայացնեն Աստուծոյ զօրութիւնը եւ Լոյսը՝ գիտակցութիւնը: Աստուած միականութիւն է:

Վերադառնալով բուն նիւթին, ուսումնասիրենք «Հոգի»-ին եւ «ոգի»-ին տարբերութիւնը: Այս հանգըրլանին պատշաճ է հետեւեալ փոխաբերականը ներկայացնել. Երբ մանուկ էինք վստահաբար բոլորս ալ փորձառութիւնը ունեցած ենք օճառ ջուրով օդին մէջ պղպշակներ բռնել: Պղպշակին մէջի օդը եւ դուրսի օդը նոյնն են, բայց պղպշակին մէջի օդը օճառ-ջուրով սահմանափակուած է: Պղպշակին մէջի օդը կը ներկայացնէ մարդուն Հոգին, որ նոյնն է Աստուծոյ Ս. Հոգիին հետ: Սահմանափակող օճառ-ջուրն ալ մարդուն անհատականութեան կողմէ դրուած իր կենցաղին տեղեկութիւններն են: Պղպշակը իր ամբողջութեամբ՝ թէ՛ իր «Հոգին» սահմանափակող օճառ-ջուրով եւ թէ՛ ալ իր մէջի օդով կը ներկայացնէ մարդուն ոգին: Ոգին կրնայ պարզապէս միայն տեղեկութիւն պարունակել կամ նաեւ կըրնայ մարդուն անհատականութիւնը պարունակել: Այս վերջինը կախում ունի մարդուն բռնած ընթացքէն եւ իր ազատ կամքով ըրած ընտրութենէն:

Հետեւեալ բացատրութեան պատկերներուն մէջ պիտի օգտագործուի դեղին գոյնը իբրեւ մարդուն

Հոգին: Պէտք է մոռնալ թէ առանց Հոգիին ներկայութեան մարդն ալ գոյութիւն չի կրնար ունենալ, ինչպէս առանց արեւի գոյութեան աշխարհի վրայ կեանքն ալ գոյութիւն չի կրնար ունենալ: Որովհետեւ արեւին գոյնը դեղին է, այս պատկերներուն մէջն ալ, դեղին գոյնը պիտի ներկայացնէ Քրիստոսը՝ Հոգիին ներկայութիւնը անհատին մէջ: Իսկ մարդուն անհատականութեան դրական բեւեռը կապոյտ գոյնով եւ ժխտական բեւեռն ալ կարմիր գոյնով, շէշտելու համար իրենց զօրութեան յաճախականութեան ցած եւ բարձր տարբերութիւնը: Նաեւ պէտք է հասկնանք թէ հոս ներկայացուած պատկերները պարզապէս հասկացողութեան համար չինուած են եւ չեն ներկայացներ իրողութիւնը: Բոլոր եօթ մարմիններն ալ թափանցած են ֆիզիքական մարմնին մէջ ամենուրեք:

Պատկեր թիւ 5-ը կը ներկայացնէ մարդը եւ իր Հոգին միայն:


Պատկեր թիւ 6-ը կը ներկայացնէ մարդը եւ իր անհատահանութիւնը երկու հաւասար բեւեռներով: Երկու բեւեռներուն մէջտեղի կէտն ալ կը ներկայացնէ մարդուն ազատ կամքը:

Պատկեր թիւ 7-ը կը ներկայացնէ մարդը, իր Հոգին եւ իր անհատահանութիւնը:


Պատկեր թիւ 8-ը կը ներկայացնէ մարդը, իր Հոգին եւ իր անհատահանութիւնը երբ ան իր ազատ կամքով յարած է իր անհատականութեան դրական բեւեռին:

Պատկեր թիւ 9-ը կը ներկայացնէ մարդը, իր Հոգին եւ իր անհատահանութիւնը երբ ան իր ազատ կամքով յարած է ժխտական բեւեռին:


Պատկեր թիւ 10-ը կը ներկայացնէ մարդուն ոգին: «բ»-ը վերելի թիւ 8-ին ոգին, իսկ «ա»-ն ալ թիւ 9-ինը: Սրճագոյնը պարզապէս տեղեկութիւն է, որ ոգիին յաջորդ վերամարմնացումին իր ճակատագիրը կ'ըլլայ:




ԹԻՒ- 5




ԹԻՒ- 6



ԹԻՒ- 7



ԹԻՒ- 8




ԹԻՒ- 9



Հոգիս



ԹԻՒ- 10-Ա



ԹԻՒ- 10-Բ

Յաջորդ էջին մէջ զանազան անձերու իրարմէ տարբերող գօրուիւթեան թրթռացումի յաճախականութիւնները, ներկայացուած է զանազան գոյներով:







Թ

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ



ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Պատմութեան գիրքերը անցեալին աշխարհի վրայ պատահած եւ ահռելի ողբերգութեանց պատճառ եղած արարքներով ու պատահարներով լեցուն են: Անտարակոյս ամէն տեսակի ժխտական արարքներ ողբերգութեան պատճառ կրնան ըլլալ: Այս պատահարները կարելի են երկուքի բաժնել. մին մարդկային արարքներ, իսկ միւսն ալ՝ բնութեան: Իբրեւ օրինակ կարելի է ըսել գողութիւն, դաւաճանութիւն, մարդասպանութիւն, պատերազմներ ուր հազարաւոր մարդիկ կը մեռնին եւ ասոնց ամենէն ահռելին ցեղասպանութիւն ուր նոյնիսկ անմեղ մանուկներ կը մեռցուն: Կան նաեւ բնական պատահարներ որ սոսկալի կործանումներու եւ հազարաւորներու մահուան պատճառ կ'ըլլան. ինչպէս հրդեհներ, ջրհեղեղներ, երկրաշարժներ, փոթորիկ ու հրաբուխներ:

Ողբերգութեան պատճառ մարդկային արարքները կը նկատուին մարդուն կողմէ գործուած մեղքեր ըլլալ: Անոնց բուն պատճառը անտարակոյս մարդուն եասիրութեան արդիւնքն է: Մարդը ի՞նչու եսասէր կ'ըլլայ: Անտարակոյս աս իր խաւարամտութեան արդիւնքն է: Իսկ այդ իր ունեցած խաւարամտութեան բուն պատճառն ալ կը թուի աշխարհի ամենամեծ ողբերգութիւնը ըլլալ: Այս ուղղութեամբ ստորեւ յաւելեալ տեղեկութիւն պիտի տրուի: Երբ նկատողութեան առնենք բնութեան ողբերգական պատահարները, մենք զմեզ անմեղ կը համարենք եւ նոյնիսկ պարզապէս կ'ըսենք անոնք պատահական են կամ Աստուծոյ կամքն են: Եթէ նկատողութեան առնենք երկու նման պատահարներ ներկայացուած Ս. Գիրքի Հին Կտակարանին մէջ պիտի հասկնանք թէ բոլոր այդ պատահարներուն պատճառն ալ մենք ենք: Այս երկու ողբերգական պատահարները

են. Սողոմի եւ Գոմորի կործանումը եւ Նոյան ժամանակի ջրհեղեղը: Երկուքն ալ կը թուին պարզապէս բնութեան արարքներ ըլլալ: Բայց ըստ ներկայացուածին, անոնք արդիւնքներն էին մարդկութեան կենցաղին վատթարացման: Հետեւաբար կը թուի թէ նոյնիսկ բնութեան ողբերգական պատահարները կախում ունին մեր բռնած ընթացքէն:

Ուրեմն ինչ է այդ ահռելի ողբերգութիւնը որ պատճառ կ'ըլլայ մարդուն խաւարամտութեան եւ եսասիրութեան: Ան մարդուն ինք զինք՝ իր ճշմարիտ էութիւնը չճանչնալն է, Զայն չգիտնալն է: Զարմանալին այն է թէ այս ահռելի ողբերգութեան մէջ միւրճուած ըլլալով ինք լուր անգամ չունի թէ ողբերգական կեանք մըն է որ կ'ապրի: Ճիշդ ասոր համար մեր կեանքի բոլոր ողբերգական պատահարները, անոնք ըլլան մարդկային կամ բնութեան արդիւնք, մեր «ստեղծագործութիւններն» են: Չե՞նք խորհիր թէ ժամանակը եկած է «զարթօնքի», քունէն արթննալու, երազողը տեսնելու, մեր ճշմարիտ էութեան ներկայութեան փորձառութիւնը ունենալու, ամէն ինչի միակեանքութեան փորձառութիւնը ունենալու եւ ըստ այնմ մեր կենցաղը փոխելու: Այս գիտութիւնը պարզապէս անդրադարձ մըն է այն «Ճշմարտութեան» որ արդէն ենք: Միթէ հնադարեան առածն ալ չըսէ՞ր. «Ծանիր զքեզ», այսինքն դուն քեզ ճանչցիր: Այս անդրադարձը յաւիտենական կեանքի արժանանալու համար անհրաժեշտութիւն մըն է: Այս անդրադարձը նախ կ'ըլլայ պարզ գիտութիւն մը, իմացական հասկացողութիւն մը, հաւատալիք (belief) մը: Ան կը կարօտի հայեացքի փոփոխութեան, կենցաղի փոփոխութեան, յարատեւ ճիգի, համբերութեան եւ սիրոյ արտայայտութեան, որպէսզի այդ պարզ գիտութիւնը ու հաւատալիքը փոխուի փորձառական գիտութեան եւ Ճշմարիտ հաւատքի (faith):

Կայ նաեւ երկրորդական ողբերգութիւն մը եւս, որ մարդ ամէն օր զայն կ'ապրի եւ տակաւին չէ անդրադարձած այդ ողբերգութեան: Մարդ ինչո՞ւ կը քնանայ: Քունին նպատակը օրուայ գործունէութիւններէն վերջ յոգնած մարմինը անգամ մը եւս աշխուժ ընելն է: Երբ անհատը կարող կ'ըլլայ երկար ժամանակ խորունկ քունի մէջ մնալ, առաւօտուն կազդուրուած կ'արթննայ: Անոնք որոնց շնչառութիւնը քունի ընթացքին յաճախ կը կենայ (sleep apnoea), չեն կրնար խորունկ քունի մէջ մնալ, հետեւաբար առաւօտուն յոգնած կ'արթննան: Ինչո՞ւ խորունկ քունը կազդուրիչ է: Խորունկ քունի մէջ մարդ ոչինչէ տեղեակ է: Ան ոչ այս աշխարհը գիտէ եւ ոչ ալ ինք իրմէ տեղեակ է: Այս հանգրուանին մարդուն միտքն ալ «սուրբ» է, այսինքն մաքրուած, սրբուած, առանց խորհուրդի եւ առանց զգացումներու: Հետեւաբար մարդն ալ իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ է: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ր ըսած. «Երանի անոնց, որ սուրբ են սրտիւ...»: Յիսուսի խօսած Արամեբէն լեզուի մէջ «միտք» բառին համար բառ մը չկայ, այլ սիրտ բառը կը գործածուի: Միթէ նաեւ Քրիստոս չէ՞ր ըսած. «Ես եմ դուռը» Այդ հաղորդութեան միջոցին է, որ անհատը Քրիստոսէն Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը կը ստանայ եւ այդ յաւելեալ զօրութեան պատճառով ալ առաւօտուն կազդուրուած կ'արթննայ: Դժբախտութիւնը եւ ողբերգութիւնը այն է թէ այս բոլորը կ'ըլլան այնքան ցած գիտակցութեան մը, որ անհատը լուր անգամ չունի թէ ինչ կը պատահի: Ողբերգութիւնը այն է թէ ինք Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ է եւ լուր անգամ չունի: Յիսուս նաեւ սորվեցուց աղօթքին ամենավեհ ձեւը՝ խոկալը: Միթէ Ան չ'ըսաւ. «Աղօթքի ատեն շատախօս չըլլալ», նաեւ ըսաւ. «Սենեակդ մտիր դուռդ գոցէ»: Նոյնիսկ Հին Կտակարանին մէջ ալ նոյն յորդորը

տրուած է. «Կանխեցէք եւ գիտցէք թէ ես եմ»: Երբ անձը աղօթքի՝ խոկումի ատեն կը յաջողի «սուրբ սիրտ» կերտել, այսինքն թէ՛ խորհուրդներէ եւ թէ՛ ալ զգացումներէ սրբուած միտք մը կերտել եւ ահա աս է նպատակը խոկումին, այն ատեն անձը անգամ մը եւս իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ կ'ըլլայ եւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւնը՝ շնորհները կը ստանայ: Բայց այս անգամ ինք արթուն ըլլալով գիտակից կ'ըլլայ այդ հաղորդութեան եւ փորձառութիւնը կ'ունենայ թէ ամէն ինչի միակեանքութեան եւ նաեւ Աստուածային երանութեան: Այս փորձառութիւնն ալ կը համապատասխանէ Յիսուս Քրիստոսի ըսածին. «Երանի անոնց, որ սուրբ են սրտիւ քանզի Աստուած պիտի տեսնեն»:

Հետեւաբար խորունկ քունը անգիտակից խոկումն է, իսկ խոկումը գիտակից խորունկ քունը:

Մանուկի նման կ'ուզե՞ս խոր քուն քաշել՝
Ապրե՛ այնպէս բարի , արդար եւ ազնիւ,
Որ ո՛չ մէկուն անուշ քունը չխանգարես,
Աղքատին հալալ հացը ձեռքէն չկորզե՛ս,
Եղբօրդ ճանապարհին՝ փոսեր չփորես:

Այնպե՛ս ապրե քու կեանքդ որ ոչ մէկուն
Ցաւ , վիշտ ու տառապանք չպատճառես,
Խեղճին ու որբին աչքէն արցունք չխլես,
Նուրբ սիրտեր չվիրաւորե՛ս եւ չարիւնես,
Տաքով օճախներ չքայքայես, չքանդե՛ս,
Ինչքան վեհ բան է՝ արդար մարդ ըլլալ:

Հայր Անտոն

©SylmarjanHanelugnerHekyatner





Ժ

ԼԱԲԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ



ԼԱԲԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

Ի՞նչ է նուէրը: Նուէրը կրնայ զանազան դրդապատճառներ ունենալ: Ան շատ անգամ երախտագիտութեան արտայայտութիւն մը կ'ըլլայ: Ան պարզապէս կրնայ սիրոյ արտայայտութիւն մը ըլլալ: Երբեմն գործատեղիի մէջ տնօրէնը աշխատաւորին նուէր կու տայ անոր կատարած աշխատութիւնը գնահատած ըլլալուն համար, իսկ աշխատաւորն ալ տնօրէնին նուէր կու տայ զայն պատուած ըլլալուն համար: Պատիկներուն նուէր կու տանք զանոնք ուրախացնելու համար: Իսկ թագաւորներ իրարու նուէր կու տան իրարու եւ իրենց երկիրներուն փոխադարձ ունեցած հաւատարմութիւնը յայտնելու համար, հետեւաբար նուէրը նաեւ կրնայ համերաշխութեան խորհուրդանիշը ըլլալ:

Նուէրը նաեւ կը տրուի զանազան առիթներով՝ երբ նոր զաւակ մը ծնի, երբ անհատը դպրոցէ կամ համալսարանէ շրջանաւարտ ըլլայ, երբ գոյգ մը ամուսնանան, այս պարագաներուն նուէրն ալ շնորհաւորութեան եւ բարեմաղթութեան արտայայտութիւն մը կ'ըլլայ:

Նուիրատուութեան ամենակարեւոր մասը նուէրին ինչ ըլլալը չէ այլ նուէրը տալու տրամադրութիւնն է, նուէրը տուողին զգացումներն են: Բայց երբեմն տրուած նուէրը կրնայ շատ իմաստալից ըլլալ: Այս վերջինը լաւ հասկնալու համար, երեք մոգերուն Յիսուսին ծննդեան առիթով տուած նուէրները նկատողութեան առնենք: Անոնք էին՝ ոսկի, զմուռս եւ կնդրուկ: Այս երեք նուէրները կը ներկայացնէին Յիսուսը: Ոսկին կը ներկայացնէր Անոր թագաւոր մը ըլլալը, զմուռս կը ներկայացնէր Անոր մարդկային բնոյթը եւ կնդրուկը՝ խունկն ալ կը ներկայացնէր Անոր Աստուածային բնոյթը:

Հետեւաբար նուէրը երկու հոգիներու միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը եւ այդ երկուքին

իրարու հետ ունեցած յարաբերութեան եւ սիրոյ որակը կը ներկայացնէ: Երբ ամուսինը իր կնոջ ազամանդ մատանի մը կը նուիրէ, ան իր կնոջ հանդէպ ունեցած սիրոյ, յարգանքի, վստահութեան եւ համերաշխութեան որակը յայտարարած կ'ըլլայ: Երբ կինը յօժարաբար եւ ուրախութեամբ կ'ընդունի ծննդաբերութեան բոլոր դժուարութիւնները եւ ցաւերը իր ամուսնոյն զաւակ մը տալով կը յայտարարէ իր հաւատարմութիւնը, վստահութիւնը ու յարգանքը հանդէպ իր ամուսնոյն եւ նաեւ իր ունեցած սէրը հանդէպ իր ամուսնոյն եւ իր նորածին զաւակին: Միթէ Յիսուս ալ համայն մարդկութեան հանդէպ իր ունեցած սիրոյն համար չէ՞ որ ընտրեց «Խաչին ճամբան»:

Նուէրին մասին մեր ունեցած այս հասկացողութեան «լոյսին» տակ նկատողութեան առնենք մեր եւ Աստուծոյ միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւնը: Այդ յարաբերութեան որակը ինչպէ՞ս պիտի չափենք: Անտարակոյս մեր իրարու տուած նուէրներով:

Նախ նկատողութեան առնենք Աստուծոյ մարդկութեան հանդէպ ունեցած յարաբերութեան՝ սիրոյ, կարեկցութեան, ողորմածութեան եւ ներողամտութեան, որակը: Աստուած մարդուն տուած է ընհանուր տիեզերքի մէջ ամենաթանկագին նուէրը՝ մարդուն ունեցած կեանքը եւ գիտակցութիւնը: Ան նաեւ մարդը ստեղծեց իր պատկերին նման, այսինքն մարդուն տուաւ ազատ կամք, անհատականութիւն եւ ստեղծիչ ըլլալու կարողութիւնը: Ան որովհետեւ առատաձեռն է, մինչեւ այսօր կը շարունակէ իր անհուն նուէրները տալ բոլորին անխտիր: Մենք զանոնք Աստուծոյ շնորհները կը կոչենք: Ընդհանուր առմամբ մենք մեր ազատ կամքով կը մերժենք այդ նուէրները, երբեմն գիտակցաբար բայց ընդհանուր առմամբ անգիտակցաբար:

Իսկ մարդ ի՞նչ նուէրներ կուտայ Աստուծոյ

յայտարարելու համար որակը իր Աստուծոյ հանդէպ ունեցած սիրոյ, վստահութեան, յարգանքին, երկիւղածութեան եւ հաւատքին: Ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմինն» է, ան Աստուծոյ կը պատկանի: Մարդ ինչ որ Աստուծոյ ուզէ տալ, արդէն Աստուծոյ կը պատկանի: Ճիշդ ասոր համար մեր Եկեղեցւոյ Ս. Պատարագին մէջ աս ճշմարտութիւնը զգալիօրէն շեշտուած է: Հետեւեալը մէջբերում մըն է առնուած «Լոյս Ի Լուսոյ» գիրքէս, «Ս. Պատարագի մեկնաբանութիւն» խորագրեալ ԺԳ. գլուխէն.

«Քահանան կ'ըսէ.

«Եւ պէոյս 'ի խոյոց խեչ մարդոցանեմէ ըսոյ

ամենայնի եւ յաղախ ամենեցոն» .

«Քուկդ՝ որ քեզմէ է՝ քեզի կը նուիրենք բոլորի կողմէ՝
բոլորին համար»:

«Այս ալ կը շեշտէ, որ միակ ճշմարտութիւնը Աստուած է: Ինչ որ մարդ արարած Աստուծոյ կը նուիրէ, արդէն կը պատկանի Աստուծոյ եւ եկած է Աստուծմէ: Մեր նուէրը եւ զոհը ուրեմն պէտք է ըլլայ, Յիսուսի նման, զոհել մեր «Ես»ը խաչին վրայ որպէսզի Քրիստոս լրիւ ի յայտ գայ մեր մէջ, այսինքն յարութիւն առնէ մեր մէջ, այս է Քրիստոսի երկրորդ գալուստը, որ մենք ոչ իմացական, այլ գործնականօրէն գիտակից ըլլանք իր ներկայութեան, ճիշդ ասոր համար ըսաւ. «խաչդ առ եւ ետեւես եկուր»»:

Այս հիման վրայ մենք ի՞նչ նուէր պիտի տանք Աստուծոյ: Ամենակարեւոր նուէրը մեր «Ես»-ը անտեսելն է: Ինչպէս նաեւ ընդհանուր ստեղծագործութիւնը՝ նիւթը, բոյսերը, անասունները եւ համայն մարդկութիւնը պահել, պաշտպանել եւ խնամելն է: Բացարձակ սէր ունենալ բոլորին հանդէպ: Ինչպէ՞ս սիրել նիւթը: Ան կ'ըլլայ հողը, ջուրը եւ օդը չ'ապականելով: Բայց ամենակարեւոր նուէրներէն մին ստեղծագործութեան

նպատակը իրականացնելն է: Այսինքն Աստուածայայտ-
նութիւնը մեր մէջ յայտնաբերելն է: Պետք է մոռնալ
թէ Աստուած Ինքզինք կը տեսնէ մեր աչքերով: Ո՞րքան
Զինք կը յայտնաբերենք մեր կենցաղով, որ Աստուած
ալ Ինքզինք տեսնէ:

Վերել ներկայացուած տեղեկութեան հիման վրայ,
այս հանգրուանին նկատողութեան առնենք մարդուն
Աստուծոյ տալիք ամենաթանկագին նուէրը: Նախ քան
այս տեղեկութեան, մէկ վայրկեան կարելի է կարգալը
դադրեցնել եւ խորհրդածել թէ դուք ի՞նչ կը խորհիք
այդ ամենաթանկագին նուէրին մասին: Այդ նուէրը
ի՞նչ կրնայ ըլլալ, որ այդ նուէրով Աստուած անհունօրէն
հրապուրուի:

Այդ նուէրը հետեւեալն է: Երբ մարդ վերջապէս իր
բոլոր գործած մեղքերուն, իր հոգեւոր կեանքի նկատ-
մամբ ունեցած անտարբերութեան, իր Աստուծոյ ընծա-
յած բոլոր շնորհները մերժելուն, իրեն տրուած իր
աշխարհիկ պարտականութեան մէջ թերացած ըլլալուն
կ'անդրադառնայ եւ կ'որոշէ ինքզինք լրիւ փոխել, այդ
փոփոխութեան, այդ ճշմարիտ ապաշխարութեան (եւ ոչ
բերնի ծամոց ապաշխարութեան) յառաջ բերած մէկ
կաթիլ արցունքը Աստուծոյ համար ամենաթանկագին
նուէրն է: Նման ապաշխարութիւն մարդը կ'արժանա-
ցընէ Զարթօնքի եւ այդ Զարթօնքն ալ Աստուծոյ
ամենաթանկագին նուէրն է որ Աստուած արժանի
մարդուն կը շնորհէ: Զարթօնքը աւելի բարձր գիտակ-
ցութեան արժանանալն է: Բարձր գիտակցութիւնն ալ
մարդուն պատրանքը ճշմարտութենէն զանազանելու
կարողութիւնը եւ իմաստութիւնը կու տայ: Միթէ
ճշմարտութիւնը Աստուածն չէ՞: Մարդ ալ Աստուծոյ
հետ կը հաղորդուի եւ Անոր մէջ ալ կը լուծուի:

ԱՄԷՆ



ԺԱ

ԱՍՏՈՒԱԾ ԳՏՆԵԼՈՒ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ



ԱՍՏՈՒԱԾ ԳՏՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Այս գլուխը այս գիրքին բոլոր նախորդ գլուխներուն կարճ ամփոփումն է եւ ոչ թէ նոր տեղեկութիւններ պիտի տրուին: Յարմար է գլուխը սկսիլ հետեւեալ մէջբերումով.

«Այո, կառչեցէք ինծի: Ձեր հաւատքը պիտի վարձատրուի: Դուք գիտէք թէ ինչ կը նշանակէ զգալ պզտիկ վստահող ձեռք մը ձեր ձեռքին մէջ. ճանչնալ մանկան մը վստահութիւնը: Այդ չափը թնցներ միթէ ձեր մէջ Սէր եւ զայն պաշտպանելու՝ զայն հոգալու փափաքը: Խորհեցէք անգամ մը ի՞նչ կրնայ զգալ իմ Սիրտս, երբ ձեր անօգնականութեան մէջ դառնաք ինծի, կառչիք ինծի, իմ Սէրս եւ Պաշտպանութիւնս ունենալու փափաքով:

«Դուք յուսախաբ պիտի ընէի՞ք արդեօք այդ թերի եւ տկար մանուկը: Դուք ալ այդպէս էք իմ առջեւ: Ես կրնամ արդեօք յուսախաբ ընել ձեզ: Գիտցէք որ կարելի է այդ: Գիտցէք թէ ապահով ձեռքերու մէջ էք երբ կ'ապաւինիք ինծի: Պէտք է տարակուսիք այս մասին՝ Վստահ պէտք է ըլլաք: Չկայ հրաշք մը, որ Ես չկարենամ գործել. չկայ բան մը որ Ես չկարենամ ընել: Չկայ մետասաներորդ - վերջին - ժամու ազատութիւն մը զոր Ես չկարենամ կատարել:»

(Առնուած Շնորհք Արք. Գալուստեանի թարգմանած «Աստուծոյ Կանչը» գիրքէն - Հոկտեմբեր 6ի պատգամը)

Աստուած գտնելու միջոցառումները կարելի է
չորսի բաժնել. Կենցաղ, Գիտութիւն, Ձերբազատում եւ
Պաշտամունք:

ա- Մեր ապրած կենցաղը մեր խորհուրդները, մեր
խօսքերը եւ մեր արարքներն են: Երբ այս բոլորը կը
ծագին մեր «Ես»-էն, ընդհանուր առմամբ անոնք կը
հակասեն Աստուծոյ «կամքին»: Բայց երբ անոնք կը
ծագին մեր ճշմարիտ էութենէն՝ ներքին Քրիստոսէն,
անկարելի է որ Աստուծոյ կամքին հակասեն: Եւ ի՞նչ է
Աստուծոյ կամքը եթէ ոչ ընդհանուր տիեզերքը կառա-
վարող տիեզերական օրէնքները, Աստուծոյ զօրու-
թիւնը՝ Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող օրէնքները
դրուած Հայր Աստուծոյ կողմէ ստեղծագործութեան
սկիզբը: Պէտք է մոռնալ թէ ըստ Հին Կտակարանին
անոնք բոլորն ալ դրուած են իմաստութեամբ: Երբ մեր
կենցաղը այդ օրէնքներուն հետ ներդաշնակ կ'ըլլայ,
մենք ալ կը վայելենք Աստուածային շնորհքները, մենք
ալ կը ստեղծենք դրախտը մեր կեանքերուն մէջ: Իսկ
եթէ հետեւինք մեր «Ես»-էն եկած խորհուրդներուն կը
ստեղծենք դժոխքը մենք մեզի համար: Հետեւաբար
իբրեւ հայ ազգ պէտք է՞ հարց տանք թէ ինչու միշտ
դժոխքի մէջ է որ կ'ապրինք:

բ- Գիտութիւնը անհրաժեշտ է ամէն բանի յաջո-
ղութեան համար: Բայց այս գիտութիւնը մեր դպրոցը
սորվածնիս է: Մեր դպրոցը սորվածը արտաքին
աշխարհին կը պատկանի: Անտարակոյս անոնք բոլորն
ալ կարեւոր են որպէսզի պատշաճօրէն ապրինք մեր
աշխարհիկ կեանքը: Աստուած գտնելու համար անհրա-
ժեշտ գիտութիւնը ներքին «աշխարհին» կը պատկանի:
Ան մարդուն իր ճշմարիտ էութիւնը գտնելու կամ
ճանչնալու գիտութիւնն է: Միանգամայն ան նաեւ Յի-
սուս Քրիստոսի սորվեցուցած տիեզերական օրէնքնե-
րուն գիտութիւնն է, որպէսզի այդ օրէնքներուն հակա-

ուակ չի գործենք: Այս գիտութեան ակը իմաստութիւնն է, որ Աստուծոյ շնորհքներէն մին է: Այս գիտութիւնն ալ նախ կը սկսի իմացական գիտութեամբ բայց յետոյ կը փոխուի փորձառական գիտութեան: Ըստ մեր առօրեայ փորձառութեանց, ըստ մեր հինգ զգայարանքներէ եկած տեղեկութիւններուն մեր ապրած կեանքը, աշխարհը, արեւը, աստղերը, մոլորակները, բոյսերը, բոլոր անասունները եւայլն կը թուին ճշմարտութիւններ ըլլալ, եւ այդ միջոցառումներով մարդ Աստուծոյ փորձառութիւնը չէ ունեցած: Ճիշդ ասոր համար կան ոմանք, որ Աստուծոյ գոյութեան չեն հաւատար: Բայց եթէ մարդ իր իմացականութիւնը պատշաճօրէն օգտագործէ տրամաբանելու կարողութեամբ կրնայ հասնիլ այն եզրակացութեան թէ պէտք է Աստուած գոյութիւն ունենայ (տես «Լոյս Ի Լուսոյ» գիրքիս մէջ «Աստուած կա՞յ թէ չկայ» խորագրեալ Դ. Գլուխը): Իմացական գիտութեամբ նաեւ կարելի է անդրադառնալ թէ մեր ճշմարտութիւն կարծած եւ արթուն կոչած կեանքերնիս պարզապէս երազ մըն է: Այս ուղղութեամբ պատշաճ է կարդալ «Երազը եւ Երազողը» խորագրեալ գիրքս: Առանց այս գիտութեանց կարելի չէ նոյնիսկ որեւէ ջանք ընել եւ գիտութիւն ամբարել նկատմամբ ներքին «աշխարհին»:

Գ- Ձերբազատումը անտարակոյս անտեսելն է մեր «Ես»-ը, աշխարհի շլացուցիչ հետապնդումները, այսինքն անտեսել է «մամոնան»: Միթէ Յիսուս չէ՞ ըսած հետեւեալ երկու խօսքերը. «Դուք այս աշխարհէն էք, Ես այս աշխարհէն չեմ», «Մարդ երկու տիրոջ չի կրնար ծառայել»: Իսկ Աստուած տեսնելու համար «սուրբ սիրտ» կերտելն ալ մեր միտքը ձերբազատել է բոլոր խորհուրդներէ եւ զգացումներէ: Կարելի է շատ աւելի տեղեկութիւն տալ, բայց այս հանգրուանին բաւ է այս տեղեկութիւնը: Պատշաճ է կարդալ «Կատարելու-

Թեան Ուղին» խորագրեալ գիրքիս մէջ Գ. գլուխը:

դ-Պաշտամունքը մեր ընդհանուր աշխարհիկ կեանքը վերածել է շարունակական աղօթքի մը: Երբ մեր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները կ'ըլլան մեր միտքը կեդրոնացած Աստուծոյ վրայ, երբ մենք կը տեսնենք Քրիստոս ամէն անհատի մէջ, հոգ չէ թէ ան ինչ կրօնքի կամ ինչ ազգի պատկանի, երբ Աստուծոյ ներկայութիւնը կը տեսնենք բնութեան մէջ, ամէն մի բոյսի եւ անասունի մէջ, մեր կեանքն ալ կը վերածուի շարունակական աղօթքի: Պաշտամունքը պարզապէս եկեղեցիի արարողութիւններուն ներկայ ըլլալ, բայց վերջն ալ ըստ մեր «Ես»-ին գործել չէ: Ճշմարիտ պաշտամունքը անհուն սիրոյ արտայայտութիւն մըն է: Միթէ չէ՞ գրուած. «Աստուած սէր է»: Պատշաճ է կարդալ նաեւ այս գիրքին Գ. գլուխը:

Այս բոլոր միջոցառումները միշտ ենթակայ են ձախողութեան որովհետեւ մարդուն «Ես»-ը միշտ առիթը կը փնտռէ իր «գլուխը անգամ մը եւս բարձրացնելու»: Միթէ կացութիւնը նոյնը չէ՞ր Յիսուսի պարագային ալ: Յիսուս իր «Ես»-ը ամբողջութեամբ անտեսեց անապատին մէջ եւ անոր երեք փորձութիւններուն ալ զոհ չեղաւ: Անապատին մէջ այդ երեք փորձութիւնները փորձեցին Յիսուսի ֆիզիքական էութիւնը, իր մտային էութիւնը եւ իր իմացական էութիւնը: Բայց իր ամենախոցելի ժամանակին խաչին վրայ «Ես»-ը անգամ մը եւս իր գլուխը բարձրացուց. «Դուն Աստուծոյ Որդի ես դուն քեզ ազատէ մեզի ալ ազատէ»: Նոյնիսկ այդ ամենատաժանելի վիճակին մէջ անգամ Յիսուս իր «Ես»-ին զոհը չեղաւ եւ անոր խաչին վրայ վերջնական մահով ինք յարութիւն առաւ:

«Ես»-ը խորամանկ է եւ կը ջանայ միշտ պատ մը քաշել մարդուն հոգեւոր կեանքի մէջ յառաջացման եւ Աստուծոյ միջեւ: Երբ մարդը իր կենցաղը կը շտկէ

«Ես»-ը անոր յոխորտանք կու տայ, իսկ Երբ ան գիտութիւն կ'ամբարէ՝ հպարտութիւն կու տայ, իսկ պաշտամունքին մէջ որոշ յաջողութեան ալ՝ սուրբ մը եղած ըլլալու հաւատալիքը կու տայ, այսինքն ինքնախաբէտութիւն կու տայ: Հետեւաբար պարտ ենք մեր «Ես»-ը խաչին վրայ քամել եւ զայն մահուան դատապարտել: Միթէ Յիսուս չէ՞ ըսած. «Խաչդ առ ետեւէս եկուր»:

Երբ կը յաջողինք այս բոլորը ընել, այսինքն անխախտելի հաւատք ունենալ Աստուծոյ վրայ, լրիւ անձնատուութիւն, որ կը նշանակէ մեր կեանքը յանձնել Աստուծոյ կամքին ու հետեւաբար մեր կեանքի բոլոր պատահարներուն համար, անոնք ըլլան լաւ կամ վատ, բացարձակ ընդունակութիւն ունենալ: Լաւերուն համար փառք տալ իսկ վատերուն համար շնորհակալութիւն յայտնել որ Աստուած մեր բարելաւման համար մեզի դաս մը եւս կը սորվեցնէ, ուրեմն ամենեւին չզանգատիլ: Իսկ այս բոլորին գազաթնակէտը անխախտելի սէր հանդէպ բոլորին, ներառեալ մեր թշնամիին: Ան կը նշանակէ այլասէր ըլլալ քան թէ եսասէր:

Երբ մեր կենցաղը նման կերպով յաջողինք կերտել պատրաստ կ'ըլլանք նաեւ «սուրբ սիրտ» (սրբուած միտք) կերտելու: Միթէ Յիսուս Քրիստոս չէ՞ր որ ըսաւ. «Երանի անոնց որոնք սուրբ են սրտիւ, քանզի անոնք Աստուած պիտի տեսնեն»: Պէտք չունինք Աստուած հոս ու հոն փնտռել ու սրբավայրեր երթալ, Աստուած մեր ներսիդին է: Աստուած գտնել պարզապէս անդրադարձ մըն է այն ճշմարտութեան որ արդէն ենք: Ընդհանուր առմամբ այս ճշմարտութիւնը մեր գիտակցողէնէն կը խուսաբի: Ինչո՞ւ: Որովհետեւ խաւարամիտ ենք: Պէտք չէ՞ այլեւս արթննալ:

Այս ուղղութեամբ պատշաճ է այս հանգրուանին ներկայացնել հետեւեալ մէջբերումը առնուած Եփրեմ

Ասորիի յօրինած երանիները, որոնք Լեւան Քարոզին մէջ Յիսուս Քրիստոսի մեզի տուած երանիներուն ընդարձակ բացատրականն է:

«Երանի անոր որ չի սիրեր ու կը մերժէ աշխարհիկ կեանքը եւ օր ու գիշեր կը խորհի Աստուծոյ մասին:

«Երանի անոր որ կ'ատէ գործած մեղքը եւ կը խրտչի անկէ եւ միակ բարի ու մարդասէր Աստուծոյն կը սիրէ:

«Երանի անոր որ երկրի վրայ ապրելով, մնան երկնային հրեշտակին, զայն ընդօրինակելով եւ սէրով, բոլորին հանդէպ մաքուր խորհուրդներ կ'ունենայ:

«Երանի անոր որ անարատ է Աստուծոյ առջեւ, անարատ եւ սուրբ բոլոր պղծութիւններէ, չար խորհուրդներէ ու գործերէ:

«Երանի անոր որ յանուն տիրոջ կը թօթափէ այս աշխարհի բոլոր ունայն գործերը:

«Երանի անոր որ կը մտապահէ գալիք ահիւ դատաստանը եւ կը ջանայ արցունքներով բժշկել իր հոգու խոցերը:

«Երանի անոր որուն արցունքները կատարելապէս նման են անձրեւաբեր ամպի եւ ամէն օր անով չար կիրքերը հորը կը նետէ:

«Երանի անոր որ կ'ընթանայ տիրոջ պատուիրաններով եւ ամէն օր ի սրտէ ապաստանը կը բնտռէ հաւատքի ու սիրոյ մէջ:

«Երանի անոր որ կը յարատեւէ ժուժկալութեամբ բարի կանոններուն մէջ Աստուծոյ երկնային արքայութիւնը ստանալու ակնկալութեամբ:

«Երանի անոր որ կը յիշէ ահեղ պատուիրանը ունայն խօսքերու մասին եւ իր շրթունքներուն պահապաններ կը կարգէ, որպէսզի պատուիրանը զանց չ'առնեն:

«Երանի անոր որուն հոգին է նման նորատունկ ծառի եւ հանապազ ջրի կլորչացման նման արտասուքներ կը թափէ Աստուծոյ առջեւ:

«Երանի անոր որ իր հոգիին բարի բոյսեր կը ցանէ, առաքինութիւններ եւ սուրբ վարք:

«Երանի անոր որ կը տնկէ ու տնկածն է արտասուքով, աղօթելով, որպէսզի տնկուած ըլլայ Աստուածահաճոյ եւ պտղաբեր:

«Երանի անոր որ որուն սէրը բոցավառուած է առ Աստուած եւ կ'այրէ իր մէջ ամէն տեսակի անմաքուր խորհուրդ եւ ամենայն հոգեւոր պղծութիւն:

«Երանի անոր որ կամաւոր կերպով կը նմանի բարի հողի բարի սերմին, մէկի փոխարէն երեսուն, վաթսուն եւ հարիւր պտղաբերելով:

«Երանի անոր իր ցանկութիւնով կը նմանի արտի գեղեցիկ սերմին, ինչպէս որ Տէրը ցանեց Իր սեփական արտին մէջ:

«Երանի անոր որ կը գտնէ երկնային ընտիր մարգարիտը եւ վաճառելով իր ամբողջ ունեցածը կը ձեռքբերէ զայն:

«Երանի անոր որ կը գտնէ դաշտին մէջ թագնուած գանձը եւ ուրախանալով ու ամէն ինչ թողելով ձեռք կը բերէ միայն զայն:

«Երանի անոր որ անդադար կը յիշէ իր մահուան օրը եւ իր կեանքին պատրաստ եւ անվախ կ'ըլլայ այդ ժամին:

«Երանի անոր որ համարձակ կ'ըլլայ բաժանման ժամին...»

«ՈՂՈՐԴԵԱՅ ԻՆՁ ԱՍՏՈՒԾ
ԸՍՏ ՄԵԾԻ ՈՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԸՈՒՄ,
ԸՍՏ ԲԱՅՈՒՆ ԳԹՈՒԹԵԱՆ ԸՈՒՄ
ԸՆԻԵԱ ՉԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԱ ԻՄ...:»


Ծեր մարդու մը հարցուցի.
«Ո՞րը աւելի կարելոր է.
սիրել թէ սիրուիլ»:
Ծերունին պատասխանեց.
«Թռչունի մը համար
ո՞րը աւելի կարելոր է,
իր աջ թելը
թէ իր ձախ թելը»:



ՎԵՐՋԱԲԱՆ

Այս գիրքը ինչպէս նաեւ բոլոր նախորդ գիրքերուս նպատակը ինքնառնուցումն է: Շնորհակալ եմ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ուր շատ բան սորվեցայ: Բայց ամենակարեւորը շնորհակալ եմ Աստուծոյ որ հոգեւոր կեանքի նկատմամբ որոշ իմացական գիտութեան տէր եղայ: Առանց Աստուծոյ օգնութեան այդ գիտութեան տէր ըլլալ անկարելի կ'ըլլար: Պէտք է մոռնալ թէ Յիսուս բացայայտ ըսած էր թէ մենք միայն մէկ վարդապետ՝ ուսուցիչ ունինք ան ալ Քրիստոսն է: Քրիստոս ալ մեր ճշմարիտ էութիւնն է: Եթէ մենք սորվելու պատրաստ ըլլանք՝ բաց միտք եւ սորվելու ալ տենչանքը ունենանք, Ան մեզի կը սորվեցնէ ամենապարզ օրինակներով, օգտագործելով որոշ անձեր ու դասախօսութիւններ, հայթայթելով որոշ գիրքեր, որպէսզի կարդալով նաեւ սորվինք ճշմարտութիւնը: Քրիստոս կը սորվեցնէ, որովհետեւ տեսածնիս, իմացածնիս եւ կարգացածնիս հասկնալու եւ պատշաճ կերպով մեկնաբանելու կարողութիւնը կու տայ: Ապա թէ ոչ պարզապէս կ'ըսենք. «Ինչ «ապուխ զպուխ» անիմաստ անիմաստ կը խօսին»: Բայց այս բոլորը կը կազմեն պարզապէս իմացական գիտութիւն: Եթէ այս հանգրուանին կանք առնենք եւ ըսենք. «ես պէտք եղածը գիտեմ» եւ մենք մեզ հպարտ զգանք թէ «սրբացած» ենք, այն ատեն վայ մեզի: Իմացական գիտութիւնը միայն առաջին քայլն է: Երկրորդ եւ աւելի կարեւորը, մեր բոլոր սորվածները կիրարկելն է մեր կեանքերուն մէջ: Մեր կենցաղը պատշաճ կերպով փոխելն է, Աստուածահաճոյ կեանք մը ապրիլն է եւ Աստուծոյ սէրը յայտնաբերելն է: Անգամ մը եւս կ'ապաւինիմ Աստուծոյ օգնութեան, որպէսզի յաջողիմ ստացած իմացական գիտութիւնս փոխել փորձառական գիտութեան:

ԱՄԷՆ





-ԺԲ-

ՅԱԲԵԼՈՒԱԾԱԿԱՆ

- 1 – Աստիճանաշուքն ինչպե՞ս կարդալ
- 2 – Աստիճ միշտ մեր կողքին է
- 3 – Աստիճոյ սէրը յաիճեճաԿան է
- 4 – Ծառի Կեանքն ո՞ր սէրը
- 5 – Ծերոհորինը
- 6 – Կեանք ե՞ր Սէր
- 7 – Եղիշէ Արք. Դոհրեանի Պատգամը
- 8 – Կրօնքը ե՞ր Հոգեւոր Կեանքը

ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆՁՐ ԻՆՉՊԷՍ ԿԱՐԴԱԼ

Աստուածաշունչը պետք է կարդալ իր ազատարար, արարածը Արարչին մօտեցնող, մարդը մարդկային իր միջվայրին մէջ աւելի մարդացնող իր հիմնարար պատգամին ու տարողութեան, Աստուծոյ հանդէպ մարդուն ունեցած հաւատքի փորձառութեան, ճշմարիտ սիրոյ փոխարաքերութեան, սրբութեան եւ վեհութեան մէջ: Ա. Կորնթ. ԺԱ, 2-16 համարները գրող Պողոս առաքեալը նոյն կորնթացիներուն ուղղուած իր Բ. թուղթին մէջ միաժամանակ էական պատգամ մը փոխանցած է. «Ո՛չ գրով, այլ հոգո՛վ, զի գիրն սպանանէ, այլ հոգին՝ կեցուցանէ»: «Ո՛չ գիրով, այլ հոգիո՛վ, որովհետեւ գիրը կը սպաննէ, այլ հոգին կ'ապրեցնէ» (Բ. Կորնթ. Գ, 6):

Սոյնը պետք է ըլլայ կողմնորոշիչ եւ հիմնական սկզբունք մը Աստուածաշունչը ըմբռնելու եւ անոր էական պատգամները նոր աշխարհապէտացքներուն եւ ընկալումներուն համապատասխանեցնելու, այլապէս՝ զանոնք ճշմարիտ հաւատքով վերածելու Աստուածաշունչին համահունչ:

Այսպէ՛ս պետք է կարդալ Աստուածաշունչը եւ զայն թարգմանել առօրեային մէջ: Հարկ է զայն ապրեցնել ժամանակի ոգիին եւ գիտակցութեան համապատասխան եւ հաղորդակից դարձնել մարդիկը անոր անժամանցելի ճշմարտութիւններուն: Այլապէս՝ կրօնքը երկապրի սուր մըն է. անոր սխալ մեկնաբանումը դիւրութեամբ կրնայ պատճառ դառնալ հոգեկան խանգարումներու յառաջացման, իսկ շատերու մօտ՝ ծանր կաշկանդումներու եւ կործանարար բարդոյթներու: Ծրագրուած նպատակով չարափոխուած որեւէ կրօնք, – իրողութիւն մը, որ դժբախտաբար կ'ապրինք անձնասպանական ահաբեկչութիւններով լի մեր օրերուն, – կրնայ իսկոյն վերածուիլ զենքի, դառնալ վտանգաւոր միջոց մը անասելի ոճիրներու եւ կործանումի:

Հեղինակը անորոշ

ԱՍՏՈՒԱԾ ՄԻՇՏ ՄԵՐ ԿՈՂՔԻՆ Է



Մարդ-Աստուած յարաբերութեան մէջ մարդուն մեծագոյն թիրքմբոնումը այն է, որ մարդ յաճախ կը գանգատի կամ կը տրտնջայ ըսելով, թէ Աստուած հեռացած է իրմէ, թէ Աստուած իր կողքին չէ: Բայց միթէ՞ այդպէս:

Տէր Յիսուս նախքան երկինք համբառնալը Իր աշակերտներուն պատուիրեց, որ երթան մկրտեն ու քարոզեն եւ ամբողջ ժողովուրդներն ու ազգերը Իրեն աշակերտ դարձնեն (տե՛ս Մտ 28.18-20), եւ Իր խօսքը աւարտելով ըսաւ անոնց. **«Եւ ահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը»** (Մտ 28.20): Այս խօսքը ո՛չ միայն աշակերտներուն ուղղուած է, այլ բոլոր ժամանակներու քրիստոնէսներուն համար: Արդարեւ, այս հատուածն ու տողերը կարդացողները չեն տրտնջար ըսելով, թէ Աստուած հեռացած է մեզմէ, որովհետեւ Աստուծմէ խոստում

ունինք, որ Ան միշտ մեզի հետ է, մեր կողքին է:

Վերը նշուած պատճառաբանութիւնը մարդիկ յաճախ կը կատարեն, երբ փորձութեան, նեղութեան կամ դժուարութեան մէջ իյնան: Սակայն, այս պարագային ճիշդ հակառակն է, որովհետեւ հաւատացեալ մարդը փորձութեան մէջ է, որ ամենէն շատը կը զգայ Աստուծոյ ներկայութիւնը, իսկ եթէ չի՝ զգար, ուրեմն չարը յաջողած է ձեռով մը մթագնել իր հոգեւոր տեսողութիւնն ու զգացողութիւնը:

Շնուտա Գ. Հայրապետը այս մասին կը գրէ. «**Եթէ փորձութեան մէջ ինկար եւ Աստուած քեզի հետ չէ, դուն քեզի ըսէ. ո՛չ, Ան ինծի հետ է, ես է որ չե՛մ անդրադառնար Անոր գոյութեան, ինչպէս յարութենէն ետք Մագրադենացիին հետ պատահեցաւ...: Ամօթը, ուրեմն, մեր մէջն է, եւ ո՛չ թէ Աստուծոյ չգոյութեան»:**

Այո՛, մենք է, որ չենք զգար Աստուծոյ ներկայութիւնը, երբ Ան մեր կողքին է: Մենք է, որ ո՛չ միայն չենք զգար Իր ներկայութիւնը, այլ՝ թոյլ չենք տար Անոր որ, միջամտէ եւ օգնէ մեզի, կարենալ յաղթահարելու համար մեր դիմագրաւած փորձութիւնը: Մենք է, որ չզգալով Անոր ներկայութիւնը մեր սիրտերուն ու հոգիներուն դուռը չենք բանար Անոր դիմաց (տե՛ս Յտ3.20), որպէսզի Ի՛նք ըլլայ մեր կեանքին առաջնորդն ու ղեկավարը:

Հետեւաբար, չմեղադրենք զԱստուած կարծելով, թէ Ան հեռացած է մեզմէ, այլ՝ մեր մէջ փնտռենք մեր այն թերութիւնը, ինչին պատճառով դադրած ենք զգալ Աստուծոյ ներկայութիւնը մեր կեանքին մէջ եւ յատկապէս փորձութիւններու ընթացքին:

ՎԱՐԱՆԴ ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

ԽՈՐՀՐԿԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ՄԵԶԻ ՀԱՆԴԷՊ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ Է»



Անուանի հոգեւորական Հենրի Ճ.Մ. Նուրնի «Ճանապարհորդութեան հացը. Ճառագայթումներ տարուան իւրաքանչիւր օրուան համար» հատորը խորհրդածութիւններ ունի տարուայ բոլոր օրերուն համար: Հայերէնի թարգմանած է Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Տ. Մակար Արքեպիսկոպոս Աշգարեան եւ գրեթէ հայացուցած անուանի հոգեւորականի նոյնքան նշանաւոր գիրքը, որ լոյս տեսած է 1996 թուականին եւ տարածուած աշխարհով մէկ: Հայերէն թարգմանութիւնը հրատարակուած է 2024 թուականին՝ Հալէպ, Սուրիոյ Սուրբ Գրոց ընկերութեան համագործակցութեամբ: Կը ներկայացնենք խորհրդածութիւններ՝ նախատեսուած մարտ ամսուայ օրերուն համար:

ԱՍՏՈՒԾՈՅ «ԱՆԶՕՐՈՒԹԻՒՆԸ»

Յիսուս Էմմանուէլն է՝ Աստուած մեզի հետ: Աստուծոյ մարդեղացման մեծագոյն գաղտնիքը, անոր մեզմէ սիրուելու փափաքն է: Լիովին մարդկային հոգատարութենէն կախեալ մանուկ մը ըլլալով, Աստուած կ'ուզէ վերացնել մարդկութեան եւ աստուածութեան միջեւ գտնուող միջոցը: Ո՞վ կրնայ վախնալ փոքրիկ մանուկէ մը, որ սնունդի, հոգատարութեան, ուսուցման եւ առաջնորդութեան կարիքը ունի: Յաճախ երբ մենք Աստուծոյ մասին կը խօսինք, զայն կը ներկայացնենք իբրեւ ամենակարող եւ ամենագոր Տէր, որմէ կախեալ ենք ամբողջովին: Բայց Աստուած ուզեց ամենատկար, ամենախոցելի եւ կատարելապէս մեզմէ կախում ունեցող Աստուածը ըլլալ: Ուստի ինչպէ՞ս վախնալ այն Աստուծմէ, որ կ'ուզէ Աստուած ըլլալ մեզի հետ եւ մենք՝ իրեն հետ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՒԽՏԸ

Աստուած ուխտ մը կնքեց մեզի հետ: «Ուխտ» բառը կը նշանակէ «իրարու քով գալ կամ մէկ ըլլալ»: Աստուած կ'ուզէ մօտենալ ու միանալ մեզի:

Հին կտակարանի բազմաթիւ դէպքերուն մէջ, կը տեսնենք, որ Աստուած կը յայտնուի իբրեւ այնպիսին, որ կը պաշտպանէ մեզ մեր թշնամիներէն, կը պահէ մեզ ամէն տեսակի վտանգներէն եւ կ'առաջնորդէ ազատութեան: Ան մեզի համար

Աստուած է: Քրիստոսի գալուստով ուխտի նոր ուղղութիւն մը կը յայտնուի: Քրիստոսի մէջ, Աստուած կը ծնի, կ'աճի ու կը հասուննայ, կ'ապրի, կը տառապի եւ կը մեռնի այնպէս՝ ինչպէս մենք կ'ըլլանք: Աստուած մեզի հետ է:

Ի վերջոյ, երբ Քրիստոս կ'երթայ՝ ան կը խոստանայ Սուրբ Հոգին դրկել: Սուրբ Հոգիին մէջ է, որ Աստուած կը յայտնէ ուխտին ամբողջական խորութիւնը: Աստուած կ'ուզէ մեզի այնքան մօտ ըլլալ, որքան մեր շունչը մեզի: Աստուած կ'ուզէ շնչել մեր մէջ, որպէսզի ինչ որ խօսինք, մտածենք եւ գործենք՝ կատարելապէս ներշնչուած ըլլալ իրմով: Աստուած մեր ներսիդին է: Այսպիսով Աստուծոյ ուխտը մեզի կը յայտնէ, թէ ո՞րքան Աստուած մեզ կը սիրէ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԵՐ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆԸ

Երբ Աստուած ուխտ մը կ'նքէ մեզի հետ, կ'ըսէ. «Ես ձեզ յաւիտենական եւ անհատնում սիրով պիտի սիրեմ: Հաւատարիմ պիտի փսամ ձեզի, նոյնիսկ եթէ դուք ինձմէ հեռու փախչիք, չընդունիք զիս եւ դաւաճանէք ինծի»:

Ներկայ մեր ընկերութեան մէջ շատ չենք խօսիր ուխտերու մասին, այլ կը խօսինք համաձայնութիւններու մասին: Եւ երբ ուրիշի մը հետ համաձայնութիւն կ'նքենք, կ'ըսենք. «Ես պիտի ամբողջացնեմ ու կատարեմ իմ բաժինս այնքան ատեն, որ դուն քու բաժինդ կատարես: Երբ չես

յաջողի՞ր պահել քու խոստումդ, ես ալ պէտք չունիմ պահելու իմ խոստումս»։ Համաձայնութիւններ յաճախ կը խզուին, որովհետեւ ընկերակիցներ անկարող են իրենց խոստումին տէրը ըլլալու։

Բայց Աստուած համաձայնութիւն չկնքեց մեզի հետ, այլ ուխտ եւ կ'ուզէ, որ իրարու հետ մեր ունեցած յարաբերութիւնները ճառագայթումը ըլլան այդ ուխտին։ Ահա թէ ինչու ամուսնութիւնը, բարեկամութիւնն ու ընկերային կեցութիւնը ճամբաներ են արտայայտելու Աստուծոյ հաւատարմութեան իսկական տեսանելիութիւնը մեր կեանքին մէջ։

ԱՐՏԱՑՈՒՆԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԱԼ ՍԷՐԸ

Աստուծոյ սէրը մեզի հանդէպ յաւիտենական է։ Ասիկա կը նշանակէ, որ այդ սէրը գոյութիւն ունէր նախքան մեր ծնունդը եւ պիտի գոյատեւէ մեր մահէն ետքն ալ։ Ան յաւիտենական սէրն է, ընդ որում մենք բոլորս ընդգրկուած ենք։ Հոգեւոր կեանք ապրիլը մեզ կը հրաւիրէ պահանջելու այդ յաւիտենական սէրը մեզմէ իւրաքանչիւրիս համար, որպէսզի կարենանք ապրիլ մեր ժամանակաւոր սէրը մեր ծնողներուն, եղբայրներուն, քոյրերուն, ուսուցիչներուն, բարեկաժներուն, հարազատներուն, ամուսիններուն եւ բոլոր անոնց հանդէպ, որոնք մեր կեանքին մաս կը կազմեն, իբրեւ Աստուծոյ յաւիտենական սիրոյ արտացո-

լացումը:

Ոչ մեկ ծնողք կրնայ կատարելապես սիրել իր զաւակները: Ոչ մեկ ամուսնացեալ զոյգ կրնան զիրար սիրել անսահման սիրոյ արժեչափով: Չկայ մարդկային սէր, որ տեղ մը կանգ չառնէ ու չխորտակուի:

Երբ մեր խորտակուած սէրը միակն է, զոր ունինք, շուտով յուսահատութեան կը մատնուինք, բայց երբ փորձենք ապրիլ զայն իբրեւ Աստուծոյ կատարեալ եւ անպայմանաւոր սիրոյ մասնակի արտացոլացումը, կրնանք ներել իրարու մեր սահմանափակումները եւ վայելել մեր ընկալելիք սէրը:

ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՅՔ ՍԸ ՍՏԵՂԾԵԼ

Մարդկային բազմաթիւ յարաբերութիւնները կը նմանին երկու ձեռքերու իրերահիւս մատներուն: Մեր մինակութիւնը մեզ կը մղէ կառչիլ իրարու, ինչ որ մեծապէս կը տառապեցնէ մեզ եւ երբեք չի յաջողիր փարատել մեր մինակութիւնը: Եւ որքան աւելի փորձենք, այնքան աւելի յուսախար կըլլանք: Այս «իրերահիւս» յարաբերութիւններուն մեծ մասը կը ձախողի, որովհետեւ անոնք կը դառնան հեղձուցիչ եւ յարձակողական:

Մարդկային յարաբերութիւնները պէտք է երկու ձեռնամաձ ավերու նմանին: Անոնք կրնան ազատօրէն շարժիլ, եթէ նոյնիսկ իրարու կը հպին մատներու ծայրով, կրնան միջոցներ ստեղծել, տնկել վրան մը, կառուցել տուն մը, կայք մը

ապահովել . . .

Մարդոց միջեւ գոյութիւն ունեցող ճշմարիտ յարաբերութիւնները զԱստուած կ'արտացոլան: Անոնք կը նմանին աշխարհի մէջ կատարուող աղօթքներու: Երբեմն աղօթող ձեռքերը ամբողջութեամբ իրարու կը դպչին, երբեմն ալ՝ միջոցով կը բաժնուին: Անոնք միշտ իրարմէ անջատ ուղղութեամբ կը շարժին, բայց երբեք չեն օտարանար, կը շարունակեն աղօթել Անոր, որ զիրենք իրարու միացուցած է:

ՃՇՄԱՐԻՏ ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ

Ամէն բարի յարաբերութիւն, ըլլայ բարեկամական, ամուսնական թէ ընտանեկան, միջոց մը կը ստեղծէ, ուր օտարներ կրնան մուտք գործել եւ բարեկամ դառնալ: Բարի յարաբերութիւնը հիւրընկալ է: Երբ տուն մը մտնենք եւ մեծապէս հարազատ զգանք հոն, կ'անդրադառնանք այդ տան բնակիչներուն միջեւ սիրոյն, որ անմիջապէս մեր ընդունելութիւնը կարելի կը դարձնէ: Երբ տան մէջ վեճ գոյութիւն ունի, հիւրը շուտով կը պարտաւորուի կողմնորոշուիլ՝ որո՞ւ կողմը բռնել, որո՞ւ հետ համաձայն գտնուիլ եւ զո՞վ նախընտրել եւ այլն□ Նման հարցումներ արգելք կը հանդիսանան ճշմարիտ հիւրընկալութեան, որ հիւրին հանդէպ տածուած սիրոյ արտայայտութենէն շատ աւելին է եւ հեռուն կը միտի:

ԾՆՈՂԱԿԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐԳԵԻԸ

Զաւակները իրենց ծնողքին հիւրն են: Անոնք ատեն մը՝ 15, 20, 25 տարի ծնողական յարկի տակ կը մասն, ապա կը հեռանան, որպէսզի իրենց կարգին ստեղծեն սեփական բոյնը: Թէեւ ծնողներ զանոնք «մեր տղան», «մեր աղջիկը», կը կոչեն, բայց զաւակները անոնց սեփականութիւնը չեն, այլ այսպէս թէ այնպէս օտարականներ: Ծնողներ պարտ են մօտէն ճանչնալ իրենց զաւակները, յայտնաբերելու անոնց կարողութիւններն ու տկարութիւնները, առաջնորդելու զիրենք դէպի հասունութիւն՝ առանց արգելք հանդիսանալու անոնց անհատական աճին:

Մեծագոյն սէրը, զոր ծնողներ կրնան տալ իրենց զաւակներուն՝ իրարու հանդէպ ունեցած իրենց սէրն է: Այսպիսով անոնք կրնան իրենց զաւակներու ապագային նկատմամբ մտահոգութենէ զերծ եւ ազատ գետին մը ստեղծել, քաջալերելով անոնց ինքնավստահութիւնն ու սեփական ապագան կերտելու ազատութիւնը:

ԴԷՊԻ ԱՆԴԱՏՈՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՍԸ

Առանց նախապաշարումներու ապրիլը, հոգեւոր դժուարագոյն հրամայականներէն մէկն է: Երբեմն նոյնիսկ չենք անդրադառնար, թէ որքա՛ն արմատացած են մեր մէջ կարգ մը նախապաշարումներ: Շատ յաճախ կը կարծենք, թէ մեր յարաբերութիւնները տարբեր մարդոց հետ, տար-

բեր գոյնով, կրօնքով եւ կենցաղով, հաւասարե հաւասար են, բայց մեր մէջ մտածումները, չկշռադատուած իրականութեան խօսքերն ու անխոհեմ հակազդեցութիւնները ամբողջութեամբ հակառակը կը վկայեն. անոնք կու գան յայտնելու մեզի, թէ մեր նախապաշարումները տակաւին գոյութիւն ունին մեր ներսիդին:

Օտարներու ներկայութիւնը յաճախ վախ, անհանգըստութիւն, կասկած եւ թշնամութիւն կը յառաջացնեն մեր մէջ: Անոնք պարզապէս «ուրիշ» ըլլալով, անապահովութեան զգացումը կը ներշնչեն մեզի: Միայն այն ատեն, երբ կատարելապէս ճանչնանք Աստուծոյ անպայմանաւոր սէրը, որով ան կը սիրէ մեզ եւ նոյն սիրով կը սիրէ նաեւ «ուրիշները», կրնանք յայտնաբերել, թէ մարդոց մէջ տիրող անհուն զանազանութիւնները Աստուծոյ սրտին համապարփակ հարստութեան արտայայտութիւններն են: Այս համոզումէն ետք միայն մեր մէջէն աստիճանաբար կրնայ չքանալ մարդիկը կանխադատելու կարիքը:

ՄԵՐ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ԿՈՉՈՒՄԸ

Այնքան սարսափելի բաներ կը պատահին ամէն օր, որ կը սկսինք հարց տալ մենք մեզի, թէ մեր ըրած բաները որեւէ իմաստ կը պարունակե՞ն: Երբ մեզմէ միայն քանի մը մղոն անդին, մարդիկ անօթութենէ կը մեռնին, երբ պատերազմներ կը մղուին, եւ մեր իսկ քաղաքներուն մէջ անհաշիւ

են տնանկները, մեր բազում գործերը ապարդիւն կը թուին: Ուստի նման նկատառումներ, կրնան ճնշել մեր վրայ եւ անդամալուծել մեզ:

Այստեղ է, որ «կոչում» բառը կարեւոր կը դառնայ: Մենք կոչուած չենք աշխարհը փրկելու, լուծելու բոլոր խնդիրներն ու օգնելու բոլորին: Բայց մեզմէ իւրաքանչիւրը իրեն յատուկ կոչումը ունի, ըլլա՛յ մեր ընտանիքին, գործատեղիին թէ այլուր: Մենք պէտք է միշտ խնդրենք Աստուծմէ, որ ան օգնէ մեզի յստակօրէն ճանչնալու մեր կոչումը եւ շրնորհէ մեզի զօրութիւն եւ կարողութիւն քաջաբար կատարելու զայն: Այս բոլորէն ետք միայն մենք կ'ըմբռնենք, որ մեր սովորական աշխատանքներու հանդէպ մեր ցուցաբերած հաւատարմութիւնը այժմու հիւանդութեանց միակ բալասանն է:

ՄՏԻԿ ԸՆԵԼԸ ԻԲՐԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ըսելը շատ դժուար բան է, որովհետեւ մեզմէ կը պահանջէ ներքին հաստատամտութիւն՝ համոզելու համար մեզ, թէ կարիքը չունինք արտաքին զանազան միջոցներու՝ դասախօսութեանց, վեճերու, հաստատումներու կամ ծանուցումներու: Ըստ էութեան մտիկ ընողին անհրաժեշտ չէ իր ներկայութիւնն զգացնել տալը:

Մտիկ ընելը շատ աւելին է, քան թոյլատրելը ուրիշին, որ խօսի, եւ սպասել է յարմար առիթին պատասխանելու համար անոր: Մտիկ ընելը

նաեւ լարուած ուշադրութեամբ լսել եւ ըսուածները մեր էութեան մաս դարձնել է:

Ուշադիր լսելու գեղեցկութիւնը ակամայ կը ստիպէ խօսողը աւելի լրջութեամբ ընտրելու իր խօսքերն ու լրիւ բացայայտելու ինքզինքը:

Մտիկ ընելը հոգեւոր հաւանութեան ձեւ մըն է, որուն միջոցաւ օտարները կը հրաւիրենք բարեկամութեան, ինքնաքննութեան եւ ամբողջական ինքնաճանաչումի:

ՅԻՍՈՒՄԻ ՀՈԳԻՆ, ՈՐ ՄԵՐ ՄԷՋ ԿԸ ԼՍԷ

Հոգեւոր կեանքի մէջ ունկնդրելը շատ աւելի է, քան հոգեբանական գործելակերպը օգնելու ուրիշներուն, որպէսզի դրսեւորեն իրենք զիրենք, յայտնաբերելու համար իրենց անձերը:

Հոգեւոր կեանքին մէջ ինքնագսպումի վարժ ունկնդրողը եսը չէ, որ պիտի ուզէ խօսիլ, այլ մեր մէջ եղող Աստուծոյ Հոգին: Երբ Սուրբ Հոգիով մկրտուած ենք, այսինքն, ստացած ենք Յիսուսի Հոգին իբրեւ Աստուծոյ շունչը մեր մէջ, այդ Հոգին սրբատեղի մը կը ստեղծէ հոն, ուր ուրիշը կրնայ ընկալուիլ, ուստի եւ ունկնդրուիլ:

Յիսուսի Հոգին կաղօթէ մեր մէջ եւ միաժամանակ կը լսէ անխտիր իրենց ցաւերով ու տառապանքով մեզի եկողները: Երբ կատարելապէս վստահինք մեր մէջ եղող Աստուծոյ Սուրբ Հոգիի զօրութեան, այն ատեն կը տեսնենք բժշկութեան ճշմարիտ լրումը:

ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԵՂԾԷ

Հոգեկան մեծ գոհունակություն է այցի երթալ հիւանդներու, մահամերձներու, տնանկներու, անդամալոյծներու եւ լքեալներու: Բայց հարկ է յանցաւոր չգգալ, երբ մեր այցելութիւնները շատ կարճ տեւեն, նոյնիսկ ըլլան պատահական: Յաճախ այնքա՛ն չքմեղանքով կ'արտայայտուինք մեր սահմանափակումներուն մասին, որ գրեթէ կ'իմաստազրկենք մեր իրական ներկայութիւնը անոնց մօտ, երբ անոնք ճշմարտապէս մեր կարիքը ունին: Կարճ, բայց բոլորանուէր ներկայութիւնը հիւանդին համար աւելի կարժէ քան, երկար-բարակ բացատրութիւնները, արդարացնելու համար, թէ ինչու անկարող ենք աւելի յաճախ այցելել իրեն:

Երբ կարենանք բոլորանուէր ներկայութիւն ըլլալ մեր բարեկամներուն քով, մեր բացակայութիւնն իսկ իւրովի օգտաւէտ կը դառնայ: Անոնք կ'ըսեն. «Այսինչը այցելեց ինծի», ուստի մեր բացակայութեան ընթացքին ալ կը վայելեն մեր ներկայութեան անպակաս շնորհքը:

ՄԵՐ ՄԵԿՆՈՒՄՈՎ՝ ՀՈԳԻՆ ՀՐԱԻՒՐԵԼ

Յաճախ մեր բացակայութեան ատեն է, որ Աստուծոյ Սուրբ Հոգին ինքզինք կը յայտնէ: Երբ Յիսուսի մեկնումի ժամանակը հասաւ, ան ըսաւ իր աշակերտներուն. «Ձեզի համար լաւ է, որ ես

երթամ, որովհետեւ, եթէ չերթամ Մխիթարիչը պիտի չգայ ձեզի. բայց, երբ գայ Սուրբ Հոգին, որ ճշմարտութիւնը կը յայտնէ, ինքը պիտի առաջնորդէ ձեզ ամբողջական ճշմարտութեան» (Յհ 16.7,13):

Յիսուսի բացակայութեան էր, որ առաքեալները յայտնաբերեցին անոր ներկայութեան կատարեալ իմաստը, լիովին հասկցան խօսքերը, անոր հետ կատարեալ հաղորդութեան փորձառութիւնը ապրեցան եւ այն ատեն միայն կրցան իբրեւ համայն հաւատքով, յոյսով եւ սիրով համախմբուիլ:

Երբ մեր բարեկաճներուն կը յայտնենք, թէ մենք Յիսուսի անունով կը մօտենանք իրենց, այսինքն՝ մեր միջոցաւ Յիսուս ինք ներկայ կը գտնուի իրենց կեանքին մէջ, կրնանք վստահ ըլլալ, որ մեր մեկնումը նաեւ անոնց կը բերէ Յիսուսի Սուրբ Հոգին:

Ուստի ո՛չ միայն մեր ներկայութիւնը, այլ նաեւ մեր բացակայութիւնն ալ կրնայ ուրիշներուն համար պարգեւի վերածուիլ:

ԱՆԿԵՂԾՕՐԷՆ ՄԻԱՍԻՆ ԸԼԼԱԼ

Մեծ ցաւի տէր ընկերոջ մը հետ ըլլալը դիւրին չէ, քանի որ անհանգստութիւն կը պատճառէ մեզի: Չենք գիտեր ի՞նչ խօսիլ, ընել եւ ի՞նչ պատասխանել մեր լսածներուն: Կը փորձուինք մտածել, թէ մեր ըսածները արդիւնք են աւելի մեր իսկ վախին, քան տառապողին նկատմամբ մեր

ունեցած մտահոգութեան: Երբեմն տարօրինակ բաներ կ'ըսենք. «Ո՛հ, երեկուրն է շատ լաւ ես» կամ «Մի՛ մտահոգուիր, բան մը չունիս, շուտով նախկին վիճակդ կը վերագտնես» կամ ալ՝ «Վստահ եմ, կը յաղթահարես այս մէկը»: Յաճախ, սակայն, գիտենք, թէ մեր ըսածները ճիշդ չեն, եւ մեր դիմացի ընկերն ալ շատ լաւ գիտէ զանոնք:

Մենք պէտք չունինք իրարու վրայ խնդալու: Կրնանք պարզապէս ըսել. «Ես քու ընկերդ եմ եւ շատ ուրախ եմ հետդ ըլլալուս համար»: Եւ ասիկա կրնանք զանազան ձեւերով ըսել՝ բառերով, հպումով կամ ալ սիրալիր լռութեամբ:

Երբեմն լաւ է ըսել. «Դուն պէտք չունիս խօսելու: Գոցէ աչքերդ: Ես հոս եմ, կողքիդ կանգնած, քու մասիդ կը մտածեմ, քեզի համար կ'աղօթեմ եւ կը սիրեմ քեզ»:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ



ԾԱՌԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ՍԷՐԸ

Մեր տան պարտեզին մէջ կանգնած էր հսկայ ծառ մը, լեցուն անցեալի յուշերով ուր ընտանիքները ձգած էին իրենց ետին:

Իր արմատները խոր ձգուած էին հողին մէջ, ոլորուած՝ կարծես երակներ, որ կեանք կը փնտռեն, զետեղելով հողը իր պատմութիւններուն:

Իր կեղերը՝ հաստ ու մաշուած, կրող էր ժամանակի վերքերը—մանկանց բարձրանալէ մնացած քերծուածքներ, սրտի տառեր, որ սիրահարներ դրած էին՝ սէր մը, որ այլեւս չկար, եւ թռչուններու բոյներու մնացորդները, որոնք ժամանակին իւրացուցած էին իր ճիւղերը:

Իր ամուր ճիւղերէն մէկէն կախուած էր ճօճանակ մը, նուէր մեր երեխային համար, որ իր հովանիին տակ ճօճուելով կը խնդար, իսկ իր ծիծաղը կը սաւառներ քամին հետ:

Մենք անոր **Ծնդային Ծառ** կը կոչէինք:

Երբ քամին կը սաւառներ իր ճիւղերուն մէջ, երգ կը հնչէր՝ մեղմ փսփսուք մը, կարծես մոռցուած պատմութիւններ, որ կ'երագէին լսուած ըլլալ:

Ծառը իմաստ մը ուներ, քան թէ սովորական ներկայութիւն մը:

Ան կենդանի պատմութիւն մըն էր:

Նախորդ տանտէրերը, որոնք աւելի քան քառասուն տարի ապրած էին հոն, պատմեցին մեզի, որ այս ծառը աճած էր փոքրիկ սերմէ մը, որ իրենց փոքրիկ աղջիկը՝ տնկած էր:

Մենք զայն տեսանք մէկ անգամ:

Այն կինը, որ այդ փոքրիկ աղջիկն էր: Իր ձայնը՝ մեղմ եւ ջերմ, արտացոլացուց ծառին փսփսուքները:

Մենք վստահ էինք՝ ծառը կը յիշէր զայն:

Կը յիշէր իր փոքրիկ ձեռքերուն ջերմութիւնը, երբ սերմը հողին մէջ թաղելով կեանք տուած էր անոր:

Կը յիշէր իր ուրախութիւնը, երբ ջուր կուտար անոր եւ տեսաւ, որ արմատներ կ'արձակէ:

Կը յիշէր իր հոգատարութիւնը՝ իր փափուկ տերեւները շոյելով՝ կարծես անիկա իր մէկ մասը կ'ըլլար:

Կը յիշէր նաեւ իր արցունքները՝ առաջին սիրոյ մը կորուստին արցունքներ, որոնք ինկած էին իր ծաղկող ճիւղերուն տակ:

Երբ ժամանակը եկաւ հեռանալու՝ իր կեանքին նոր բոյն մը կազմելու համար, ան գրկեց ծառը ամուր, իր այտը՝ կեղեւին դէմ, եւ փափսաց.

«Ուժեղ աճիր, փոքրի՛կ: Ես չեմ կրնար մնալ, բայց դուն պէտք է մնաս»:

Ծառը դիտեց յուզումով, երբ աղջիկը հեռացաւ, իր արմատները ցաւով զգացին անոր բացակայութիւնը:

Սակայն աղջկան գոյութիւնը մնաց իր միաձուլուած կեղեւին ու ճիւղերուն եւ թափանցեց խոր արմատներուն:

Ան բարձրացաւ ու բազմացաւ, համր վկան դառնալով ժամանակի անցքին՝ բարի գալուստ տալով նոր ձեռքերու, նոր խնդութիւններու, նոր յոյսերու:

Եղանակները կը թաւալէին՝ նման անվերջ գրքի էջերուն:

Գարունը կը զարդարէր զայն՝ մեղմ կանաչ ծածկոյթով մը՝ կարծես վերածնունդի խրախճանք մը:

Ամառը կը զարդարէր իր ճիւղերը թռչուններու երգերով ու բոյներով:

Աշունը կը բոցավառէր իր տերեւները ոսկիով ու կարմիրով:

Զմեռը կը թողար զայն մերկ ու խոնարհ՝ իր ճիւղերը լռութեամբ:

Բայց ծառը միշտ կանգուն էր՝ տալիք, ամուր եւ գեղեցիկ:

Անոր շուքին մենք փացինք հանգիստ, իր գեղեցկութիւնը մեզ կը հիացնէր, իր ճիւղերը բոյներու օրօրոց կ'ըլլային, իսկ արմատները ամուր կը պահէին անձրեւներուն դէմ:

Ժամանակը հասաւ, որ մենք ալ կը հեռանայինք՝ պարզ կեանք մը ապրելու բնակարանային շէնքի մը մէջ, բայց ծառը կանգուն փաց՝ տեսնելով նոր ընտանիք մը կ'ապրէր մեր տունը:

Բայց նոր ընտանիքը՝ երիտասարդ եւ զբաղուած, քիչ ժամանակ կը յատկացնէր պարտեզին համար:

Այն սրբավայրը, որ սէրի եւ խնդութեան սրբավայրն էր, հիմայ դարձած էր, լքուած իսկ ճօճանակը լուռ կը շարժէր:

Ծննդային Ծառը լուռ փաց՝ իր տերեւները գունատ, իր ճիւղերը ծանրացած լռութեամբ:

Ան համբերութեամբ սպասեց՝ խնդութիւն մը, կեանք մը, ամուր բռնելով այն աղջիկին յուշը, որ տարինէր առաջ տնկած էր զայն:

«Ուժեղ աճիր, փոքրիկ կ»,

իր ձայնը արձագանգեց ծառին սրտին մեջ՝ հեռու լոյս մը մութին մեջ:

Նոյնիսկ երբ մօտակայ առուակը չորցաւ՝ հողը կիսամեռ թողնելով, ծառը աւելի խոր ձգուեցաւ՝ փնտռելով անտեսանելին:

Եւ հողին կոտրած մակերեսին տակ գտաւ զայն՝ լուռ առուակ մը, որ կը հոսէր, Իր ամէն ուժով ծառը ջուրը խմեց, կաթիլ ու կաթիլ, մինչեւ որ կեանքը սկսաւ վերադառնալ:

Իր տերէնները բացուեցան՝ նախ կասկածոտ, ապա՝ յանդուգն ու կանաչ՝ ցոլալով տոկունութեամբ:

Ընտանիքը նկատեց:

Այժմ աւելի տարեց, իրենց թոռնիկներով, նրանք սկսան խնամել պարտէզին՝ վերստին կեանք տալով:

Խնդութիւնը վերադարձաւ՝ արձագանգելով ծառին հովանիին տակ, կարծես անոր ճիւղերուն փսփսուքները տուն կանչած ըլլային զայն:

Ծառը երբեք չի մոռցաւ փոքրիկ աղջիկը:

Եւ երբ քամին շարժէ իր ճիւղերը, եթէ ուշադիր լսէք, կարելի է լսել անոր ձայնը քամիին հետ բերուած՝ մեղմ ու պարզ.

«Ուժեղ աճիր, փոքրի՛կ: Ուժեղ աճիր»:

Իր փսփսուքը կը խրատէ մեզ պարզ ճշմարտութիւն մը. նոյնիսկ ամենադաժան միջոցին մեջ ուժ կայ՝ խորին հասնելու, փնտռելու անտեսանելին եւ երբեք չյանձնուելու:

Մաննիկ Ֆ Փոքաք, 2024

ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

Ծերանալը լեռ մաքլցելու կը նմանի,
քիչ մը շունչի նեղութիւն կ'ունենանք,
բայց տեսարանը շատ աւելի հրապուրիչ է:

Ծերութիւնը հիանալի գեղեցկութիւն մը ունի,
պէտք է զայն յարգենք:

Գեղեցիկ երտասարդութիւնը
բնութեան մի արկածախնդրութիւնն է,
իսկ գեղեցիկ ծերութիւնը
արուեստ ու ճարտարութիւն մըն է:

Ծերութիւնը երիտասարդութեան կորուստը չէ,
այլ առիթի ու զօրութեան հանգրուան մըն է:

Հաւագոյն երաժշտութիւնը
ամենահին ջութակով կարելի է նուագել:

Այն անձը,
որ միշտ ու միայն գեղեցկութիւն կը տեսնէ,
ամենեւին չի ծերանար:

Խնդալը անժամանակ է:
Երեւակայութիւնը տարիքի ենթակայ չէ:
Երազը յաւիտենական է:

Ոմն

Թարգմանեց Վ.Ս.

Կեանք եւ Սէր

Ե՞րբ լսած էք ֆրանսացի նշանաւոր երգչուհի **Էտիթ Փիաֆին** երգելը:

Գոցեցէ՛ք ձեր աչքերը, եւ իր ձայնը կը դառնայ Աստուածային շունչ՝ հրեշտակներու արձագանգով:

Դժուար է հաւատալ, որ այդքան հզօր պարգեւ մը կրնար դուրս գալ իր փոքրիկ մարմնէն:

Բայց այն ձայնը՝ խորութեան եւ ցաւի խառնուրդով լի, աշխարհի փոխանցեց տոկունութեան եւ ազատագրութեան հիմներգեր:

Փիաֆի անմոռանալի կատարումը՝
“Non, je ne regrette rien”

(“Ո՛չ, ես ոչ մէկ բանի կը զղջամ”),

աւելին էր, քան պարզ երգ. ան դարձաւ սրտաճըմլիկներու արտայայտութիւն մը՝ սփոփանք այն հոգիներուն, որոնք ծանրացած էին զղջումներով:

Իր կեանքի պատմութիւնը, Ճիշդ ինչպէս այս երգը, խօսեցաւ անհամար սերունդներու:

Իր թաղման օրը Փարիզի փողոցները ողողուած էին սգաւորներով, իսկ «*Je ne regrette rien*»-ի ցնցիչ կրկներգը կը հնչէր օդին մէջ՝ յատուկ յարգանքի տուրք կին մը, որ ապրած էր առանց զիջումներու, սիրած էր մեծ զօրութեամբ եւ հեռացած՝ առանց ետ նայելու:

Իր վերջին օրերուն, Փիաֆ սիրահար էր. իր սիրտը բաց էր երիտասարդ մարդու մը համար, որ կը ցուցնէր իր զգացումները: Չնայած անդադար ֆիզիքական ցաւին եւ սրտաճմլիկներով լեցուն կեանքին, ան ընտրեց ուրախութիւնը:

Ան մերժեց դառնությունը եւ գոջումը, գիտնալով, որ այդ բաները պիտի գողնային իր ունեցած քիչ ժամանակն ու սերը:

Իր իմաստութեամբ, ան հասկցած էր խոր ճշմարտութիւն մը. **գոջումը գող մըն է, որ կը գողնայ սրտի կարողութիւնը սիրելու:**

Աշխարհը ինքնին ստեղծուած է սիրով՝ Աստուածային եւ անվերջ սիրով:

Եւ սիրով է, որ մենք կ'ապրինք:

Կեանքը, իր ամբողջ խառնաշփոթութեամբ եւ բարդութեամբ, այդ սիրոյ տօնախմբութիւնն է:

Ամէն օր նոր սկիզբ մըն է, հնարաւորութիւն մը՝ ապրելու իմաստութեամբ, գնահատելու մեզ շրջապատող մարդիկը եւ յարգելու բնութեան գեղեցկութիւնը:

Կեանքը կը բացուի մեզի մէկ գլուխը միւսին ետեւէն եւ մենք՝ իր համահեղինակները կը հիւսենք մեր ուրոյն պատմութիւնները անոր հսկայական պատումին մէջ:

Նոյնիսկ մահը, որ յաճախ կը վախցնէ եւ սխալ կը հասկցուի, գոյութիւն ունի՝ յիշեցնելու համար կեանքի դիրաբեկութիւն եւ հրատապութիւնը:

Ան կը սորվեցնէ, որ գոյութեան էութիւնը կաշէլու մէջ չէ, այլ սիրելու մէջ՝ կատաղի, առանց վարանելու կամ յապաղելու:

Մեր փորձութիւնները պատիժներ չեն: Անոնք դասեր են՝ թաքնուած մարտահրաւերներու տակ, որոնք կը սորվեցնեն համբերութիւն, խոր զգայնութիւն եւ յաղթահարելու լուռ ուրախութիւն:

Կեանքի մէջ ոչինչ պատահական է. ամէն փորձառութիւն նպատակ ունի:

Նոյնիսկ շփոթութեան պահերուն, երբ ճամբան անորոշ կ'երեւի, մենք դեռ կ'աջակցինք կեանքի մեծ, դեռ ամարտուող գործուածքին:

Ամենքս ունինք մեր տեղը այս աշխարհին մէջ՝ մեր դերը կատարելու, մեր սէրը կիսելու եւ մեր պատմութիւնները պատմելու:

«Պարադոքսալ» կերպով, մահը նոյնպէս պարզեւ մըն է: Ան մեզի կը յիշեցնէ գնահատել տրուած ժամանակը, արտայայտել մեր զգացած սէրը եւ ընդունիլ փոփոխութիւնը: Վերջ ի վերջոյ, փոփոխութիւնը վերափոխման դուռն է:

«Ռիսկը», թէեւ վախազդու, կեանքի ոգեւորութեան զարկերակն է:

Ինչպէս սերմ մը, որ հողին մէջ տնկուած է, կը դառնայ ծաղիկ կամ բոյս, մենք ալ պէտք է առնենք ըիսկ՝ աճելու համար, ձգուելով դէպի լոյսը, բացուելով մեր ներուծին եւ պտուղ տալով՝ բարութեան, իմաստութեան եւ կապերու միջոցով:

Պարզ ժպիտ մը, առանց ակնկալութեան բաժնու-ած, կրնայ ալիքներ յառաջացնել՝ ստեղծելով կապեր եւ անչափելի ուրախութիւն: Սէրը այդպէս է. ան կը ծաղկի ազատութեան մէջ եւ կ'աճի, երբ կը խնամուի:

Ձղջումը, հակառակը, բեռ է, որ մենք երբեք պէտք չէ կրէինք: Անցեալի սխալներուն մէջ խրուիլը մեզ կը կուրացնէ ներկային գեղեցկութիւնը եւ ապագայի հնարաւորութիւնները տեսնելու:

Կեանքը կը կանչէ մեզ՝ ձգելու զղջումը, ընդունելու ներման շնորհքը՝ ոչ միայն ուրիշներուն, այլ նաեւ մեզի հանդէպ:

Լիարժէք ապրիլ՝ խոր սէր ընել է, ազատ ներման

միջոցաւ եւ վստահիլ ճամբորդութեան ընթացքին:

Սէրը, իր էութեամբ, հեղուկ է եւ անվերջ. ան կը գտնէ իր ճանապարհը, նոյնիսկ ցաւի եւ կորուստի ճեղքերուն մէջ:

Կ'ըսեն, «Ամէն օր մէկ խնձոր՝ բժիշկը կը պահէ հեռու», բայց թերեւս ամենօրեայ գրկախառնում մը կ'ըլլայ իրական սնունդ հոգիին համար:

Կեանքը, թէեւ անցողակի, ունի պարզ բայց խորունկ նպատակ. **սիրել եւ սիրուած ըլլալ, աճիլ եւ օգնել ուրիշներուն ալ աճիլը, տալ եւ ազատօրէն ստանալ:**

Վերջ ի վերջոյ, սէրն է, որ մեզ կը սահմանէ:

Սէրն է, որ մեզ կը պահպանէ, մեր ետին կը ձգուի եւ մեր ներկայութենէն վերջ ալ կը մնայ:

Սէրը լաւապէս ապրած կեանքի արձագանգն է եւ մեր համատեղ մարդկութեան յաւերժական թելը:

Մաննիկ Ֆ Փոթաք, 2024



ԵՂԻՇԷ ԱՌԲ. ԴՈՒՐԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ

*Թէ պաշտումի թափն ունենաս՝ Տէրն զոյգ մը թեւ քեզի
կու տայ, որպէսզի իր Ուժը անհաս սաւառնացնես*

Երկրի վըրայ:

*Թէ տեսիլներ ունենաս դուն՝ յայտնութիւն մ'ալ քեզի
կու տայ, որպէսզի ի՛ր Կամքը արթուն հանդիսացնես*

Երկրի վըրայ:

*Թէ բարձունքէ մ'խօսիս իր հետ՝ ինքը քեզի շե՛շտ մը
կու տայ, որպէսզի իր Խօսքը յաւէտ արձագանգես*

Երկրի վըրայ:

*Թէ վերացած յառիս իրեն՝ հո՛ւր լեզու մ'ալ քեզի կու
տայ, որպէսզի իր Կայծը վերէն սահեցընես*

Երկրի վըրայ:

*Եթէ մըտնես իր ամպին մէջ՝ ինքը քեզի շանթ մը կու
տայ, որպէսզի իր Վրէժը անշէջ փայլատակես*

Երկրի վըրայ:

*Իսկ իր Լոյսին թէ երթաս մօտ՝ ինքը քեզի ջահ մը կու
տայ, որպէսզի իր Փառքն անաղօտ վարդավառես*

Երկրի վըրայ:

*Եթէ նետուիս իր Գիրկն անուշ՝ ինքն քեզի երգ մը կու
տայ, որպէսզի իր Շնորհն երկնայուշ թըրթռացնես*

Երկրի վըրայ:

*Թէ համբուրուիս հետ իր Վէրքին՝ ինքը քեզի կեանք
մը կու տայ, որպէսզի իր Շունչը անգին ոգեւորես*

Երկրի վըրայ:

*Իսկ թէ թաղուիս իր Շուքին տակ՝ ինքը քեզի կեանք
մը կու տայ, ոչինչին դէմ յոյսին անփակ ճառագա՛յթը*

Երկրի վըրայ:

*Ու այդ Ուժը, այդ Կամքն ու Խօսք, այդ Կայծն ու վրէժ,
այդ Փառքը սոսկ, այդ Շնորհն ու Շունչ, այդ Յոյսն*

համայն Քեզի տրուած

ԽԱՁն է միայն:

ԿՐՕՆՔԸ ԵՒ ՀՈԳԵԻՈՐ ԿԵԱՆՔԸ

Անցեալին իմաստուն մարդու մը հարցուցած էին թէ ի՞նչ էր կրօնքին եւ հոգեւոր կեանքի տարբերութիւնը: Ինք շատ խորաթափանց պատասխան մը տուած էր:

- Կրօնքը մէկ չէ, շատ մը կրօնքներ կան:

- Հոգեւոր կեանքը մէկ է:

- Կրօնքը քնացողներուն համար է:

- Հոգեւոր կեանքը անոնց համար է որ արթուն են:

- Կրօնքը անոնց համար է որ կ'ուզեն մէկը՝ առաջնորդ մը որ իրենց ըսէ թէ ինչ պէտք է ընեն:

- Հոգեւոր կեանքը անոնց համար է որ ուշադրութեամբ մտիկ կ'ընեն իրենց ներքին ձայնին:

- Կրօնքը աւանդապաշտ եւ աղանդային կարգ մը օրէնքներ ունի:

- Հոգեւոր կեանք մեզ կը հրաւիրէ իմացականօրէն հարցաքննել ամէն ինչ:

- Կրօնքը կ'սպառնայ եւ կը վախցնէ:

- Հոգեւոր կեանքը ներքին խաղաղութիւն մը կուտայ:

- Կրօնքը մեղքի եւ յանցանքի մասին կը քարոզէ:

- Հոգեւոր կեանքը կը յորդորէ դասերնիս սորվիլ մեր գործած սխալներէն:

- Կրօնքը կը զսպէ ամէն ինչ որ ճշմարտութիւն չէ:

- Հոգեւոր կեանքը կը գերազանցէ ամէն ինչ որ ճշմարտութիւն չէ եւ մեզ ճշմարտութեան կը մօտեցնէ:

- Կրօնքը Աստուծոյ մասին կը խօսի, բայց Աստուած չէ:

- Հոգեւոր կեանքը ամէն ինչ է, հետեւաբար Աստուծոյ հետ եւ Աստուծոյ մէջ ըլլալ է:

- Կրօնքը կը հնարէ:
- Հոգեւոր կեանքը կը գտնէ:
- Կրօնքը հարցումներու չի հանդուրժէր:
- Հոգեւոր կեանքը ամէն ինչ կը հարցաքննէ:
- Կրօնքը մարդկային է: Կազմակերպութիւն մըն է մարդոց դրած օրէնքներով:
- Հոգեւոր կեանքը աստուածային է առանց մարդկային օրէնքներու:
- Կրօնքը զատողութեան պատճառ է:
- Հոգեւոր կեանքը կը միացնէ:
- Կրօնքը քեզմէ կը պահանջէ հաւատար:
- Հոգեւոր կեանքը պէտք է «տեսնես» որ հաւատաս:
- Կրօնքը կը հետեւի «սուրբ» գիրքի մը տուած գաղափարներուն:
- Հոգեւոր կեանքը բոլոր գիրքերուն մէջ «Սրութիւնը» կը փնտռէ:
- Կրօնքը վախով կ'աճի:
- Հոգեւոր կեանքը հաւատքով եւ վստահութեամբ կ'աճի:
- Կրօնքը մտային խորհուրդներ կու տայ:
- Հոգեւոր կեանքը ներքին գիտակցութիւն կու տայ:
- Կրօնքը ծեսերու կապուած է:
- Հոգեւոր կեանքը կապուած է իր ներքին ճշմարիտ էութեան:
- Կրօնքը կը սնուցանէ մարդուն «Ես»ը:
- Հոգեւոր կեանքը կը գերազանցէ «Ես»ը:

- Կրօնքը մեզ կը հրաժարեցնէ արտաքին աշխարհէն, որպէսզի Աստուծոյ հետեւինք:
- Հոգեւոր կեանքը մեզ կ'ապրեցնէ Աստուծոյ մէջ, առանց ներկայ կեանքէն հրաժարելու:
- Կրօնքը աղանդ մըն է:
- Հոգեւոր կեանքը ներքին խոկում՝ աղօթք մըն է:
- Կրօնքը մեզի փառաւոր «դրախտի» մը երազները կու տայ:
- Հոգեւոր կեանքը մեզ փառաւոր դրախտը կ'ապրեցնէ հոս աշխարհի վրայ:
- Կրօնքը անցեալի եւ ապագայի մասին է:
- Հոգեւոր կեանքը ներկային համար է:
- Կրօնքը մեր յիշողութեան մէջ գոց գաւիթներ կը ստեղծէ:
- Հոգեւոր կեանքը մեր գիտակցութիւնը ազատ կ'արձակէ:
- Կրօնքը մեզի յաւիտենական կեանքի հաւատալիքը կու տայ:
- Հոգեւոր կեանքը մեզ յաւիտենական կեանքի գիտակից կ'ընէ:
- Կրօնք կը խոստանայ մահէն ետք կեանք:
- Հոգեւոր կեանքը մահէն առաջ, այս կեանքի ընթացքին, մեր մէջ Աստուած գտնելն է: Մենք մարդկային էութիւններ չենք որ հոգեւոր փորձառութիւններ կ'ունենանք: Մենք հոգեւոր էութիւններ ենք որ մարդկային փորձառութիւններ կ'ունենանք:

ՏԷՐ ՀՈՎՈՒԵԱԾԷ ՁԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻԾ ԷԱ Ի ՄԷՁ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԺ
Ի ՁԱՐԷ ՁԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԷԱ:**

